ISSN1829-0051

ՆՈՐԱՎԱՆՔ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

21-րդ ԴԱՐ

ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՎԻԱՑԻԱՆ ԵՎ ՀՕՊ-Ը ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԸ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

4
2010

21-րդ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

4 (32)

ԵՐԵՎԱՆ

2010

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **4 (32), 2010**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գագիկ Հարությունյան (համակարգող)
Արա Մարջանյան
Բենեդեկ Ժիգմոնդ
Կարեն Վ. Կարապետյան
Մուշեղ Լալայան
Սերգեյ Գրինյաև
Սևակ Սարուխանյան
Տիգրան Սարգսյան

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Գագիկ Հարությունյան
(գլխավոր խմբագիր)
Սևակ Սարուխանյան
(գլխ. խմբագրի տեղակալ)
Աննա Ժամակոչյան
Էդուարդ Դանիելյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ
Гагик Арутюнян (координатор)
Ара Марджанян
Бенедек Жигмонд
Карен В. Карапетян
Мушег Лалаян
Севак Саруханян
Сергей Гриняев
Тигран Саркисян

РЕДАКЦИЯ
Гагик Арутюнян
(главный редактор)
Севак Саруханян
(заместитель гл. редактора)
Анна Жамакочян
Лусине Баграмян
(ответственный секретарь)
Рубен Мелконян
Тигран Арутюнян
Хонарик Карауглaнян
(ответственный редактор)
Эдуард Даниелян

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արա Պապյան
Ինքնորոշում և «տարածքային ամբողջականություն» սկզբունքները միջազգային իրավունքում 3

Արծրուն Հովհաննիսյան
Արցախյան պատերազմում ադրբեջանական ավիացիայի գործողությունների և հայկական ՀՕՊ հակազդեցության վերլուծություն 23

Տիգրան Ղանալանյան
Հայ բողոքականներ 37

Վահրամ Հովյան
Լիբանանի հայ բողոքական համայնքը …………...... 49

Միեր Աբրահամյան
Հայերի բռնի իսլամացումը 1894-96թթ. 66

Արսեն Պետրոսյան
Ժողովրդագրական և միգրացիոն հիմնախնդիրները Հայաստանում 71

Սուրեն Գոմցյան
Կենսաթոշակային բարեփոխումներ. ի՞նչ է սովորեցնում օտարերկրյա փորձը ……...…… 91

Հուշագիր հեղինակին 119

ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ԵՎ «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

(Լեռնային Ղարաբաղի օրինակը)

Արա Պապյան[*]

Մենք չենք պատրաստվում սակարկել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը:
Սերժ Սարգսյան,
ՀՀ նախագահ, 1 հունիսի 2010թ.

Ժողովուրդն է տարածքի բախտը որոշողը և ոչ թե տարածքը՝ ժողովրդի:
Հարդի Դիլարդ (Hardy Dillard),
Միջազգային արդարադատության դատարանի դատավոր, 16 հոկտեմբերի 1975թ.

«Ինքնորոշում» և «տարածքային ամբողջականություն» հասկացությունները հաճախ են գործածվում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կապակցությամբ: Ցավոք, այս իրավական եզրերը, հիմնականում քաղաքական դրդապատճառներով, հաճախ սխալ են գործածվում: Հիշյալ հասկացությունների սխալ գործածության օրինակներից է դեսպանացու Մեթյու Բրայզայի հետևյալ պնդումը. «Կա պետությունների տարածքային ամբողջականության իրավական սկզբունք, և կա ժողովուրդների ինքնորոշման քաղաքական սկզբունք» *(There's a legal principle of territorial integrity of states, there's a political principle of self-determination of peoples):* Իրականության մեջ ճիշտ հակառակն է: Կա ինքնորոշման իրավական սկզբունք, և չկա «տարածքային ամբողջականության» սկզբունք: Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ)

[*] «Մոդուս Վիվենդի» կենտրոնի ղեկավար:

կանոնակարգի երկրորդ հոդվածի 4-րդ կետը հռչակում է միմիայն հետևյալը. «[ՄԱԿ-ի] բոլոր անդամներն իրենց միջազգային հարաբերություններում պետք է ձեռնպահ մնան որևէ երկրի տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուղղված ուժի կիրառումից կամ սպառնալիքից, կամ այլ քայլերից, որոնք անհամատեղելի են Միավորված ազգերի նպատակների հետ» *(All Members shall refrain in their international relations from the threat or use of force against the territorial integrity or political independence of any state, or in any other manner inconsistent with the Purposes of the United Nations):* Այս հիմնադրույթը ոչ մի ընդհանուր բան չունի «տարածքային ամբողջականության» բացարձակության, այսինքն՝ պետության տարածքի անձեռնմխելիության հետ: Ըստ ԱՄՆ արտաքին հարաբերությունների օրենքի հեղինակավոր մեկնաբանության, այն պարզապես դրույթ է ներխուժման դեմ՝ «ուժի գործադրման արգելք» *(prohibition of use of force)* [1, p. 389], և սոսկ կոչ է անում ձեռնպահ մնալ «մի պետության կողմից ուժի գործադրման միջոցով մեկ այլ պետություն զրավելուց կամ նրա կառավարությունը տապալելուց» *(the use of force by one state to conquer another state or overthrow its government)* [1, p. 383]:

Արդի ժամանակաշրջանի միջազգային իրավունքում *«ինքնորոշման»* և, այսպես կոչված, *«տարածքային ամբողջականության»* սկզբունքների կարգավիճակը, ընդգրկումն ու բովանդակությունը լիարժեք հասկանալու համար հարկ է առավել հանգամանալից անդրադառնալ այդ հարցերին:

Ինքնորոշում

Ինքնորոշման պատմական հենքը

Ինքնորոշումը հնուց եկող քաղաքական իրավունք է, որը մշտապես արժևորվել է բոլորի կողմից: *«Ինքնորոշում» (self-determination, самоопределение)* բառը բխում է գերմաներեն *"selbstbestimmungsrecht"* բառից, որը հաճախ էր գործածվում գերմանացի արմատական փիլիսոփաների կողմից 19-րդ դարի կեսերին: Ինքնորոշման հայեցակարգի քաղաքական ծագումը գալիս է Ամերիկայի Միացյալ Նահանգների անկախության հռչակագրից (4 հուլիսի, 1776թ.): Զուր չէ, որ Ամերիկյան հեղափոխությունը համարվում է *«ինքնորոշման բացահիկ օրինակ» [2, p. 8]:* Ինքնորոշման սկզբունքը հետագա քաղաքական զարգացման ենթարկվեց Ֆրանսիական հեղափոխության առաջնորդների կողմից: 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին ինքնորոշման սկզբունքն ազգային շարժումների կողմից մեկնաբանվում էր որպես յուրաքանչյուր ազգի համար սեփական անկախ պետություն ստեղծելու իրավունք, և միայն ազգային առումով միատարր պետություններն էին համարվում օրինական [3, p, 364]: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ԱՄՆ նախագահ

Վիլսոնը հանդես եկավ ինքնորոշման ջատագովությամբ, որն էլ իր հստակ սահմանումը գտավ նրա Տասնչորս կետեր *(Fourteen Points)* (8 հունվարի 1918թ.) ծրագրային փաստաթղթում և, ըստ այդմ, քննության առարկա դարձավ Ազգերի լիգայի սկզբնական օրերին: Ազգերի լիգայի կողմից ստեղծված մանդատային համակարգն, ըստ էության, փոխզիջումային միջանկյալ իրավիճակ էր ուղղակի գաղութատիրության և ինքնորոշման իրավունքի միջև:

Թեև ինքնորոշումը որպես քաղաքական իրավունք և սկզբունք ունի երկարատև պատմություն, այնուամենայնիվ, ինքնորոշումը որպես միջազգային իրավունքի սկզբունք համեմատաբար նոր ծագում ունի: Քանզի ներկայումս միջազգային իրավունքի դասագրումը (կոդիֆիկացիան) հիմնականում իրականացվում է դիվանագիտական համաժողովների, երբեմն ՄԱԿ վեհաժողովի կամ նմանատիպ համաժողովների միջոցով՝ նախապես Միջազգային իրավունքի հանձնաժողովի կամ այլ փորձագիտական մարմնի կողմից ներկայացված նախագծի հիման վրա [4, p. 633], ապա առաջին հերթին պետք է քննության առնել խնդրո առարկա հասկացությունների զարգացման ընթացքը միջազգային փաստաթղթերի միջոցով: Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ բոլոր այն հիմնադրույթները, որոնք հոդվածների ձևով ներառված են միջազգայնագրերում *(conventions)* և արտացոլում են գոյություն ունեցող միջազգային սովորութական *(customary)* իրավունքը, ապա դրանք պարտադիր են բոլոր պետությունների համար՝ անկախ դրանց տվյալ միջազգայնագրերին միացած կամ չմիացած լինելուց [4]:

Ինքնորոշման զարգացումը ՄԱԿ հովանու ներքո

1. Ընդգրկումը ՄԱԿ կանոնակարգում. Ինքնորոշման իրավունքը բազմիցս քննության առարկա է դարձել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Այն վկայակոչվել է Ատլանտյան դաշնաթղթում *(Atlantic Charter,* 14 օգոստոսի, 1941թ.), ապա վերարծարծվել Վաշինգտոնի 1942թ. հռչակագրում *(Washington Declaration)* և 1943թ. Մոսկվայի հռչակագրում *(Moscow Declaration),* ինչպես նաև ժամանակի այլ կարևոր փաստաթղթերում: Շնորհիվ հենց այս հռչակագրերի, արդեն ՄԱԿ ստեղծման օրերին ինքնորոշում հասկացությունը դիտարկվում էր որպես միջազգային իրավունքի սկզբունք: Ի վերջո, «իրավահավասարության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը» *(the principle of equal rights and self-determination of peoples)* ներառվեց ՄԱԿ կանոնակարգում: Կանոնակարգը [հոդված 1(2)] հստակորեն սահմանեց ինքնորոշման սկզբունքը. «Միավորված ազգերի նպատակներն են. ժողովուրդների միջև զարգացնել բարեկամական հարաբերություններ ազգերի միջև՝ հիմնվելով ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքի վրա» *(The purposes of the United Nations are: To develop*

friendly relations among nations based on respect for the principle of equal rights and self-determinations of peoples), ինչպես նաև ինքնորոշումը համարվեց «համընդհանուր խաղաղությունն ամրապնդելու» հնարավոր միջոցներից մեկը [3, p. 365]: ՄԱԿ կանոնակարգի IX գլխի (Միջազգային տնտեսական և հասարակական համագործակցության, *International Economic and Social Cooperation*) 55-րդ հոդվածում թվարկված են այն նպատակները, որոնք պետք է խրախուսվեն նշյալ կազմակերպության կողմից. «…իրավահավասարության և ժողովուրդների ինքնորոշման հարգանքի վրա կայունության ու բարօրության պայմանների ստեղծումն անհրաժեշտ է ազգերի միջև խաղաղ և բարեկամական հարաբերությունների համար…» *(…the creation of conditions of stability and well-being, which are necessary for peaceful and friendly relations among nations based on respect for the principle of equal rights and self-determination of peoples…):* Ըստ նույն կանոնակարգի 56-րդ հոդվածի. «բոլոր անդամները պարտավորվում են կազմակերպության [ՄԱԿ-ի] հետ համատեղ և անջատ գործողություններ իրականացնել՝ նպատակ ունենալով հասնել 55-րդ հոդվածում առաջադրված նպատակներին» *(…all Members pledge themselves to take joint and separate action in cooperation with the Organization for the achievement of the purposes set forth in Article 55):*

Ինչպես բխում է ՄԱԿ կանոնակարգի 55-րդ հոդվածից, ինքնորոշման սկզբունքը միջազգային խաղաղ և բարեկամական հարաբերությունների հիմքերից է: Այլ բառերով՝ առանց նշյալ սկզբունքի պահպանման հնարավոր չեն այդպիսի հարաբերություններ: Նույն հոդվածը նշում է, որ ՄԱԿ պարտականությունն է խրախուսել հարգանքը մարդու հիմնարար ազատությունների նկատմամբ (պար. c), ըստ այդմ՝ ազգերի ինքնորոշման իրավունքի նկատմամբ: Եվ քանի որ ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների հաստատումը և մարդու իրավունքների հարգանքի խրախուսումն ընդգրկված են Միավորված Ազգերի Կազմակերպության կարևորագույն խնդիրների շարքում, ուստի, ակներևաբար սույն կազմակերպությունը կոչված է առաջ մղելու ժողովուրդների ինքնորոշման հարցը [5, p. 221]:

ՄԱԿ կանոնակարգը գերակա է բոլոր այլ միջազգային փաստաթղթերի նկատմամբ: Այս պայմանն ամրագրված է կանոնակարգի 103-րդ հոդվածում, հետևաբար ընդունված է բոլոր անդամների կողմից:

Ակնհայտ է, որ ՄԱԿ-ն ինքնորոշումը (ինքնորոշումը, այսինքն՝ այդ իրավունքի կենսագործումը և ոչ թե սոսկ իրավունքը) ոչ միայն իր հիմնարար սկզբունքներից է համարում, այլև՝ հիմք բարեկամական հարաբերությունների և համընդհանուր խաղաղության համար: Հետևապես, ինքնորոշման մերժումը խոչընդոտում է բարեկամությանը և համընդհանուր խաղաղությանը: Ավելին, ՄԱԿ կանոնակարգի 24-րդ հոդվածի 2-րդ կետը հռչակում է. *«Սույն պարտա-*

վորությունները իրականացնելիս [միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանումը] *Անվտանգության խորհուրդը պետք է գործի Միավորված ազգերի նպատակներին և սկզբունքներին համահունչ» (In discharging these duties [the maintenance of international peace and security] the Security Council shall act in accordance with the Purposes and Principles of the United Nations):* Հետևաբար, քանի որ ինքնորոշումը ՄԱԿ սկզբունքներից մեկն է, ուստի միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման գործում Անվտանգության խորհուրդը պետք է առաջնորդվի ժողովուրդների ինքնորոշման իրավունքով:

2. Զարգացումը ՄԱԿ պրակտիկայով. Ինքնորոշման հայեցակարգը հետագա զարգացում ապրեց Միավորված ազգերի պրակտիկայում: Իր բանաձևերի միջոցով ՄԱԿ-ը մեկնաբանեց և զարգացրեց ինքնորոշման սկզբունքը: 1952թ. դեկտեմբերի 16-ի 637A(VII) բանաձևում ՄԱԿ վեհաժողովը հայտարարեց. «ժողովուրդների և ազգերի ինքնորոշման իրավունքը նախադրյալ է մարդու բոլոր հիմնարար ազատությունները վայելելու համար» *(the right of peoples and nations to self-determination is a prerequisite to the full enjoyment of all fundamental human rights):* Վեհաժողովը նաև հորդորեց, որ «Միավորված ազգերի անդամ երկրները պետք է աջակցեն բոլոր ժողովուրդների և ազգերի ինքնորոշման սկզբունքին» *(the States Members of the United Nations shall uphold the principle of self-determination of all peoples and nations):*

ՄԱԿ վեհաժողովը 1960թ. ընդունեց բանաձև [1514(XV)]՝ վերնագրված. Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագիր *(Declaration on the Granting of Independence to Colonial Countries and Peoples),* որի 2-րդ պարբերությունը հռչակում է. *«Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք; ըստ այդմ, նրանք են որոշում իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն հետամուտ են լինում իրենց տնտեսական, հասարակական և մշակութային զարգացմանը» (All peoples have the right to self-determination; by virtue of that right they freely determine their political status and freely pursue their economic, social and cultural development):* Սույն հռչակագիրն ինքնորոշման սկզբունքը համարում է ՄԱԿ կանոնակարգից ածանցվող հանձնառությունների մաս: Ընդ որում, նշյալ հռչակագիրը պարզ հորդոր չէ, այլ կանոնակարգի հեղինակավոր մեկնաբանություն [6, pp. 95-96]:

Հետագայում ինքնորոշման սկզբունքն իր արտացոլումը գտավ մի շարք միջազգային փաստաթղթերում: 1966թ. մարդու իրավունքների մասին երկու միջազգայնագիր (կոնվենցիա) մտան ուժի մեջ՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը *(International Covenant on Civil and Political Rights)* և Տնտեսական, հասարակական և մշակութային

իրավունքների մասին միջազգային դաշնագիրը *(International Covenant on Economic, Social and Cultural Rights):* Այս դաշնագրերն ունեն մի ընդհանուր հոդված՝ #1, որն ամրագրում է. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքով էլ նրանք ազատորեն որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը և հետամուտ են իրենց տնտեսական, հասարակական և մշակութային զարգացմանը»:

Հետագա տարիներին ևս, *ըստ Միավորված ազգերի կանոնակարգի, պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը (Declaration of Principles of International Law Concerning Friendly Relations and Co-operation among the States in accordance with the Charter of the United Nations)* [ՄԱԿ-ի վեհաժողով, բանաձև 2625 (XXV), 1970թ.] հաստատեց այն սկզբունքը, ըստ որի՝ ինքնորոշումը բոլոր ժողովուրդներին վերաբերող իրավունք է, և նրա կենսագործումը պահանջվում է ՄԱԿ կանոնակարգով. *«Ըստ իրավահավասարության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի, որը ներառված է Միավորված ազգերի կանոնակարգում, բոլոր ժողովուրդներն էլ իրավունք ունեն ազատորեն, առանց արտաքին միջամտության որոշել իրենց քաղաքական կարգավիճակը, հետամուտ լինել իրենց տնտեսական, հասարակական և մշակութային զարգացմանը, և ամեն պետություն, համաձայն կանոնակարգի դրույթների, պարտավոր է հարգել սույն իրավունքը»:*

Ինչպես իրավացիորեն նկատել է Միջազգային հարաբերություններում ազգերի միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող սկզբունքների հատուկ հանձնաժողովի *(Special Committee on Principles of International Relations concerning Friendly Relations and Cooperation among the Nations)* զեկուցողը՝ Մ.Զահովիչը *(M.Zahovic)*. «Քննարկումներին մասնակցած գրեթե բոլոր ներկայացուցիչները շեշտեցին, որ [ինքնորոշման] սկզբունքն այլևս չի համարվում միայն բարոյական կամ քաղաքական հիմնադրույթ; այն ըստ ամենայնի միջազգային իրավունքի սկզբունք է: Սույն սկզբունքի լիակատար ընդունումը նախադրյալ է միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման, պետությունների միջև բարեկամական հարաբերությունների, համագործակցության զարգացման և ամբողջ աշխարհում տնտեսական, հասարակական ու մշակութային առաջընթացի խրախուսման համար» [2, p. 192]:

Ինքնորոշման սկզբունքը և մարդու իրավունքները

Ինքնորոշման սկզբունքը, միջազգային հարաբերություններում փիլիսոփայական հայեցակարգից վերափոխվելով քաղաքական հայեցակարգի, հիմա վերաճել է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքի: Վերջին ժամանակ-

ներս զարգանալով՝ այն դարձել է մարդու իրավունքների հարց, որը վերաբերում է որոշակի խմբի, այլ ոչ թե մի անհատի [2, p. 271] և, ինչպես նշել էինք, իրավացիորեն ներառված է մարդու իրավունքների զույգ դաշնագրերում:

1993թ. հունիսի 25-ին 171 երկրների ներկայացուցիչներ համախոհությամբ *(by consensus)* ընդունեցին *Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովի Վիեննայի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը (Vienna Declaration and Programme of Action of the World Conference on Human Rights):* Վիեննայում համաձայնեցված եզրափակիչ փաստաթուղթը, որն արժանացել է ՄԱԿ վեհաժողովի 48-րդ նստաշրջանի հավանությանը (բանաձև 48/121, 1993), վերահաստատեց այն սկզբունքները, որոնք զարգացել են վերջին 45 տարվա ընթացքում և առավել ամրապնդել են մարդու իրավունքների հիմքերը: Նշյալ փաստաթուղթը ճանաչում է ժողովրդավարության, զարգացման և մարդու իրավունքների, ներառյալ ինքնորոշման իրավունքի, փոխկապակցվածությունը: Եզրափակիչ փաստաթուղթը շեշտում է, որ համաժողովը ինքնորոշման իրավունքի մերժումը համարում է մարդու իրավունքների ոտնահարում և ընդգծում է տվյալ իրավունքի արդյունավետ կենսագործման կարևորությունը [7, p. 192] [պար. 2]. *«Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովը ինքնորոշման իրավունքի մերժումը համարում է մարդու իրավունքների ոտնահարում և ընդգծում է սույն իրավունքի լիարժեք կենսագործման կարևորությունը» [8]:* Հայաստանը, Ադրբեջանը, Թուրքիան, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները՝ Ռուսաստանի Դաշնությունը, Միացյալ Նահանգները և Ֆրանսիան, սույն փաստաթղթին մասնակից երկրներ են:

Մարդու իրավունքների և համաշխարհային խաղաղության հարցերով մտահոգ կազմակերպությունները լիակատար ճանաչում են տվել այն փաստին, որ ինքնորոշման նկատմամբ հարգանքը համաշխարհային խաղաղության նախապայման է: Մարդու հիմնարար իրավունքներն իմաստ ունեն այն դեպքում, երբ ժողովուրդը վայելում է ինքնորոշման պտուղները [2, p. 188]:

Ինքնորոշման սկզբունքի բուն իմաստն այն է, որ բոլոր ժողովուրդները, անկախ իրենց ցեղախմբից, կրոնից կամ սեռից, ներքին և արտաքին գերիշխանությունից, օրենքի շրջանակում ազատորեն վայելեն ժողովրդավարության իրավունքները: Այն ձգտում է ապահովել հնարավորություններ ժողովուրդների քաղաքական, հասարակական և մշակութային զարգացման համար: Ինքնորոշման սկզբունքի հիմնական նպատակն է երաշխավորել, որ բոլոր ժողովուրդները սեփական հայեցողության համաձայն ունենան կառավարություն, որը կհամապատասխանի նրանց քաղաքական, տնտեսական և մշակութային պահանջներին [2, p. 273]: Այսպիսով, ինքնորոշման իրավունքի մերժումը մարդու իրավունքների ոտնահարում է և, ըստ այդմ, միջազգային իրավունքի խախտում:

Ինքնորոշման սկզբունքի զարգացումն այլ կազմակերպությունների միջոցով

Միջազգային արդարադատության դատարանին *(International Court of Justice)* առընթեր Իրավագետների միջազգային հանձնաժողովը *(International Commission of Jurists)* բազմաթիվ համաժողովներ է հրավիրել օրենքի գերիշխանության հարցերով և փորձել է տալ օրենքի իշխանության հստակ ու ընդգրկուն սահմանումը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում դրանց լավագույն կենսագործման միջոցները: Նրանց առաջին քննաժողովը գումարվել է Աթենքում 1955թ., որի մասնակիցներն ընդունեցին Աթենքի ակտը *(Act of Athens)*, որն ամրագրում է. «(9) Ինքնորոշման իրավունքի ճանաչումը մեր դարաշրջանի մեծագույն նվաճումներից է և միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից, դրա չգործադրումը միանշանակորեն դատապարտվում է: (10) Արդարությունը պահանջում է, որ ժողովուրդը, էթնիկ կամ քաղաքական փոքրամասնությունը չզրկվի իր բնական իրավունքից, հատկապես մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներից, կամ իրավահավասար վերաբերմունքից՝ անկախ ցեղախմբից, գույնից, դասակարգից, քաղաքական համոզմունքից, կաստայից կամ դավանանքից» [2, p. 273]:

Օրենքի միջոցով համաշխարհային խաղաղություն [հաստատելու] Իրավաբանների համաշխարհային առաջին համաժողովը *(The First World Conference of Lawyers on World Peace through Law)* իր Օրենքի համաշխարհային տիրապետության գլխավոր սկզբունքների հռչակագրում *(Declaration of General Principles for a World Rule of Law* (Աթենք, 6 հուլիսի 1963թ.) հռչակեց հետևյալը. «Որպեսզի օրենքի գերիշխանության ներքո հաստատվի իրավական արդյունավետ համակարգ, որը կբացառի ուժի գործադրումը, մենք հայտարարում ենք, որ … (6) ինչպես հռչակված է ՄԱԿ կանոնակարգում, աշխարհի ժողովուրդների ինքնորոշման իրավունքն օրենքի գերիշխանության հիմնարար սկզբունք է» [9]:

Ինքնորոշման սկզբունքի զարգացումն Արդարադատության միջազգային դատարանի միջոցով

Ինքնորոշման իրավունքը վերահաստատվել է միջազգային դատարանի վճիռներով: Օրինակ, Հարավարևմտյան Աֆրիկային *(South-West Africa Cases)* վերաբերող դատական գործերում (26 դեկտեմբերի 1961թ. և 18 հուլիսի 1966թ.) դատավոր Ներվոն *(Nervo)* իրավահավասարության և ազատության հայեցակարգի վերաբերյալ իր համոզումն արտահայտել է հետևյալ կերպ. «քանի դեռ ամբողջ աշխարհի ժողովուրդները չեն հասել ինքնորոշման և անկախության

իրենց նպատակին, մենք պիտի ոգեշնչենք ժողովուրդների երազանքն ու վարքն այդ ուղղությամբ » [10, p. 465]:

Միջազգային դատարանն իր Արևմտյան Սահարային վերաբերող *(Western Sahara Case)* (16 հոկտեմբերի 1975թ.) խորհրդատվական կարծիքում վերահաստատել է «ինքնորոշման իրավունքի վավերականությունը» միջազգային իրավունքի մեջ [11]:

Ինչպես նաև Միջազգային դատարանի Արևելյան Թիմորին վերաբերող (Պորտուգալիան ընդդեմ Ավստրալիայի) 1995թ. հունիսի 30-ի որոշումը [պարբ. 29] վերահաստատել է ՄԱԿ կանոնակարգով և նույն դատարանի իրավական փաստաթղթերով ճանաչված ժողովուրդների ինքնորոշման իրավունքը՝ որպես «ժամանակակից միջազգային իրավունքի էական սկզբունքներից մեկը» [3, p. 370]:

Ինքնորոշման կարգավիճակը, ընդգրկումը և բովանդակությունը ժամանակակից միջազգային իրավունքի մեջ

Ըստ Միավորված ազգերի փաստաթղթերի, ինչպես նաև իրավագետ հեղինակների մեծ մասի կարծիքի, ինքնորոշումն արդի միջազգային իրավունքի մաս է: 1945թ. ի վեր ՄԱԿ-ում տեղի ունեցած զարգացումների շնորհիվ, իրավագետները ներկայումս մեծ մասամբ ընդունում են, որ ինքնորոշումն իրավական սկզբունք է [12]: Սույն սկզբունքը հաստատվել, զարգացել և ավելի շոշափելի կերպավորում է ստացել պետությունների պրակտիկայի ամբողջության մեջ և ի շարս *«միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների»* տեղ է գտել *Բարեկամական հարաբերությունների բանաձևերում (Friendly Relations Resolutions) [3, p. 366]*: Ինքնորոշման սկզբունքի ընդհանրականությունը և քաղաքական բովանդակությունը չի զրկում նրան իր իրավական էությունից [12, p. 600]: Ավելին, որևէ կասկած չունենալով, որ ինքնորոշման սկզբունքն իրավական սկզբունք է, ներկայումս շատ իրավագետներ ինքնորոշումը համարում են *jus cogens,* այսինքն՝ միջազգային իրավունքի անբեկանելի նորմ[1] [7, p. 191]: Հետևաբար, որևէ շեղում ինքնորոշման իրավունքից ընդունելի չէ ոչ պայմանագրերի և ոչ էլ միջազգային այլ գործարքների միջոցով [13, p. 134-135]:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ինքնորոշման իրավունքն իրավունք է ընտրելու քաղաքական կազմակերպվածությունը և փոխհարաբերությունն այլ խմբերի հետ: Ընտրությունը կարող է լինել ինչպես պետական անկախության, դաշ-

[1] Տե՛ս նաև Supporters of the view that the right of self-determination is part of *jus cogens* include: *I. Brownlie,* Principles of Public International Law (4th ed., 1991), p. 513. *A. Cassese,* International Law in a Divided World (1986), p. 136; *J. Craword,* "The Rights of Peoples: Some Conclusions", in Crawford, (ed.), The Rights of Peoples (1988), p. 159 at p. 166; *H.Gros Espiell,* The Right to Self-Determination, Implementation of United Nations Resolutions (1978), para. 85; and the UK's and Argentina's statements in the context of the Falklands/Malvinas dispute (1982) 53 British yearbook of International Law, pp. 366-379.

նային պետության մեջ այլ խմբերի հետ գոյակցության կամ ինքնավարության, այնպես էլ միակազմ պետության մեջ լիակատար տարրալուծման տեսքով [12, p. 599]: Երբ որևէ իրավիճակում ի հայտ է գալիս ինքնորոշման խնդիր, ապա ներպետական օրենսդրության վկայակոչումով հնարավոր չէ այն մերժել: Միջազգային ավանդութային իրավունքը, պետությունների դիրքորոշումներից անկախ, պարտադիր է բոլոր պետությունների համար: Անկախ սրանից, պետությունները ՄԱԿ կանոնակարգին մաս կազմելով, ինքնորոշման սկզբունքը պարտադիր են դարձրել իրենց համար [2, p. 196]: Որոշ պետությունների պնդումները, որ ինքնորոշման սկզբունքի կենսագործումը խախտում է իրենց իրավունքները կամ հակոտնյա է իրենց *«սահմանադրական գործընթացներին»*, չի կարող պատրվակ հանդիսանալ ուրիշ ժողովուրդներին ինքնորոշման իրավունքից զրկելու համար [5, p. 209]: Ներկայումս ինքնորոշումը որպես սկզբունք համընդհանուր ընդգրկման է [3, p. 369]: Այն նաև անվերապահ է, հետևաբար ՄԱԿ անդամ երկրներն ինքնորոշման կենսագործումը չպիտի կապեն այլ հարցերի հետ [5, p. 210]:

Այս բոլոր նկատառումներն ի մի են բերված Լիխտենշտեյնի կառավարության ղեկավար և արտաքին գործերի նախարար *Հանս Բռունհարտի (Hans Brunhart)* ՄԱԿ վեհաժողովի 47-րդ նստաշրջանի ժամանակ (23 սեպտեմբերի 1992թ.) ունեցած ելույթում *(UNDocA/47/PV.9)* [պարբ. 6]. *«Ինքնորոշման իրավունքը որպես սկզբունք ներկայումս համընդհանուր ճանաչում ունի: Ես ուզում եմ հիշեցնել, որ ինքնորոշումը ոչ միայն ՄԱԿ կանոնակարգի հիմնադրույթներից է, այլև այս վեհաժողովում ներկայացված պետությունների մեծ մասը, ի հետևանք 1966թ. մարդու իրավունքների զույգ միջազգայնագրերի առաջին հոդվածի, արդեն իսկ գտնվում են հստակ իրավական հանձնառությունների ներքո: Այդ հոդվածով երկրները պաշտոնապես և որպես իրավական պարտավորություն ընդունել են, որ. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք»: Հենց այդ իրավունքի շնորհիվ նրանք իրավասու են ազատորեն որոշել իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն հետամուտ լինել իրենց տնտեսական, հասարակական և մշակութային զարգացմանը» [14, p. 405]:*

Որոշ ակնառու բացառություններով հանդերձ, ինքնորոշման սկզբունքի գործնական և խաղաղ գործադրումը հաճախ է անտեսվում: Այլոց վրա տիրապետություն հաստատած ուժերը, չնայած ՄԱԿ կանոնակարգով ստանձնած պարտավորություններին, շարունակաբար խոչընդոտում են ճնշված ժողովուրդներին՝ իրագործելու իրենց ինքնորոշման իրավունքը: Հետևապես, ինչպե՞ս է հնարավոր որոշել, թե ժողովուրդն ինչ ձևով է ուզում տնօրինել իր ճակատագիրը:

Զանազան ուղիներ կան որոշելու ինքնորոշման ձգտող ժողովրդի կամքը: Ժողովրդի կամքը կարող է հստակեցվել հանրահարցման *(plebiscite)* միջոցով: Հանրահարցումը կամ գրեթե նույն բանը հանդիսացող հանրաքվեն *(referendum),* ըստ էության, սեփական տարածքի քաղաքական և իրավական կարգավիճակը որոշելու բնակչության մեծամասնության իրավունքի ճանաչումն է [5, p. 214]: Ժողովրդի կամքը կարող է արտահայտվել խորհրդարանի կամ ինքնորոշվող ժողովրդի կողմից ընտրված ցանկացած այլ ներկայացուցչական կառույցի միջոցով [5, p. 213]:

Ընդհանրապես, խնդրո առարկայի վերաբերյալ տարածված են հանրահարցումներ առանց ուղղակի հանրային քվեարկության: Այս դեպքերում ինքնորոշվող տարածքի բնակչությունն ընտրում է ներկայացուցչական մարմին, որն էլ իր հերթին արտահայտում է ժողովրդի կամքը: Եթե այդ մարմնի ընտրություններն ու այդ մարմնի մեջ քվեարկությունը կայացել են ժողովրդավարական եղանակով, ապա ժողովրդի կամքի արտահայտման այս ձևը միանգամայն օրինական է [5, p. 215-216]: Սա հենց այն վիճակն է, որ մենք վերջերս (23 մայիսի 2010թ.) ունեցել ենք Լեռնային Ղարաբաղում խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

Ժողովրդի կամքը կարող է նաև արտահայտվել զանգվածային բողոքի միջոցով՝ քաղաքացիական անհնազանդություն, ցույցեր, հավաքներ, լրագրային հոդվածներ և այլն: Ի վերջո, այն կարող է նաև իր դրսևորումը ստանալ զինված պայքարի և ազգային-ազատագրական պատերազմի ձևով: Վերջինս դրսևորման ծայրահեղ միջոց է, և մարդիկ դրան միայն հարկադրաբար են դիմում: Ըստ վերջին տարիներին միջազգային իրավունքի մեջ կայացած ավանդույթի, ինքնորոշման սկզբունքը ներառում է նաև անկախության իրավունք: Նույն հիմքով օրինականացվել է երրորդ կողմի միջամտությունն ազգային-ազատագրական պատերազմին՝ հօգուտ անջատողական շարժման [3, p. 368]: Ինքնորոշման հասնելու համար ուժի գործադրումը և ազգային-ազատագրական շարժումներին օժանդակելը վերջին տարիներին սկսել են հարաճուն կերպով համարվել օրինական: Դա հիմնավորվում է այն հանգամանքով, որ այդ ձևով խրախուսվում է ՄԱԿ կանոնակարգի սկզբունքների իրագործումը [7, p. 612]:

Միջազգային իրավունքի մեջ չկա անջատողականությունն արգելող որևէ օրենք, իսկ ՄԱԿ կանոնակարգը հստակորեն հանդես է գալիս ինքնորոշման պաշտպանությամբ: Ինքնորոշումը կարող է ընթանալ ոչ ժողովրդական կառավարությունը տապալել ձգտող ապստամբության, հակագաղութային ապստամբության, անջատողական շարժման և անկախ երկիր ստեղծելու ճանապարհով [15, p. 39]: Պետք է հատկապես շեշտել, որ ցանկացած ճանապարհի ընտրության դեպքում ոչ մի *«կենտրոնական իշխանություն»* կամ ուրիշ ժո-

ղովուրդ չի կարող լուծել ինքնորոշվող ժողովրդի խնդիրը, քանի որ դա դեմ կլինի բուն ինքնորոշման սկզբունքին [5, p. 214]:

Ինքնորոշման ընդգրկման հարցը քննելիս անհրաժեշտ է պատասխանել մի կարևոր հարցի. արդյո՞ք ժողովուրդները և ազգերը, որոնք արդեն իրագործել են իրենց ինքնորոշման իրավունքը, շարունակում են պահպանել ինքնորոշման իրավունքը: Պատասխանն է՝ այո, քանի որ ՄԱԿ կանոնակարգը ճանաչում է բոլոր ժողովուրդների ու ազգերի ինքնորոշման իրավունքը, առանց խտրականություն դնելու պետականություն ունեցող կամ չունեցողների միջև: Հարցը նույնպիսի պատասխան է ստացել նաև ՄԱԿ վեհաժողովի բանաձևում, որը վերաբերում է Մարդու իրավունքների դաշնաթղթերում մարդու իրավունքներին վերաբերող դրույթի ընդգրկման հարցին [16]: Անվիճելի է նաև, որ դրսի միջամտությամբ և առանց բնակչության հստակ համաձայնության պետությունների միջև բաժանված ազգերը շարունակում են պահպանել ինքնորոշման ժառանգված իրավունքը՝ ներառյալ վերամիավորման իրավունքը [3, p. 368]:

Ավելին, ինքնորոշման իրավունքի խախտումը որպես պատճառ է օգտագործվել Եվրոպական համայնքի կողմից՝ մերժելու համար անկախության ձգտող միավորին որպես պետություն ճանաչելը: *Եվրոպական համայնքի Արևելյան Եվրոպայի և Սովետական Միության տարածքի նոր պետությունների ճանաչման մասին ուղենիշների հռչակագրում (EC Declaration on the Guidelines on the Recognition of New States in Eastern Europe and in the Soviet Union)* (16 դեկտեմբերի 1991թ.) հետևյալ պահանջը կա. ճանաչվելիք պետությունները մինչև ճանաչվելը և ճանաչվելու համար ժողովրդավարության և էթնիկ ու ազգային խմբերի ու փոքրամասնությունների իրավունքների հարգման սահմանադրական երաշխիքներ պիտի տրամադրեն: Ավելին, միջազգային իրավունքի նոր հիմնադրույթը հռչակում է, որ այն պետությունը, որը հիմնվել է ինքնորոշման իրավունքի ոտնահարումով, առ ոչինչ է միջազգային իրավունքի մեջ [3, p. 369]:

Ժողովուրդների ինքնորոշման առնչությամբ կա մի հարց ևս. արդյո՞ք ինքնորոշման իրավունքը կարող է վերաբերել ոչ գաղութային միավորներին: Անշուշտ, ինքնորոշման իրավունքի հիմնական նպատակը գաղութատիրությանը հնարավորինս արագ վերջ տալն էր: Այսուհանդերձ, սկսած ՄԱԿ կանոնակարգի մեջ այդ սկզբունքի դասագրումից *(codification),* չկա ինքնորոշմանը վերաբերող որևէ միջազգային փաստաթուղթ, որն ինքնորոշման իրավունքը սահմանափակի միայն գաղութային երկրներով: Օրինակ, արդեն բազմիցս հիշատակված Մարդու իրավունքներին վերաբերող 1966թ. զույգ դաշնաթղթերի ընդհանուր #1 հոդվածը ինքնորոշման իրավունքը վերապահում է «բոլոր ժողովուրդներին» առանց սահմանափակումների: Հելսինկիի վեհաժո-

դովի եզրափակիչ ակտի (1975թ.) ութերորդ սկզբունքը հռչակում է. *«Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հիման վրա բոլոր ժողովուրդների իրավունքն է՝ լիովին ազատ, ցանկացած պահի, առանց արտաքին միջամտության, որոշել իրենց ներքին և արտաքին քաղաքական կարգավիճակը, և ըստ իրենց հայեցողության հետամտել իրենց քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացումը»:* Միջպետական պրակտիկան նույնպես աջակցում է ինքնորոշման իրավունքի ընդլայնված՝ գաղութային շրջանակից դուրս, գործադրումը: Իսկապես, *Իրավագետների միջազգային հանձնաժողովը (International Commission of Jurists)* Բանգլադեշի անջատման մասին իր զեկույցում նշում է. *«եթե պետության մաս հանդիսացող ժողովուրդներից մեկը զրկվում է իրավահավասարությունից և խտրականության է ենթարկվում, ապա նրա ինքնորոշման ամբողջական իրավունքը կյանքի է կոչվում» [17, p. 69]:* ՄԱԿ Անվտանգության խորհրդի 5 անդամներից 4-ի կողմից ստորագրված *Գերմանիայի վերջնական կարգավիճակի մասին պայմանագիրը (Treaty on the Final Settlement with Respect to Germany)* (12 սեպտեմբերի 1990թ.) հստակորեն նշում է. *«Գերմանացի ժողովուրդը, ազատորեն կենսագործելով ինքնորոշման իր իրավունքը, արտահայտել է իր կամքը՝ միավորել Գերմանիան որպես մեկ պետություն»* [նախաբան, պարբ. 11]: Սա՝ այն դեպքում, երբ ոչ Արևելյան և ոչ Արևմտյան Գերմանիաները գաղութ չէին: Այս դիտարկումը նաև վերաբերում է այն պետություններին, որոնք առաջացել են Սովետական Միության և Հարավսլավիայի տրոհումներից հետո [18, p. 861]:

«Տարածքային ամբողջականությունը» և քաղաքական անկախությունը

«Տարածքային ամբողջականություն». զարգացումը և բովանդակությունը

«Տարածքային ամբողջականություն» հասկացությունը, խիստ սահմանափակ ըմբռնմամբ, միջազգային փաստաթղթերում գործածվել է միայն 3 անգամ: Մնացած դեպքերում դրանք հղումներ են այդ փաստաթղթերին:

Տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության հայեցակարգերն ի հայտ են եկել Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո: Ազգերի լիգայի 10-րդ հոդվածը հռչակում է. «Ազգերի լիգայի անդամները պարտավորվում են հարգել և պահպանել Ազգերի լիգայի բոլոր անդամների տարածքային ամբողջականությունն արտաքին ներխուժումից» [19, p. 813]: «Տարածքային ամբողջականության» նույն ըմբռնումն է վերահաստատված ՄԱԿ կանոնակարգում. 2(4). «[ՄԱԿ] Բոլոր անդամներն իրենց միջազգային հարաբերություններում պետք է ձեռնպահ մնան որևէ պետության

տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուղղված ուժի սպառնալիքից կամ գործադրումից»: Մյուս կարևոր միջազգային փաստաթուղթը, որն այս առումով հաճախ է վկայակոչվում, Հելսինկիի եզրափակիչ ակտն է *(Helsinki Final Act)* (1 օգոստոսի 1975թ.), որը պահանջում է. «Մասնակից երկրներն իրենց երկկողմ, ինչպես նաև ընդհանրապես միջազգային հարաբերություններում, ձեռնպահ կմնան որևէ պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուժի սպառնալիքից կամ կիրառումից»:

Ակնհայտ է, որ Հելսինկիի եզրափակիչ ակտը, ինչպես ՄԱԿ կանոնակարգը և Ազգերի լիգայի դաշնաթուղթը, դատապարտում են լոկ ուժի կիրառումը պետության տարածքային ամբողջականության դեմ և ոչ թե անվերապահորեն հանդես են գալիս տարածքային ամբողջականության բացարձակ պահպանման օգտին: Այն հստակեցնում է, որ արտաքին ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումը տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության դեմ անընդունելի է: Միաժամանակ Հելսինկիի եզրափակիչ ակտը (գլուխ 1) առանձնանշում է. «սահմանները կարող են փոփոխվել, համաձայն միջազգային իրավունքի, խաղաղ միջոցներով և համաձայնությամբ»:

Ակնհայտ է, որ այն ժամանակներից ի վեր, երբ «տարածքային ամբողջականություն» հասկացությունն ի հայտ եկավ միջազգային իրավունքի մեջ, այն սերտորեն միահյուսված է արտաքին ուժի գործադրման հետ: Այլ խոսքով՝ «տարածքային ամբողջականությունն» ավանդաբար կապված է սպառնալիքի կամ ուժի կիրառման հիմնարար սկզբունքի [19, p. 812-813] և ոչ թե պետության տարածքի անվերապահ պահպանման հետ: Ինչպես նշել էինք վերը, այս դրույթը միայն «ուժի գործադրման արգելք» է [1, p. 389] և հրաժարում է «մի պետության կողմից ուժի գործադրման միջոցով մեկ այլ պետություն գրավելուց կամ նրա կառավարությունը տապալելուց» [1, p. 383]:

«Տարածքային ամբողջականություն». ըմբռնումը, սահմանափակումը և կարգավիճակն ըստ միջազգային իրավունքի

Արդի քաղաքական կյանքում շարունակաբար սխալ փորձեր են արվում *«տարածքային ամբողջականությունը»* ներկայացնել որպես ինքնորոշման իրավունքի ընդհանուր սահմանափակում: Նման սահմանափակման հիմքը միանգամայն կեղծ է: Այն պետությունը, որի կառավարությունը անխտիր չի ներկայացնում տարածքի ամբողջ ժողովրդին, չի կարող նաև տարածքային ամբողջականությունը չխախտելու պատրվակով սահմանափակել ինքնորոշման իրավունքը [18, p. 880]:

Ընդսմին, միջպետական պրակտիկան ցույց է տալիս, որ տարածքային ամբողջականության պահպանման հիման վրա ինքնորոշման իրավունքի

սահմանափակումը հաճախ է անտեսվել: Ինչպես, օրինակ, եղել է Բանգլադեշի (անկախություն Պակիստանից), Սինգապուրի (Մալայզիայից) և Բելիզի *(«չնայած Գվատեմալայի պահանջներին»)* ճանաչումների դեպքում [20, p. 849]: Ի լրումն, միջազգային համայնքի կողմից Սովետական Միության և Հարավսլավիայի տրոհումների, Արևելյան Թիմորի և Էրիթրեայի ճանաչումներից, Կոսովոյի, Աբխազիայի և Հարավային Օսիայի մասնակի ճանաչումներից հետո, ստեղծվել է իրավիճակ, երբ որոշակի տարածքի ժողովրդին ճնշման ենթարկող կառավարությունն այլևս չի կարող ապավինել տարածքային ամբողջականության պահպանման ընդհանուր շահագրգռությանը՝ որպես ինքնորոշման իրավունքի սահմանափակում:

Ըստ այդմ, կա հստակ ըմբռնում. միայն այն պետության կառավարությունը, որն անխտիր բոլոր ժողովուրդներին է թույլ տալիս ազատորեն որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը և տնտեսական, հասարակական ու մշակութային զարգացումը, կարող է, միայն կարող է, փորձ անել սահմանափակել ինքնորոշման իրավունքը: Այսու, տարածքային ամբողջականությունը, որպես ինքնորոշման իրավունքի սահմանափակում, կարող է միայն վերապահվել այն պետություններին, որոնց կառավարությունները ներկայացնում են ողջ բնակչությունը՝ թույլատրելով վերջիններիս ազատորեն և առանց սահմանափակումների գործադրել ներքին ինքնորոշումը [18, p. 880]:

Ակնհայտ հայեցակարգային կապ կա ժողովրդավարության և ինքնորոշման միջև: Ժողովրդավարությունը հաճախ դիտարկվում է որպես ներքին ինքնորոշում, իսկ անջատումը՝ որպես արտաքին ինքնորոշում, այսինքն՝ ինքն իրեն կառավարելու և ոչ թե այլ ժողովուրդների կողմից կառավարվելու իրավունք [21]:

Ակնհայտ է, որ նրանք, ովքեր զրկված են ինքնորոշման իրավունքից, կարող են փնտրել միջազգային ուժային աջակցություն՝ սատարելու համար իրենց ինքնորոշման իրավունքը, սակայն ինքնորոշման դեմ պայքարող պետությունը չի կարող օգտագործել դրսի ուժն ինքնորոշվող հանրությունների դեմ: Ինչպես նշվել էր վերը, *Միջազգային իրավունքի սկզբունքների վերաբերյալ հռչակագիրը (Declaration on Principles of International Law)* ամրագրում է. *«յուրաքանչյուր պետություն պարտավորություն ունի ձեռնպահ մնալ որևէ ուժային գործողությունից, որը ժողովրդին զրկում է ինքնորոշման, ազատության և անկախության իր իրավունքից»:* Վերջին շրջանում նկատելի է միջազգային համայնքի այնպիսի գործողությունների աճը, որոնք կարող են որակվել որպես մարդասիրական միջամտություններ: Այդպես եղավ Սոմալիում և Իրաքի հյուսիսային մասում՝ 36 զուգահեռականից հյուսիս, երբ իրականացվեց «ապահով երկինք» ծրագիրը (1991-2003թթ.) [22]: Ներկայումս միջազգային համայնքի կողմից պակաս կարևորություն է տրվում այն երկրների տարած-

քային ամբողջականությանը, որտեղ մարդու իրավունքները, ներառյալ ինքնորոշման իրավունքը, կոպտորեն և շարունակաբար ոտնահարվում են [18, p. 882]: Ինքնորոշման իրավունքը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ ժողովուրդներն ուրիշների կողմից հպատակեցման, գերիշխանության հաստատման և շահագործման միջոցներով ենթարկվում են ճնշումների: Սա վերաբերում է բոլոր տարածքներին՝ գաղութային, թե ոչ, և բոլոր ժողովուրդներին [18, p. 883]: Պետք է ընդունել, որ ինքնորոշման բազում շարժումներ առաջ են եկել, երբ պետությունն իրականացրել է անարդար, խտրական քաղաքականություն, իսկ միջազգային իրավակարգը համապատասխանաբար չի արձագանքել ժողովուրդների օրինական ձգտումներին:

Ինքնորոշում. մարդու իրավունքներն ու անջատվելու իրավունքը

Ինքնորոշման ենթադրյալ վտանգներից է համարվում այն, որ ինքնորոշումը կարող է խրախուսել անջատողականությունը: Նախ, միջազգային իրավունքի մեջ չկա որևէ օրենք, որը դատապարտի ամեն անջատում բոլոր պայմաններում: Ինքնորոշման իրավունքը ներառում է անջատվելու իրավունք [21, p. 23]: Այն դեպքերում, երբ տարածքային իրավունքի սկզբունքն անհամատեղելի է ինքնորոշման իրավունքի հետ, ապա առաջինը, համաձայն արդի միջազգային իրավունքի, պետք է իր տեղը զիջի վերջինին [2, p. 187]: Օրինակ, երբ մեծամասնությունը կամ փոքրամասնությունը շարունակում է այնպիսի միջազգային հանցանքը, ինչպիսին, օրինակ, ցեղասպանությունն է, կամ միտումնավոր քաղաքականությամբ բնակչության մյուս հատվածին լիովին զրկում է մարդու իրավունքներից, ապա ընդունելի է, որ ճնշված հատվածը, լինի փոքրամասնություն, թե մեծամասնություն, դիմի ինքնորոշման՝ ընդհուպ մինչև անջատում [2, p. 199]:

Քանի որ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամքի ազատ և խաղաղ դրսևորմանը (ցույցեր, հանրահավաքներ, հայցադիմումներ, կոչեր և այլն) հակադրեց բռնի ուժը խաղաղ բնակչության դեմ, ներքին զորքերի օգտագործմամբ ձեռնարկեց ոչ համարժեք պատժիչ գործողություններ, պետականորեն կազմակերպեց Ադրբեջանի հայ քաղաքացիների ջարդեր (Սումգայիթ, Բաքու, Կիրովաբադ և այլն), իր քաղաքացիների նկատմամբ վարձկանների օգնությամբ (ուկրաինացիներ, աֆղաններ, ռուսներ և այլն) սանձազերծեց անողոք պատերազմ և խայտառակ պարտություն կրեց, չի կարող ակնկալել, որ Արցախի ժողովուրդը հրաժարվի իր օրինական իրավունքից և չիրականացնի ինքնորոշման իր իրավունքը:

Խորքի մեջ, միջազգային համայնքը գտնվում է իրավական և բարոյական պարտավորության ներքո՝ ճանաչելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի քաղա-

քական ինքնորոշումը, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Երբ տեղի է ունեցել *de facto* պետության բյուրեղացում, ապա դրա ճանաչման մերժումը կարող է հավասարազոր լինել ինքնորոշման մերժումի: Բացի այդ, միջազգային իրավունքի մեջ կա հստակ ըմբռնում. այն բանից հետո, երբ կռվող կողմին տրվել է *«պատերազմող կողմի» (belligerency)* կարգավիճակ, ինչպես տեղի է ունեցել Լեռնային Ղարաբաղի հետ *Բիշքեկի արձանագրությամբ [Bishkek Protocol]* (5 մայիսի 1994թ.) *և Հրադադարի համաձայնագրով [Cease-fire Agreement]* (12 մայիսի 1994թ.), ապա դրանից բխում է ամբողջական ճանաչման պարտավորություն և ճանաչման մերժումը հավասարազոր է քաղաքական ինքնորոշման մերժման, ինչն անօրինական է [23, p. 220]: Այս պարտավորությունն ածանցվում է այն ըմբռնումից, որ ինքնորոշման սկզբունքն ու իրավունքը *erga omnes* են, այսինքն՝ պատկանում են միջազգային իրավունքի իրավական այն պարտավորությունների թվին, որոնք երկկողմ կամ փոխադարձ չեն, այլ վերաբերում են միջազգային համայնքի բոլոր անդամներին [13, p. 134]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի *(Loizidou vs Turkey)* 1996թ. դատավճռում դատավոր Վիլդհաբերը *(Wildhaber)* երևան է հանում աճող համախոհությունն *(consensus)* առ այն, որ ինքնորոշման իրավունքը, մասնավորապես՝ անջատումը, պետք է մեկնաբանվի որպես միջոց մարդու իրավունքների որոշակի ոտնահարումների դեմ. *«Մինչև վերջերս միջազգային պրակտիկայում ինքնորոշման իրավունքը գործնականորեն սահմանափակվում էր և ըստ էության նույնացվում էր ապագաղութացման հետ: Վերջին տարիներին թվում է՝ համախոհություն է ի հայտ գալիս, երբ ժողովուրդները, որոնց մարդկային իրավունքները մշտապես և կոպտորեն ոտնահարվում են, կամ նրանք որևէ ներկայացուցիչ չունեն, կամ նրանց ներկայացվածությունը զանգվածաբար խախտվում է ոչ ժողովրդավարական և խտրական միջոցներով, նույնպես կարող են կենսագործել ինքնորոշումը: Եթե նման խտրականություն իրականում կա, ապա ինքնորոշման իրավունքն այն գործիքն է, որը կարող է գործածվել վերահաստատելու համար մարդու իրավունքների և ժողովրդավարության միջազգային ստանդարտները» [24, p. 59]:* Ինչպես վկայում է դատավոր Վիլդհաբերը, իրավագետ մասնագետների մեջ կա հարաճուն համաձայնություն առ այն, որ ինքնորոշումն է այն միջոցը, որով պետք է շտկվի պետության կողմից որևէ խմբի շարունակաբար և կոպտորեն ոտնահարվող իրավունքը [25, p. 74]: Անկասկած, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշումը պետք է գնահատվի նաև որպես ուղղիչ արդարադատություն *(corrective justice):*

Այսու, փոքրամասնության ինքնորոշման իրավունքը պետք է դիտարկել մարդու իրավունքների շրջանակում: Ըստ այդմ, կարելի է սահմանել, որ ինքնորոշումը որոշակի տարածքում հաստատված ժողովրդի սեփական քաղա-

քական ճակատագիրը ժողովրդավարական ճանապարհով որոշելու իրավունքն է [25, p. 85]:

Անհեթեթություն է ենթադրել, որ ինքնորոշումը պետք է կենսագործվի նախկին վարչական սահմաններում, առանց հաշվի առնելու տարածքի ժողովրդի մշակութային, լեզվական կամ էթնիկ ինքնությունը: Սովետական Միությունում ներքին սահմանները հաճախ գծվում էին այն ձևով, երբ տիտղոսային մի ազգի շատ ներկայացուցիչներ հայտնվում էին իրենց տիտղոսային հանրապետությունից դուրս, ինչպես Լեռնային Ղարաբաղի դեպքում էր [21, p. 140]: Եթե որոշակի տարածքում որևէ առանձնախումբ քաղաքականապես իրավազուրկ է, ապա այդ խումբն ունի անկախության իրավունք [26, p. 171], անկախ այն բանից՝ կազմակերպված է որևէ վարչական միավորի մեջ, թե ոչ: Անտարակույս, քանի որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը (և ոչ միայն Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովուրդը) Ադրբեջանում ենթարկվել է ծայրահեղ խտրականության, ապա իրավունք ունի ինքն ընտրելու ինքնորոշման ձևը:

Ամփոփում

- Ինքնորոշումը հնուց եկող քաղաքական իրավունք է: Այն միջազգային հանրային իրավունքում լիովին հաստատված սկզբունք է: Այս սկզբունքը հաստատվել, զարգացել և շոշափելի ձև է ստացել միջպետական հարաբերություններում և ներառված է բազում միջազգային փաստաթղթերում:
- Ինքնորոշման սկզբունքը զարգացում է ապրել Արդարադատության միջազգային դատարանի վճիռներում [*International Court of Justice (ICJ)*]:
- Ինքնորոշման նկատմամբ հարգանքը նախապայման է համաշխարհային խաղաղության համար: Ինքնորոշման իրավունքից զրկվածները կարող են դիմել միջազգային ուժային աջակցության:
- Ինքնորոշումը որպես միջազգային իրավունքի սկզբունք համընդհանուր է իր ընդգրկումով:
- Ինքնորոշումը վերաբերում է բոլոր այն իրավիճակներին, երբ ժողովուրդներն այլոց կողմից ենթարկվում են հպատակեցման և շահագործման: Բոլոր ժողովուրդներն ու ազգերն անխտիր և առանց սահմանափակումների ունեն ինքնորոշման իրավունք:
- Ինքնորոշման իրավունքի մերժումը մարդու իրավունքի ոտնահարում է, հետևաբար՝ միջազգային իրավունքի խախտում:
- Ինքնորոշումը սեփական քաղաքական կազմակերպվածության ձևը և այլ խմբերի հետ հարաբերությունները որոշելու իրավունքն է:

- Ժողովուրդների և ազգերի ինքնորոշման իրավունքը նախադրյալ է մարդու մյուս բոլոր իրավունքները վայելելու համար: Ըստ այդմ, ՄԱԿ վեհաժողովը հորդորել է բոլոր անդամ երկրներին՝ աջակցել ժողովուրդների և ազգերի ինքնորոշման իրավունքին:
- ՄԱԿ կանոնակարգի 2(4) հոդվածը որևէ ընդհանուր բան չունի «տարածքային ամբողջականության» բացարձակ պահպանման հետ: Այն «ուժի կիրառման արգելք» է և կոչ է անում մերժել «մի պետության կողմից մեկ այլ պետության տարածքի զավթումը և տարածքի տապալումը»:
- Ինքնորոշումը ներառում է նաև անկախանալու իրավունք: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը (և ոչ միայն Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի) իրավասու է անկախությունն ընտրել որպես ինքնորոշման դրսևորում:

Հունիս, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Restatement of the Law (3rd). The Foreign Relations Law of the United States, The American Law Institute, Washington, 1987; 2, §905(7).
2. *Umozurike O.U.,* Self-Determination in International Law, 1972, Connecticut.
3. *Thurer D.,* Self-Determination. In R. Bernhardt (ed.), Encyclopaedia of Public International Law, vol. IV, Amsterdam, 2000.
4. *Sh. Rosenne,* Codification of International Law, Encyclopaedia of Public International Law, in. R. Bernhardt (ed.), v. I, Amsterdam, 1992.
5. *Starushenko G.,* The Principle of Self-determination in Soviet Foreign Policy, Moscow, 1963.
6. Recueil des cours de l'Academie de droit international, Hague, 1962, II, p. 33; Annual Report of the Secretary-General , 1960, 2. Chief Judge Moreno Quintana, International Court of Justice Reports, 1960.
7. *Hillier T.,* Sourcebook on Public International Law, London-Sydney, 1998.
8. Documents, UN General Assembly, A/CONF.157/23; 12 July 1993.
9. Declaration of General Principles for a World Rule of Law, American Journal of International Law, 58, (1964) pp. 138-151, at 143.
10. International Court of Justice, Reports, 1966, v. IV.
11. ICJ Reports 975 12 at 31-33. See also the Namibia Opinion, Ibid (1971), 16 at 31; Geog K. v. Ministry of Interior, ILR 71, 284; and the Case Concerning East Timor, ICJ Reports (1995) 102.
12. *Brownlie I.,* Principles of Public International Law, Oxford, 1998 (5th ed.), p. 600; Quincy Wright, 98 Hague Recueil (1959, III), 193.
13. *Cassese A.,* Self-determination of Peoples, Cambridge, 1995.

14. Self-Determination and Self-Administration, A Sourcebook, (ed. Wolfgang Danspeckgruber and Arthur Watts), London, 1997, Appendix 2, The Liechtenstein Initiative at the UN.
15. Self-determination, Digest of International Law (ed. M. Whiteman), v. 5, § 4.
16. Resolution 545 (VI) of February 5, 1952.
17. Report on Events in East Pakistan (1971), Geneva.
18. *R. McCorquodale,* Self-Determination: Human Rights Approach, The International and Comparative Law Quarterly, vol. 43, # 4 (Oct. 1994).
19. *Ch. Rozakis,* Territorial Integrity and Political Independence, in R. Bernhardt (ed.), Encyclopaedia of Public International Law, v. IV, Amsterdam, 2000.
20. *Maguie J.,* "The Decolonization of Belize: Self-Determination v. Territorial Integrity" (1982) 22 Virginia Journal of International Law.
21. *Moore M.,* National Self-Determination, Oxford, 1998, 10.
22. Security Council Resolution 688 (April 5 1991).
23. *Thomas A.V.W., Thomas A.J.,* Non-Intervention: the law and its import in the Americas, Dallas, 1956.
24. Loizidou vs Turkey (Merits), European Court of Human Rights, 18 December, 1996, (1997) 18 Human Rights Law Journal 50 at.
25. *Knop K.,* Diversity and Self-Determination in International law, Cambridge, 2002.
26. *Frank T.M.,* The Power of Legitimacy among the Nations, New York, 1990.

ПРИНЦИПЫ *САМООПРЕДЕЛЕНИЯ* И *«ТЕРРИТОРИАЛЬНОЙ ЦЕЛОСТНОСТИ»* В МЕЖДУНАРОДНОМ ПРАВЕ
(на примере Нагорного Карабаха)

Ара Папян

Резюме

В связи с Карабахским конфликтом часто используются понятия «*самоопределение*» и «*территориальная целостность*». К сожалению, эти правовые термины, в основном по политическим причинам, зачастую используются неверно. Чтобы во всей полноте понять статус, охват и содержание принципов «самоопределения» и так называемой «территориальной целостности» в современном международном праве, автор статьи подробно рассмотрел эти вопросы.

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՕՊ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

*Արծրուն Հովհաննիսյան**

Նախաբան

Արցախի հայաթափումը նախաձեռնելիս Ադրբեջանը մեծապես օգտվել է տարատեսակ թռչող սարքերից (ԹՍ): Նրանց համար դժվար կլիներ առանց համապատասխան տեխնիկայի և միջոցների իրականացնել այդ բարդ գործընթացը: Հետևաբար, քաղաքացիական և ռազմական ավիացիան հենց սկզբից ունեցել է լայն կիրառություն: Իսկ ի՞նչ ավիացիա է ունեցել Ադրբեջանը, և ինչպե՞ս է այն օգտագործվել հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո:

ԽՍՀՄ-ը փլուզման պահին Անդրկովկասում ուներ օդուժի մի քանի ռազմաբազա, որոնք մտնում էին ՀՕՊ 19-րդ առանձին բանակի և 34-րդ օդային բանակի կազմի մեջ: Վրաստանի տարածքում կար ինը, իսկ Ադրբեջանի տարածքում՝ հինգ նման ռազմաբազա՝ իրենց արդիական օդանավակայաններով [1, с. 164-167]: Դրանցից էին Սիտալ-Չայում տեղակայված խորհրդային 80-րդ *Су-25* գրոհիչների առաջին ավիագունդը, Նասոսնիում՝ ՀՕՊ 82-րդ կործանիչային ավիագունդը՝ զինված *МиГ-25* կործանիչներով, Քյուրդամիրում՝ 976-րդ ռմբակոծիչային ավիագունդը՝ *Су-24* ինքնաթիռներով և Դալյարում՝ 882-րդ հետախուզական ավիագունդը՝ *МиГ-25РБ* և *Су-24МР* ինքնաթիռներով: Ադրբեջանը ցանկացած գնով ձեռք էր բերում այդ ինքնաթիռներից, չնայած Ռուսաստանը փորձում էր դուրս բերել դրանք [2, p. 47]: Նույնիսկ դեպք է եղել, երբ թռիչքից առաջ ինքնաթիռի անիվները ծակել են, այլ համակարգեր խափանել, միայն թե ինքնաթիռը մնար: Ադրբեջանի տարածքից հանվող մարտավարական միջուկային սպառազինությունն անգամ քիչ էր մնում ընկներ ծայրահեղականների ձեռքը [3, с. 211]: Թալանի գործում մեծ դեր էին խաղում նաև ադրբեջանամետ ռուս օդաչուներն ու հրամանատարները. Վլ.Կրավցովն, օրինակ, օգնեց լուծարել 82-րդ ավիագունդը (մոտ 30 կործանիչ բաժին հասավ Ադրբեջանին, իսկ հետո նա ստացավ գեներալի կոչում և դարձավ ադրբեջա-

* ՀՀ ԶՈւ կապիտան

նական ռազմաօդային ուժերի (ՌՕՈւ) հրամանատարը)[1], իսկ Ա.Պլեշը ադրբեջանցիներին տեղեկացնում է զնդի դուրսբերման մասին, հետագայում նա ադրբեջանական ՌՕՈւ էսկադրիլիայի հրամանատար էր, Յու.Պախոմովը մի քանի միլիոն դոլարի դիմաց վաճառում է 23-րդ մոտոհրաձգային դիվիզիայի ամբողջ սպառազինությունը և տեխնիկան, բարձրաստիճան զինվորական գեներալ-լեյտենանտ Ս.Ու. Բեպանը Թիֆլիսից զենք էր փոխադրում Ադրբեջան[2]:

Ընդհանուր առմամբ ադրբեջանական ՌՕՈւ-ը ստեղծվեցին տարբեր ճանապարհներով ձեռք բերված ավելի քան 150 մարտական և ռազմաուսումնական թռչող սարքերով: Ադրբեջանն, իհարկե, ուներ նաև քաղաքացիական ավիացիա: Հենց քաղաքացիական ուղղաթիռներից էին ձեռքի նռնակներով կատարվում ռմբահարումները: Համեմատության համար նշենք, որ հայկական կողմը ստացել էր մոտ 25 թռչող սարք:

Ադրբեջանական օդային հարվածները

Ինչպես հայտնի է, Արցախյան բնակավայրերն ու ՀՀ սահմանամերձ բնակավայրերը շատ են ենթարկվել օդային հարձակման ադրբեջանցիների կողմից: Մեկ անգամ չէ, որ ադրբեջանական օդաչուները ցուցադրել են իրենց «հերոսությունը»՝ գյուղերում ամրացած մի քանի ազատամարտիկի ու խաղաղ բնակիչներին ռմբակոծելով, մեր ուղղաթիռների հետևից կրակելով և այլն: Նույնիսկ *Ми-8* ուղղաթիռներից ձեռքի նռնակներ էին նետվում Գետաշենի և այլ գյուղերի բնակիչների վրա:

1990թ. հունվարի 20-ին ուղղաթիռների 15 չվերթներով Մալիբեյլի գյուղ են հասցվում ադրբեջանական ՕՄՕՆ-ի հատուկ ջոկատները[3]: Սեպտեմբերի 23-ին նույն տխրահռչակ ստորաբաժանման ջոկատները հարձակվում են Մարտակերտի Չափար գյուղի վրա: Հարձակվողներին օդից աջակցում էին ուղղաթիռները, որոնցից նետվում էին ձեռքի նռնակներ: Երկու օր հետո երկու քաղաքացիական ուղղաթիռ նման ռմբանետում են կազմակերպում Ստեփանակերտ քաղաքի և այլ գյուղերի վրա[4]:

Հայկական ուժերը ևս անզեն չէին: Ճիշտ է, պատերազմը սկսել ենք որսորդական հրացաններով, սակայն ժամանակի ընթացքում զինվեցինք գրավված, գնված և այլ ճանապարհներով ձեռք բերված զենիթային թնդանոթներով, դյուրակիր և այլ զենիթահրթիռային համալիրներով (ԶՀՀ):

1991թ. սկզբին հայտնի 26-ի դիրքերից *Стрела-2М* դյուրակիր ԶՀՀ-ով խոցվեց ադրբեջանական *Ми-8* ուղղաթիռը:

[1] *Жирохов М.,* Авиация в армяно-азербайджанском конфликте // www.airwar.ru.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

1991թ. ապրիլի 2-ին ազատամարտիկները նույն զենքով խոցում են ադրբեջանական մեկ այլ *Ми-8* ուղղաթիռ, որում, այլ ուղևորներից բացի, թռչում էր նաև Ադրբեջանական ԽՍՀ մինիստրների խորհրդի փոխնախագահ Թամերլան Կարաևը: Ապրիլի 30-ին Գետաշենի վրա հարձակման ժամանակ ցամաքային ուժերին նորից աջակցում էին ռազմական և այլ ուղղաթիռները: Մայիսի 8-ին Մեծ Շենը նորից ենթարկվում է ձեռքի նռնակների ռմբակոծման [4, с. 104]: 1991թ. հուլիս-օգոստոս ամիսներին *Ми-24*-երը հարվածում էին Շահումյանի և այլ հայկական շրջանների գյուղերի բնակիչներին և ազատամարտիկներին: Հուլիսի 20-ին Բուզլուխ գյուղի վրա գրոհելիս երեք ուղղաթիռներն էլ վնասվում են, օդաչուներից մեկը վիրավորվում է[1]: «Օղակ» գործողության ժամանակ յուրաքանչյուր ըմբոստացող գյուղ ենթարկվել է ուղղաթիռների կրակային ու հոգեբանական մշակման:

1991թ. սեպտեմբերի 18-ին Ասկերանի շրջանի Բերքաձոր, Մեխտիշեն և Նորագյուղ գյուղերի բնակիչները և ազատամարտիկները ենթարկվում են *Ми-24*-երի հերթական հարվածներին [5, с. 83]: 1991թ. հոկտեմբերի 14-ին Կարաչինար գյուղի մոտ վայրէջք է կատարում մի ուղղաթիռ: Բնակիչները, կարծելով, թե հայկական ուղղաթիռ է և օգնություն է բերել, վազում են դեպի այն, սակայն ընկնում ժամանած ՕՄՕՆ-ականների կրակի տակ [5, с. 65]: Ադրբեջանական կողմը պնդում է, որ 1991թ. հոկտեմբերի 29-ին Խանաբադ գյուղի մոտ խոցվել է քաղաքացիական *Ан-2* ինքնաթիռը, որը վարում էր փորձառու օդաչու Ա.Ասադովը:

Ըստ ռուսական տվյալների՝ նույն թվականի նոյեմբերի 21-ին Մարտունու շրջանի Քարաքենդ գյուղի մոտ խոցվել է մայոր Վյաչեսլավ Կոտովի ռուսական *Ми-8* ուղղաթիռը, որի մեջ քսանմեկ անձանց հետ էր նաև շրջանի պարետը՝ գեներալ-մայոր Նիկոլայ Ժինկինը: Գործողության համար մեղադրում են հայկական կողմին[2]:

1992թ. հունվարի 28-ին հայկական կողմը դյուրակիր ԶՀՀ-ով խոցել է Աղդամից Շուշի թռչող ադրբեջանական *Ми-8* ուղղաթիռը: Ուղղաթիռի հրամանատարն էր Վ.Սերյոգինը [6, с. 15]:

1992թ. փետրվարի 14-ին ադրբեջանցիները երկրում եղած ռուսական ավիացիայից գողանում են յոթ ուղղաթիռ և ստեղծում առաջին ադրբեջանական ուղղաթիռային էսկադրիլիան: Հետագայում Սանգաչալի քաղաքում նրանց ժառանգություն մնացին այլ ուղղաթիռներ ևս: Այդ բոլորը միասին կազմում են երկու ուղղաթիռային էսկադրիլիա՝ 14 *Ми-24* և 9 *Ми-8* ռազմական ուղղաթիռներ: Խորհրդային բազաների հաշվին նրանք ստացան այլ օգնություն ևս:

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

1992թ. փետրվարի 19-ին Ղարազալի գյուղի մոտ նորից հայտնվեցին ուղղաթիռները, այս անգամ՝ ադրբեջանական օդուժի[1]: Դրանք վարում էին նախկին ԽՍՀՄ այլազգի օդաչուները, որոնք պայմանագրով ծառայության էին անցել Ադրբեջանի ԶՈւ-ում: Նրանք օդային գրոհներով զգալի վնաս էին հասցնում և՛ ազատամարտիկներին, և՛ խաղաղ բնակչությանը: Ադրբեջանական բանակի ազրեսիան ուղեկցվում էր ուղղաթիռների օրեցօր աճող հարվածներով: 1992թ. ապրիլի 8-ին ադրբեջանական ՌՕՈւ-ն ստանում է առաջին ինքնաթիռը՝ *Су-25*-ը: Գրոհիչն ադրբեջանցի օդաչու, լեյտենանտ Վաղիֆ Բախտիար-օղլի Կուրբանովը գողացել էր Սիտալ-Չայ քաղաքում տեղակայված ռուսական օդանավակայանից[2]: Ռուսական կողմն սկզբից ցույց է տալիս, որ անհանգստացած է այդ առումով: Հրաման էր տրված Վազիանի (Վրաստան) օդանավակայանից կործանիչներ պատրաստ պահել փախստական գրոհիչին խոցելու համար, սակայն ամեն ինչ ձևական բնույթ էր կրում: Իսկ *Су-25*-ն անցնում է ակտիվ գործունեության և մարտի 8-ից մշտապես ռմբակոծում Ստեփանակերտը: Այդ օրը Կուրբանովը միայնակ չէր. ամենաքիչը չորս մարտական ուղղաթիռ էր գրոհել հայկական գյուղերի վրա:

Հավանական է, որ հենց Կուրբանովն է մայիսի 9-ին խփել հայկական *Як-40* ինքնաթիռը, որը Ստեփանակերտից դուրս էր բերում ծերերին և վիրավորներին: Միևնույն ժամանակ, Կուրբանովի զոհն էին դառնում խաղաղ բնակիչները: Միայն մայիսի 8-ին և 9-ին նրա հարձակումից զոհվեցին 30 և վիրավորվեցին 120 մարդ[3]: Կուրբանովը Շուշիի ազատագրման հաջորդ օրը խնդիր է ստանում ղեկավարվող օդ-երկիր դասի հրթիռներով խոցել սուրբ Ղազանչեցոց եկեղեցին, որտեղ գտնվում էին մեծ քանակությամբ հրետանային արկեր: Նպատակն էր դետոնացիայի միջոցով պայթյուն առաջացնել: Սակայն Ադրբեջանի ապազա հերոսը չի կարողանում արդարացնել իր ժողովրդի վստահությունը: 1992թ. մայիսի 7-ին ադրբեջանական հետևակն ու զրահատեխնիկան երեք *Ми-24* մարտական ուղղաթիռների աջակցությամբ հարձակվում են Ստեփանակերտի հարավարևմտյան հատվածի պաշտպանական դիրքերի վրա [7, էջ 34]: Հաջորդ օրը, ցերեկը, ադրբեջանական ուղղաթիռները, ներխուժելով Արցախի օդային տարածք, հարձակման են անցնում՝ ռմբակոծելով Մարտունու Ավդուռ, Մյուրիշեն, Նորշեն, Ասկերանի Շոշ և այլ գյուղերը [7, էջ 36]:

1992թ. մայիսյան փայլուն հաղթանակներից հետո հակառակորդն ավելի անզուսպ դարձավ: Չկարողանալով մարտադաշտում հաղթել՝ նրանք փորձում էին վրեժ լուծել խաղաղ բնակիչներից: Մայիսի ընթացքում ռմբակոծվել

[1] Նույն տեղում:

[2] Ավելորդ չենք համարում նշել, որ այս օդաչուին իր նախկին զնդի հրամանատարը դրական չէր բնութագրում:

[3] *Жирохов М.,* Авиация в армяно-азербайджанском конфликте // www.airwar.ru

են Վերինշեն, Այպարիս, Դագրազ, Ալբուլաղ և այլ հայկական գյուղեր, Ստեփանակերտ քաղաքը, Ասկերան և Մարտունի շրջկենտրոնները: Կուրբանովի *Су-25*-ն այդ ժամանակներում իրեն զգում էր ինչպես ամերիկյան «թռչող ամրոցները»՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական ռազմարդյունաբերական համալիրը ոչնչացնելիս: Արցախը հողին հավասարեցնելու խնդիրը կատարում էին նաև այլ ինքնաթիռներ: Կուրբանովի անպատիժ թռիչքը երկար չի տևում: Հունիսի 13-ին Ասկերանի բերդի մոտ հայ հրաձիգներից մեկն իր *Стрела-2М* դյուրակիր ԶՀՀ-ով խոցում է Կուրբանովի ինքնաթիռը: *Су-25*-ի վրա կրակում էր նաև Ալբերտ Դանիելյանի *ЗСУ-23-4 Шилка* զենիթային ինքնագնաց կայանքը (ԶԻԿ): Կուրբանովի վաստակն արժանի գնահատական է ստանում:

1992թ. մայիսի 13-ին Թբիլիսիից Նախիջևան էր թռչում ռուսական բեռնատար *Ми-26* ուղղաթիռը: Ղազախի մոտակայքում այն վթարի է ենթարկվում, անձնակազմը՝ մայոր Սերգեյ Վոեվոդինի հրամանատարությամբ, զոհվում է: Քննությունն այդպես էլ չի կարողանում ստույգ պարզել վթարի իսկական պատճառները: 1992թ. մայիսի 26-ին ադրբեջանցիներն Աղդամի կողմից Մարտակերտի վրա են արձակում երկիր-երկիր տիպի հրթիռներ [7, էջ 44][1]:

1992թ. հուլիսին Մարտակերտի համար մղված մարտերում ադրբեջանական ավիացիան գործում էր կազմակերպված և գրագետ: Բարձունքների վրա տեղակայված հայկական բոլոր ուժերը ծանր կորուստներ են կրում ուղղաթիռների հարվածներից: Դրանց օդաչուներն այլազգիներ էին, և զգացվում էր աֆղանական փորձը: Ինքնապաշտպանական ուժերը կորցնում են զենիթային միջոցներ: Մարտերի ամբողջ ընթացքում ադրբեջանական օդուժը, բացի ուղղաթիռներից, կիրառում էր նաև *Су-25* գրոհիչներ[2] և ձևափոխված ուսումնամարզական *Л-29* ինքնաթիռներ [7, էջ 48-50]: Հայկական կողմն այդ ժամանակ ևս ունեցել էր հաղթանակներ: Հակառակորդը կորցրել էր որոշակի տեխնիկա, սակայն զենիթային միջոցների խիստ պակաս էր զգացվում: Հուլիսի 31-ին հակառակորդի ինքնաթիռները մեծ բարձրությունից ռմբակոծում են Ստեփանակերտ քաղաքը: Նույնը կրկնվում է օգոստոսի 5-ին [7, էջ 56]:

1992թ. օգոստոսից այդ ռմբակոծություններն ինտենսիվանում են: Մեծ վնասներ էին հասցնում հատկապես *РБК-250* և *РБК-500* ռմբային կասետները: 1992թ. օգոստոսի 23-ին Ստեփանակերտ քաղաքի վրա գցված *РБК-500* ռմբա-

[1] Հավանաբար, խոսքը ՀՕՊ *С-200* հրթիռների մասին է: Բազմիցս նշվել է, որ Արցախում կիրառվել են նման հրթիռներ, սակայն ստույգ տեղեկություններ չունենք տեսակների և արդյունքների մասին: Դրանց կիրառման արդյունավետությունը շատ կասկածելի է, քանի որ առանց լուրջ փոփոխությունների *С-200*-ի զենիթային հրթիռները մեծ արդյունավետությամբ չէին կարող կիրառվել: Ամբողջ հաշվարկն արվել է այն հաշվով, որ այն մեծ վնաս կարող է տալ բնակչությանն ի հաշիվ մեծ ու հզոր մարտական մասի և հեղուկ ռեակտիվ շարժիչի՝ իր թունավոր քիմիական նյութերով:

[2] *Су-25*-երը, հավանաբար, մնացել էին նշված ռազմաբազայից, որոնք թաքուն փոխանցվում էին ադրբեջանական կողմին:

յին կասետից զոհվում են 14 խաղաղ բնակիչ: Նույն ամսի 31-ին նետվում են 12 (այլ տվյալներով՝ 20) նմանատիպ ռումբ, որոնցից զոհվում են 16 և վիրավորվում 121 մարդ [8, էջ 98-108]: Մեկ շաբաթվա ընթացքում քաղաքի վրա նետվում է ավելի քան 20 տոննա ռումբ [7, էջ 61-62]: Օգոստոսի 20-ին ադրբեջանական զինուժի կողմից Մարտակերտի Մեհմանա, Գյուլաթաղ և Հարությունագոմեր գյուղերի վրա լայնածավալ հարձակման ժամանակ կիրառվում էր նաև օդուժ: Նույն ամսի վերջերին Արցախ տեղափոխվեցին երեք *9 К 33 Оса* ԶՀՀ-ները, որոնք կարող էին իրադրությունը կտրուկ փոխել: Սեպտեմբերի 4-ին ադրբեջանցիներն Աղդամի կողմից մեծաքանակ ուժերով և միջոցներով հարձակվում են Մարտունու Ավդուռ, Հացի և Նորշեն գյուղերի վրա: Հիմնական ուժերին աջակցում էր նաև օդուժը:

Ականատեսների վկայությամբ՝ 1992թ. հոկտեմբերի 28-ի երեկոյան անհայտ մակնիշի ռազմական ինքնաթիռը ռմբակոծել է Գանձասարի վանքը՝ մի քանի տասնյակ չղեկավարվող հրթիռներ արձակելով վանքի վրա: Նույն օրը և նախորդ երեկոյան հակառակորդի օդուժը մի քանի անգամ ռմբակոծել էր նաև Ստեփանակերտը [7, էջ 80]:

1993թ. ապրիլի 7-ին ադրբեջանական ինքնաթիռը 500 կիլոգրամանոց ռումբ է նետել Մարտունու շրջկենտրոնի վրա [7, էջ 103]: 1993թ. օգոստոսի 19-ին երեք ադրբեջանական ինքնաթիռ հարվածներ են հասցնում Կապան քաղաքին: Իսկ օդաչուների ռմբահարության սխալների պատճառով 1994թ. մարտի 25-ին երկու ինքնաթիռ Հորադիզում հարվածում են նաև ադրբեջանական դիրքերին: 1994թ. ապրիլի 13-ին մի քանի ադրբեջանական ինքնաթիռ, բազմիցս խախտելով օդային սահմանը, ռմբակոծում են Ստեփանակերտը և այլ բնակավայրեր [7, էջ 174]: Այդ օրն այն ոչ եզակի օրերից էր, երբ կատարվում էին անգամ մի քանի տասնյակ մարտական թռիչքներ: Նման ռմբակոծությունները դարձել էին սովորական:

МиГ-25РБ ռմբակոծիչները 1994թ. ռմբակոծել են Հադրութ և Ստեփանակերտ քաղաքները և, չնայած մեծ ավերածություններին, այնուամենայնիվ, մեծ արդյունավետություն չեն ունեցել: Մի անգամ նույնիսկ օտարազգի օդաչուները նման մարտավարություն են փորձարկել՝ վերնից բավական բարձր և արագ թռչող երկու *МиГ* են մոտենում Ստեփանակերտին: Միևնույն ժամանակ բավական ցածր թռչելով՝ քաղաքին են մոտենում նաև երկու այլ, հավանաբար *Су-24* (կամ՝ *Су-25*) ինքնաթիռներ: Դա ծուղակ էր ՀՕՊ-ի համար, բայց ներքևի ինքնաթիռները հայտնաբերվում են, իսկ վերևի ինքնաթիռները չեն կարողանում դիպուկ ռմբանետում կատարել:

Մինչև հրադադարն ադրբեջանական ինքնաթիռները մշտապես հար-

վածում էին Ստեփանակերտ քաղաքին: Եթե անգամ ճակատներում հարաբերական անդորր տիրեր, միևնույն է, մայրաքաղաքը պիտի ենթարկվեր հարվածների: Քաղաքը ենթարկվել է ոչ միայն ինքնաթիռների, այլ նաև հրետանու ակտիվ ռմբահարման: 1991թ. վերջից մինչև 1994թ. գարուն Ստեփանակերտ քաղաքի վրա նետվել է *БМ-21Град* համազարկային կայանքի ավելի քան 20.000, «Ալազան»-ի մոտ 2700 հրթիռ, ավելի քան 1900 հրետանային այլ արկեր, 180 ռմբային կասետ և ավելի քան 100 հատ 500 կիլոգրամանոց ռումբ, այդ թվում նաև վակուումային ռումբեր [4, с. 103]: Ադրբեջանական օդուժի մարտական թռիչքները մոտենում են 10.000-ին, ինչն աննախադեպ է այս տարածաշրջանի համար:

Հայկական ՀՕՊ հակազդեցությունը

Հակառակորդն անպատիժ չէր գործում. որոշ ինքնաթիռներ խոցվում էին, որոշ հարվածներ՝ խափանվում: Ինքնապաշտպանական ուժերը սովորել էին ժամանակին հայտնաբերել հակառակորդին, նաև զինվում էին համապատասխան միջոցներով: 1992թ. աշնանը Արցախում արդեն հայտնվել էր *2 К 11 Круг* ԶՀՀ-ը, որը զգալիորեն ավելի հեռահար և բարձրահար էր, քան *9 К 33 Оса*-ն, որից խուսափելով՝ ադրբեջանական օդաչուները փոխել էին թռիչքների մարտավարությունը: *2 К 11 Круг* ԶՀՀ-ների մասնագետներ ևս չկային, սակայն հայ հակաօդայինները, որոնցից շատերը բարձրագույն տեխնիկական կրթություն ունեին, համալիրը յուրացրին մի քանի շաբաթում և ինքնաթիռներ էին խոցում:

Դեռ 1992թ., երբ առաջին անգամ ռմբակոծվեց Կապանը, այդ ուղղությամբ կազմակերպվեց ՀՕՊ միջոցների տեղադրությունը: Մասնավորապես, մի քանի 57 մմ-ոց *С-60* հրանոթներով սարքավորվում էր համալիրը:

Եվ այսպես, հայկական կողմն օրեցօր ավելացնում էր իր ՀՕՊ պոտենցիալը, որի արդյունքում ադրբեջանական ԹՍ-ների կորուստները շատանում էին:

Ադրբեջանական ԹՍ-ների խոցման դեպքերի վերաբերյալ տարբեր աղբյուրներ տալիս են տարբեր տվյալներ: Ադրբեջանական կողմը խոստովանել է 10 կորցրած ինքնաթիռի և ուղղաթիռի մասին: Սակայն մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք մոտ են 30-ին, որոնք կներկայացնենք աղյուսակի տեսքով:

Հ/Հ	Տեղը, ամսաթիվը	Խոցման միջոցը	Օդանավի մակնիշը/տեսակը
1.	1989թ. հուլիսի 14 Շուշի, հունվարի 28	դյուրակիր ԶՀՀ	*Ми-8*
2.	Ղաջար-Կարմիր Շուկա միջտարածքում, 1992թ. ապրիլի 4	*ЗСУ-23-4 Шилка*	ուղղաթիռ [9, էջ 3]
3.	ապրիլի 8	*Шилка* և *Стрела-2М* [9, էջ 2]	*Ми-24*
4.	1992թ. ապրիլ	ՀՄՄ-ի, *Шилка*	երկու ուղղաթիռ
5.	Մարտունի, մայիսի 15	*Стрела-2М*	*Ми-8* [9, էջ 2]
6.	Չլդրան, օգոստոսի 20 կամ 31	-	*МиГ-25ПД*[1]
7.	օգոստոսի 25-ին և 27-ին	*Оса-АК*	Երկու ինքնաթիռ, մեկը՝ *Су-24* [9, էջ 10]
8.	սեպտեմբերի 4	*Оса-АК*	*МиГ-21* կամ *Су-25*
9.	սեպտեմբերի 17	*Оса-АК*	*Ми-24*
10.	Ստեփանակերտ, սեպտեմբերի 20	*Оса-АК*	ինքնաթիռ
11.	Լիսագոր, հոկտեմբերի 5	*Оса-АК*	ինքնաթիռ
12.	Լաչին, հոկտեմբերի 8	դյուրակիր ԶՀՀ	ուղղաթիռ
13.	Մալիբեյլի, հոկտեմբերի 10	*Оса-АК*	*Ми-24*[2]
14.	Մարտակերտ, հոկտեմբերի 28	*Оса-АК*	*Ми-24* և *Л-39*
15.	հոկտեմբերի 31	*Оса-АК*	ինքնաթիռ
16.	Մարտակերտ, հոկտեմբերի 31	դյուրակիր ԶՀՀ	ինքնաթիռ
17.	Մարտունի, դեկտեմբերի 6	*Стрела-10* և *Шилка*	*Су-25*
18.	Առաջաձոր, դեկտեմբերի 6	*Оса-АК*	*Ми-24*
19.*	Վարդենիս, դեկտեմբերի 11	-	*МиГ-21*
20.	Առաջաձոր, 1993թ. հունվարի 14	*Оса-АК*	ինքնաթիռ
21.	Մարտակերտի ճակատ, հունվարի 15	*Оса-АК*	*МиГ* կործանիչ [9, էջ 10][3]

[1] Օդաչուն կապիտան Յու.Բելիչենկոն էր (15-րդ մարտական թռիչքը), ում հետ հարցազրույցի տեսագրությունը պահպանվում է մինչև օրս:

[2] Այլ տվյալներով՝ ինքնաթիռը *Су-25* է եղել: Օդաչուն մահացել էր, վառված փաստաթղթերից երևում էր միայն անունը՝ Ալեքսանդր: Նույն ինքնաթիռի վրա կամ նույն օրը այլ ինքնաթիռի վրա հրթիռներ է արձակել նաև *Круг* ԶՀՀ-ը:

[3] Նշենք, որ հաճախ *МиГ-25*-ը տարբեր աղբյուրներում սխալմամբ անվանվում է *МиГ-21*, որոնց առկայությունն ադրբեջանական օդուժում չի հաստատվում աղբյուրներով:

Հ/Հ	Տեղը, ամսաթիվը	Խոցման միջոցը	Օդանավի մակնիշը/ տեսակը
22.	Մարտակերտի ճակատ, հունվարի 15	դյուրակիր ԶՀՀ	ինքնաթիռ[1]
23.	Մարտակերտի ճակատ, հունվարի 15	*Оса-АК*	ինքնաթիռ[2]
24.	հունվարի 20	*Круг*	*Су-25*
25.**	Կուսապատ, մարտի 20	*Оса-АК*	ուղղաթիռ
26.	հարավարևելյան ճակատ, 1994թ. հունվարի 12	*Круг*	ինքնաթիռ
27.	հունվարի 23	-	*Су-25*
28.	հարավարևելյան ճակատ, հունվարի 31	*С-60*	*МиГ-21*
29.	փետրվարի 2	*С-60*	*Су-25*
30.	փետրվարի 17[3]	դյուրակիր ԶՀՀ և *Оса-АК*	*МиГ-21*[4]
31.	Մարտակերտ Չայլու, ապրիլի 13	դյուրակիր ԶՀՀ	ուղղաթիռ
32.	Գորիս-Լաչին հատված, ապրիլի 23	*Круг*	*МиГ-25РБ*[5]

* *Ադրբեջանական ՌՕՈւ-ն 1992թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին կորցրել են 14 թռչող սարք* [10, էջ 21], *որից 11-ը՝ միայն հունիսի 13-ից մինչև օգոստոսի վերջը* [7, էջ 63]:
*** 1993թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին Արցախի տարածքում հիմնականում Оса-АК համալիրով ոչնչացվել են չորսական ինքնաթիռ և ուղղաթիռ: Դրանցից մեկը ոչնչացվել է հունիսի 26-ին Մարտակերտի համար մղված մարտերի ժամանակ* [7, էջ 109], *իսկ մյուսը եղել է Ми-24 ուղղաթիռ և ոչնչացվել է սեպտեմբերի 3-ին:*

---

[1] Կա այդ իրողությունը հաստատող տեսաժապավեն, որը բազմիցս ցուցադրվել է հեռուստատեսությամբ:
[2] Հայկական կողմից կան տեղեկություններ, որ ինքնաթիռից կատապուլտ են եղել երկու օդաչու: Եթե դա հավաստի է, ապա կարելի է ենթադրել, որ ինքնաթիռը եղել է *Су-24*: Չնայած դժվար է ստույգ նշել վարձկան օդաչուների անունները, սակայն ըստ որոշ տվյալների՝ հավանական *Су-24*-ի օդաչուներից մեկը եղել է Ա.Չիստյակովը, որին հետագայում գերել են ինքնապաշտպանական ուժերը:
[3] Այլ տվյալներով՝ դեպքը տեղի է ունեցել մեկ տարի առաջ նույն օրը:
[4] Օդաչուն՝ թաթար վարձկան Մ.Իշկնիշը, զարմացել էր, որ իրեն խոցել են: Լինելով հրահանգիչ և սովորեցնելով այլ վարձկանների՝ նա իր թռիչքով փորձել էր ցույց տալ, որ հայերը չեն կարող խոցել իրենց: Ապշած էր, որ այդ սառնամանիքին լեռան վրա նստած շարքայինը ժամերով հերթապահություն է կատարել: Հետո պարզվեց, որ այս վարձկանը ԽՍՀՄ օրոք եղել էր հայկական ՌՕՈւ վարչության պետի տեղակալ գնդապետ Բ.Բաբայանի աշակերտը:
[5] Ստեփանակերտի օդային տարածք մտան միանգամից յոթ ինքնաթիռ: *МиГ*-երը շատ մեծ արագությամբ էին անցնում (650-700 մ/վ), և միշտ չէ, որ հաջողվում էր նրանց խոցել, սակայն նրանք էլ չէին կարողանում իրենց խնդիրը կատարել: Օդաչուն կարողացավ անկարգելով իջնել և ազատվել հայկական կողմի հետապնդումից: Սա փառահեղ հաղթանակ էր, և առանձնահատուկ պետք է նշել, որ *Круг* ԶՀՀ-ն առաջին անգամ կիրառվել է հենց Արցախյան գոյամարտում:

Նշված ինքնաթիռների և ուղղաթիռների տեսակների և ամսաթվերի մեջ կարող են լինել որոշակի անճշտություններ, որոնք հիմնականում կախված են հակամարտության կողմերի և ռուսական աղբյուրների տեղեկատվության իրարամերժությունից: Հաճախ, քանի որ խոցված օդանավերը հասցնում էին անցնել ռազմաճակատի գիծը, հնարավոր չէր լինում ստույգ ճշտել տեսակը, իսկ ադրբեջանական կողմը կորուստը չէր խոստովանում: Հայկական կողմից, որպես զենիթային միջոցներ, հիմնականում օգտագործվել են խորհրդային արտադրության *Стрела-2М, Стрела-3* և *Игла* դյուրակիր ԶՀՀ-եր, *ЗСУ-23-4 Шилка* ԶԻԿ-եր, ինչպես նաև *Оса, Стрела-10* և *Круг* ԶՀՀ-եր:

Եզրակացություն

Խորհրդային Միության փլուզումից հետո նրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր պետություն ստացավ որոշակի քանակությամբ զենք և մարտական տեխնիկա: Բոլորովին այլ հարց է, թե ինչպես և ինչքան է մեզ բաժին հասել եղբայրական չափաբաժնից: Մեզ բաժին հասած թեկուզ չնչին, բայց եղած զենքի դերը պիտի համարենք կարևոր:

Մեծ եղբոր համար հայկական և ադրբեջանական նորաստեղծ պետությունններն իրար նման էին, սակայն չստացան նույն տեսակի սպառազինություն: Ադրբեջանն իր տարածքում եղած պահեստներից բաժին ստացավ 11.000 բեռնակիր վագոն սպառազինություն, իսկ Հայաստանը՝ 500 վագոն [11, էջ 61]: Ադրբեջանում, բացի այդ, ավելի մեծ քանակի ավիացիա կար, ինչպես նաև դեռ գործում էր ինքնաթիռավերանորոգման գործարանը, որը մեծ դեր կարող էր խաղալ պատերազմի ժամանակ:

Նախ անդրադառնանք հակառակորդին:

Ադրբեջանական ավիացիան նյութական և տեխնիկական հզոր բազայի, անհրաժեշտ մասնագետների առկայության և լավ փորձի շնորհիվ գործել է բավական ակտիվ և արդյունավետ հատկապես պատերազմի նախնական փուլում, երբ հիմնական մասնագետները ԽՍՀՄ բանակի այլազգի սպաներն էին: Ադրբեջանն ակտիվորեն հավաքագրում էր վարձկանների: 1993թ. օգոստոսի 4-ին ռուսական «Մեգապոլիս էքսպրես» թերթում հրապարակված մի հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ Պերմում հավաքագրվում են վարձկաններ Ադրբեջանի բանակի համար, իսկ Թաթարստանում հավաքագրում էին միայն մահմեդականների [7, էջ 118]: Այդ օդաչուները կատարում էին հարյուրավոր մարտական թռիչքներ: Օրինակ, գերված Ա.Չիստյակովը խոստովանում էր, որ անձամբ կատարել է ավելի քան 30 մարտական թռիչք:

Խոցված ինքնաթիռներում մահացած վարձկան օդաչուներից էին նաև մայոր Ս.Մինյուշկինը և կապիտան Ե.Կարլովը:

Ավիացիան ընդհանուր ռազմական գործողությունների կազմակերպման ժամանակ հանդես էր գալիս ժամանակին և բավական արդյունավետ:

Ունեցած տեխնիկայի քանակը, գիտելիքներն ու փորձը թույլ էին տալիս հարվածները կազմակերպել համապատասխան ձևերով: Բազմիցս կիրառվել են մարտավարական հատուկ հետախուզման և նշանառման, օգնության, ՀՕՊ ճնշման, շեղման և այլ տեսակի խմբեր, որոնք խելամիտ օգտագործման դեպքում շատ են օգնում հարվածային խմբերին և բազմակի մեծացնում են ավիացիոն հարվածների արդյունավետությունը: Սակայն հետագայում, ինչպես ցույց տվեց ժամանակը, ադրբեջանցիները ոչ միայն լավ չսերտեցին իրենց դասերը, այլև սխալ մոտեցում ցուցաբերեցին: Այլազգի շատ օդաչուներ ադրբեջանական հրամանատարությունից ոչ միայն չստացան խոստացված գումարը, այլև ենթարկվեցին տարատեսակ հալածանքների: Ինչպես ցույց է տվել ավիացիայի կիրառության բազմամյա փորձը, ռմբակոծիչ ինքնաթիռների կիրառության լավագույն թիրախը հակառակորդի ռազմարդյունաբերական համալիրն է, ղեկավարման կետերը, պահեստները, զորքերի ռեզերվային կուտակումները, կարևոր հաղորդակցման ուղիները և այլն, սակայն ոչ խաղաղ բնակչությունը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի *МиГ-25* ինքնաթիռի կիրառությունը: Սա բացառիկ տվյալներ ունեցող ինքնաթիռ է, որը պահանջում է բարձր մասնագիտական որակավորում և հատուկ վերաբերմունք տեխսպասարկման հարցում: Ունենալով մեծ արագություն, թռիչքի բարձրություն և օդային մարտի յուրահատուկ հնարավորություններ` *МиГ-25*-ն իրեն այնքան լավ չի դրսևորում այլ մարտական խնդիրներ լուծելիս: Ինչպես ցույց տվեց փորձը, այն շատ դժվար է կիրառել ցամաքային նշանակետերին հարվածելու համար[1]: Անհաջողության պատճառներից է *МиГ-25*-ի բարդ նշանոցային հարմարանքը: Ադրբեջանն Իրաքի նման չկարողացավ այդ սարքերը մշտապես ճշգրտված պահել: Կործանիչի ուժեղ կողմերը կիրառելու բնազավառ ուղղակի չկար, հայկական կողմը չուներ բարձրաթռիչք ինքնաթիռներ: Մամուլում հայտնված այն տվյալները, թե օդաչուներն այս ինքնաթիռի թևերի տակ եղած օդ-օդ դասի ջերմային ինքնուղղորդվող հրթիռներով խոցել են հայկական տանկերը, չեն համապատասխանում իրականությանը:

Ադրբեջանական կողմն ավիացիան հիմնականում կիրառել է որպես հարվածային միջոց, այդ թվում նաև խաղաղ բնակչության դեմ և բնակավայրերի ավերման համար:

Չնայած ադրբեջանական ավացիան հզոր էր, վարձկան օդաչուները պատրաստված էին, իսկ հայկական ինքնապաշտպանական ուժերի կազմում ՀՕՊ անհրաժեշտ մասնագետները փոքրաթիվ էին, մարտական տեխնիկան միայն ցամաքային էր, քիչ քանակությամբ, միևնույն է, ադրբեջանական խոցված ԹՍ-ների ընդհանուր թիվը անցնում է 30-ից:

[1] Իրան-իրաքյան պատերազմի ժամանակ, խորհրդային մասնագետները հաճախ ստիպված էին լինում ուղղորդել կործանիչի ռմբանետման բարդագույն սարքը: Բանն այն է, որ աստղերի դիրքով ուղղորդվող նշանոցը շատ բարդ է և չնչին սխալվելու դեպքում, մեծ բարձրությունից և մեծ արագության պայմաններում նետած ռումբը նշանակետից մի քանի կմ հեռու է ընկնում:

Օդային մարտեր չեն գրանցվել, չնայած եղել են դեպքեր, երբ օդաչուները երկնքում տեսել են հակառակորդի ուղղաթիռը կամ ինքնաթիռը:

Պատերազմի այս փուլում ադրբեջանական օդուժի և հայկական ՀՕՊ հակամարտությունը լրացնում է հայոց հաղթանակների շարունակական ցանկը: Առանց հայկական կործանիչ ավիացիայի ադրբեջանցիները մոտ 150 թռչող սարքերից կորցրել են մոտ 30-ը: 10.000 թռիչքների հաշվարկով ադրբեջանական ավիացիայի կորուստները կազմում են 0.3%: Հաշվի առնելով այն հանգամանքները, որ հայկական ինքնապաշտպանական ուժերը գրեթե անզեն էին ու չպատրաստված, սա համաշխարհային պատմության համար բարձր ցուցանիշ է: Օդուժ-ՀՕՊ հակամարտությունների պատմության մեջ լավագույն ցուցանիշներ ապահովել են խորհրդային և հարավսլավական հակաօդայինները՝ ունենալով գերազանց պատրաստություն և ամենաարդիական միջոցների մեծ քանակ: Նրանք Վիետնամում, Մերձավոր Արևելքի հակամարտություններում և այլուր, օգտվելով նաև կործանիչ ավիացիայի աջակցությունից, հակառակորդի օդուժին կարողացել են հասցնել նույնքան, երբեմն՝ ավելի ցածր կորուստներ [12, с. 397; 13, с. 37; 14, с. 203; 15, с. 2; 16, с. 80]: Հայ հակաօդայինների հաջողության հիմնական գրավականը եղած միջոցների շարժունակության օգտագործումն էր, դրանցով արագ խուսավարումը, տեղանքի հնարավորությունների ճիշտ օգտագործումը և միջոցների գրագետ կիրառումը: Կարծում ենք, որ ապագայում էլ նպատակահարմար կլինի հայկական ՀՕՊ-ը կառուցել հիմնականում նման համալիրներով: Անշարժ, մեծ համալիրներն (*С-125, С-300* և այլն) ապահովում են խոցման մեծ հարթություն, սակայն մեր պայմաններում փոքր և լավ խուսավարող համալիրներն (*Тор, Тунгуска, Бук*) արդյունավետ են:

Ադրբեջանական տրանսպորտային ավիացիան ևս հիմնականում ներկայացված էր ուղղաթիռներով, որոնք ևս գործել են ինտենսիվ:

Հայկական կողմն ավիացիան կիրառել է հիմնականում որպես տրանսպորտային միջոց: Հայկական կողմից թռիչքների 80-90%-ը կազմել են տրանսպորտային փոխադրումները: Մինչև Լաչինի միջանցքի բացվելը հայկական կողմից տրանսպորտային բոլոր փոխադրումները կատարվել են ավիացիայի միջոցով: Պատերազմի դաշտից դուրս են բերվել ավելի քան 980 վիրավոր ու հարյուր սպանված: Դեպի ռազմաճակատ են տեղափոխվել ավելի քան 24 հազար կիլոգրամ սպառազինություն, պարեն և այլ կարևոր բեռներ:

Առանց վարանելու պետք է փաստել, որ ավիացիան թույլ չտվեց հակառակորդին հայաթափել Արցախը: Պատմությանը հայտնի են մի քանի դեպքեր, երբ տրանսպորտային ավիացիան որոշիչ դեր է խաղացել այս կամ այն հակամարտության ժամանակ: Մասնավորապես, 1940-45թթ. Չինաստանի փրկության համար կազմակերպված կյանքի ճանապարհը՝ Գորբը, որն անցնում էր Հնդկաստանի ջունգլիների վրայով: 600 տրանսպորտային ինքնաթիռներն ամսական Չինաստան էին հասցնում մոտ 30.000 տոննա բեռ, և

դրանց շնորհիվ պայքարը ճապոնացիների դեմ շարունակվեց մինչև հաղթական ավարտ [17, c. 460]:

Մյուս պատմությունը հայտնի է որպես Բեռլինի փրկության կամուրջ, որը նորից ստեղծեցին ամերիկյան բեռնատար ինքնաթիռները 1948թ. մարտին: Խորհրդային ղեկավարությունը շրջափակել էր Գերմանիայի մայրաքաղաքը՝ նպատակ ունենալով տնտեսապես խեղդել վերջիններիս: Ամերիկյան ղեկավարությունն օրական 4500 տոննա բեռների փոխադրման ծավալներով մի կերպ փրկեց քաղաքը սովահարությունից ու ցրտից [18, c. 271]: Գործողությունը տևել է մոտ մեկ տարի:

Նման մի կամուրջ էին ստեղծել հայ օդաչուներն Արցախի համար: Եվ եթե ավիացիան ունենար ոչ թե 7-8, այլ 30-40 տրանսպորտային ուղղաթիռ, ապա, թերևս, հնարավոր կլիներ նաև հայաթափումից փրկել Շահումյանը: Բացի դրանից, հայկական կողմի ձեռնարկած հիմնական հարձակողական գործողությունների նյութական պաշարների նախապատրաստական աշխատանքները կատարել է ավիացիան: Գոյամարտի փորձից պետք է կատարել ճիշտ եզրակացություններ:

Այսօր պետք է մեծ զարկ տալ ուղղաթիռային ավիացիային, հատկապես տրանսպորտային: Ներկայումս Հայաստանին անհրաժեշտ է 30-40 տրանսպորտային ուղղաթիռ, որպեսզի երկու առանձին էսկադրիլիայի կազմով կարողանան թեկուզ լարված աշխատել առնվազն երկու ուղղությամբ:

Հայկական ավիացիայի 10-20 տոկոս կազմող մարտական կիրառությամբ թռիչքների ընթացքում չի եղել դեպք, որ զենք կիրառվի խաղաղ բնակչության նկատմամբ: Հայկական կողմից ավիացիայի կիրառության փորձը լավագույնս ցույց է տալիս, թե որքան մեծ դեր կարող է խաղալ ավիացիան պատերազմի ժամանակ, հատկապես ուղղաթիռային ավիացիան լեռնային տեղանքում: Խնդիրը միայն բեռնափոխադրումները չեն, չնայած միայն դրանց նշանակությունը զգալի է: Մարտական ավիացիան ևս կարող է բավական հզոր լինել նույնիսկ ուղղաթիռներով:

Մայիս, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Пядушкин М.,* Вооружая Кавказ: Нечаянное наследство Москвы//Кавказ: вооружен и разобщен/ Под редакцией Матвеевой А., Хизкока Д. Saferworld, ЦАСТ: Лондон-М., Февраль 2004.
2. *Aliyev Y.,* Arms Control Process in Transcaucasia // NATO School, Polaris Quarterly, Vol. 1, Issue 2, Summer 2004.
3. Ядерное нераспространение / Под ред. Орлова В.А. Т.1.ПИР-Центр: М., 2002, т. 1.
4. *Агаджанян М., Асатрян Э., Минасян С.,* Азербайджан против Нагорного Карабаха. Ер., 2006.
5. *Мелик-Шахназарян Л.,* Военные преступления Азербайджана против мирного населения Нагорно-Карабахской Республики, Ер., 1997.

6. *Жирохов М.,* Гражданская авиация в ходе конфликта в Карабахе. Крылья Родины. N12. 2006.
7. *Հարության Ս.,* Ղարաբաղյան պատերազմ, Եր., 2001:
8. *Աղաջանյան Մ., Մինասյան Ս., Սաստոյան Է.,* Ադրբեջանը Ղարաբաղի ժողովրդի դեմ. ագրեսիայի քաղաքա-իրավական հետևանքները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա, Եր., Նաիրի, 2006:
9. *Դնրիկյան Տ.,* Երկնքի պահապաններն ու տիրակալները (1-ին գիրք), Եր., 2008թ.:
10. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ հանրագիտարան, Եր., 2004:
11. *Юнусов А.,* Азербайджан: в ожидании перемен под бременем истории// Кавказ: вооружен и разобшен/ Под редакцией Матвеевой А., Хизкока Д. Saferworld, ЦАСТ: Лондон-М., Февраль 2004.
12. *Н.Я. Василин, А.Л. Гуринович,* Зенитные ракетные комплексы, Минск, 2002.
13. *Афинов В.,* Эволюция авиационных средств РЭБ и их применение в вооруженных конфликтах, ЗВО, 3.1998.
14. *Жирохов М.А.,* История ВВС Израиля. М.-Минск, 2001.
15. *Почтарев А.,* Дебют "Веги", "Красная звезда", 29 августа 2001.
16. *Ямпольский Л.С.,* Обобщенный анализ применения средств воздушного нападения ОВС НАТО при проведении военной операции в Югославии «Решительная сила» и в других локальных войнах в 90-х годах: Учебное пособие. Ульяновск: 2000.
17. *Ченнолт К. Ли,* Путь бойца, М., 2006.
18. *Хелферс Дж.,* ВМФ США, М., 2004.

АНАЛИЗ ДЕЙСТВИЙ АЗЕРБАЙДЖАНСКОЙ АВИАЦИИ И ПРОТИВОДЕЙСТВИЯ АРМЯНСКОЙ ПВО ВО ВРЕМЯ КАРАБАХСКОЙ ВОЙНЫ

Арцрун Оганесян

Резюме

Азербайджанская агрессия в Нагорном Карабахе с первых дней осуществлялась с широким применением авиации. Использовались самые разные средства, начиная с гражданских вертолетов, из которых на армянские села сбрасывали ручные гранаты, кончая боевыми вертолетами с советскими экипажами. После распада СССР авиация Азербайджана за счет российских авиабаз резко повысила свою боевую мощь, получив около 150 летательных аппаратов. Для сравнения: Армении досталось всего лишь 25 летательных аппаратов.

Обладая первоначально весьма слабой ПВО, армянская сторона со временем обзавелась новыми средствами ПВО и повысила уровень квалификации своих специалистов. В итоге, за все время конфликта, до 12 мая 1994г., когда стороны подписали соглашение о перемирии, Азербайджан потерял около 30 летательных аппаратов, что является бесспорной победой армянской стороны.

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐ

Տիգրան Ղանալանյան[*]

19-րդ դարում՝ բողոքական շարժման ծնունդից մոտ երեք դար անց, ձևավորվեց Հայ Բողոքական եկեղեցին: Սա պայմանավորված էր ինչպես համաշխարհային, այնպես էլ Հայոց պատմության զարգացման մի շարք առանձնահատկություններով: Հայ բողոքականներն ակտիվ գործունեություն ծավալեցին և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Հայաստանում: Շուտով նրանք, ընդլայնելով իրենց գործունեությունը, դարձան կարևոր գործոն Հայության կյանքում: Հայ բողոքականները շարունակեցին իրենց գործունեությունն ինչպես Հայաստանի Առաջին հանրապետության, այնպես էլ Հայկական ԽՍՀ գոյության սկզբնական շրջանում: Հաջորդող տարիները նշանավորվեցին հայ բողոքականների ակտիվ գործունեությամբ Հայ սփյուռքում: Հայաստանում նրանց գործունեությունը վերստին ակտիվացավ Հայաստանի անկախացումից հետո: Այսօր հայ բողոքականներն ակտիվ հոգևոր, կրթական, հասարակական, բարեգործական, մշակութային գործունեություն են ծավալում Հայաստանի Հանրապետությունում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և Սփյուռքի բազմաթիվ համայնքներում:

Հայության մեջ, բացի նրա գերակշիռ մասը կազմող Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հետևորդներից, կան նաև քրիստոնեական այլ դավանանքային ուղղությունների հետևորդներ՝ կաթոլիկներ և բողոքականներ: Հայ բողոքականների (ինչպես նաև տարադավան հայության այլ շերտերի) պատմական, հասարակական-քաղաքական, մշակութային, ազգագրական, հոգեբանական և դավանանքային առանձնահատկությունների ուսումնասիրությունն ունի կարևոր նշանակություն՝ ազգային համախմբման, Հայության միասնական գործունեության ասպարեզի ընդլայնման, ազգային նպատակների իրականացման համատեքստում: Բողոքականության ծնունդը կապված է ռեֆորմացիոն շարժման հետ, որը ծայր առավ Եվրոպայում 16-րդ դարում: Կաթոլիկ եկեղեցու դեմ ծավալված շարժման արդյունքում ձևավոր-

[*] «Նորավանք» ԳԿՀ փորձագետ:

վեցին բողոքական եկեղեցիները: Սրանք, ի տարբերություն կաթոլիկ եկեղեցու ուղղաձիգ կառույցի, շատ ավելի մասնատված են և ցրված:

Հայաստանում բողոքականության ի հայտ գալը կապված է մի շարք պատմական հանգամանքների հետ: Նոր ժամանակներում միսիոներներն ակտիվ գործունեություն ծավալեցին Հայաստանում: Անշուշտ, բողոքական շարժման տարածումը Հայաստանում տեղի ունեցավ աստիճանաբար, սակայն 19-րդ դարում այն ձեռք բերեց զանգվածային բնույթ, ինչի արդյունքում էլ բողոքականներն արձանագրեցին զգալի հաջողություններ: Հայերի շրջանում բողոքական ուսմունքներից առավելապես տարածվեց ավետարանականությունը: Հատկանշական է, որ միսիոներները չէին պատկանում միակենտրոն ղեկավարություն ունեցող որևէ կառույցի, այլ ծառայում էին տարբեր պետությունների շահերին:

Այս առնչությամբ Րաֆֆին նշում է, որ անգլիացի միսիոներները շատ ավելի վտանգավոր էին, քան ամերիկացիները [1, էջ 488-489]: Ուստի, միսիոներական առաքելություններն ուսումնասիրելիս, բացի դավանանքային և եկեղեցական կողմից, անհրաժեշտ է լույս սփռել նաև միսիոներների իրականացրած քաղաքական գործառույթների վրա: Նրանց գործունեությունն արևմտահայության մեջ պարարտ հող էր գտնում՝ կապված վերջինիս ծանր իրավական, քաղաքական, ընկերային-տնտեսական դրության հետ:

Եթե հայ կաթոլիկներին տալիս են «ֆրանկ» անունը, ապա բողոքականներին անվանում են «ընգլիզ»:

Եթե հայոց մեջ կաթոլիկության տարածումը պայմանավորված էր Հռոմի գործոնով, ապա բողոքականության ներթափանցումը կատարվում էր գլխավորապես անգլո-ամերիկյան միսիոներների միջոցով: Դավանափոխությունը զուգակցվում էր անգլիալեզու արևմտյան քաղաքակրթական արժեքների ներթափանցմամբ, ինչը և բավարար պատճառ կարող է հանդիսանալ բողոքականներին «ընգլիզ» կոչելու համար:

Բողոքականության ձևավորումը Հայաստանում

1846թ. հուլիսի 1-ին հայ ավետարանականներն առանձին «միլլեթ» (թարգմանաբար՝ ազգ) ճանաչվեցին: Իրականում փաստորեն հայ ավետարանականները պաշտոնապես անջատվեցին Հայ Առաքելական եկեղեցուց և ձեռք բերեցին ինքնուրույն կարգավիճակ: Մինչ այդ՝ 1830թ. նման կարգավիճակ էին ստացել հայ կաթոլիկները: Այսպիսով, Օսմանյան կայսրությունում առաջացան հայկական 2 նոր ինքնուրույն միավորներ:

Հայ ավետարանականներին որպես առանձին միլլեթ սուլթանի կողմից ճանաչելու գործում կարևոր նշանակություն ունեցան արտաքին ուժերը.

«…Ամերիկեան եւ Անգլիական դեսպաններու ուղղակի միջամտութեան Սուլթանական Բարձրագոյն Դրան մօտ…» [2, էջ 261]:

19-րդ դ. կեսից հայ ավետարանական շարժումը տարածվել է Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, Օսմանյան կայսրության մյուս հայաշատ շրջաններում: 1860-ական թվականներից Թուրքիայի տարբեր շրջաններում հայ ավետարանական եկեղեցիները կազմակերպել են միություններ: Մինչև Մեծ եղեռնը Օսմանյան կայսրությունում գործել է ավետարանական 4 միություն: Առաջինը կազմվեց Բութանիայի միությունը, որն ստեղծվել է 1864 թվականին (ուներ 27 եկեղեցի), 1866 թվականին Արևելյան միությունը՝ 4 շրջաններով (68 եկեղեցի), 1867 թվականին Կիլիկիո միությունը՝ 4 շրջաններով (65 եկեղեցի), 1868 թվականին Կենտրոնական միությունը՝ 3 շրջաններով (42 եկեղեցի): Օսմանյան կայսրությունում գործել են հայ ավետարանական բազմաթիվ կրթական օջախներ: Երկրորդական վարժարանների թիվը 1908 թվականին 35 էր, որոնցից 20-ը՝ աղջիկների համար: Մինչև Մեծ եղեռնը Թուրքիայում գործել են Խարբերդի (1859 թվականից), Մարաշի (1864 թվականից), Մարզվանի (1865 թվականից) ավետարանական-աստվածաբանական ճեմարանները: 1875-1915թթ. Թուրքիայում եղել է 7 քոլեջ (Այնթապ, 1876), Եփրատ քոլեջ (Խարբերդ, 1878), Աղջկանց կենտրոնական քոլեջ (Մարաշ, 1885), Անատոլիա քոլեջ (Մարզվան, 1886), Ս. Պողոս քոլեջ (Տարսոն, 1888), Ճենանյան քոլեջ (Կոնիա,1892), Միջազգային քոլեջ (Իզմիր, 1903) [3, էջ 701, 704]:

Հատկանշական է, որ ավետարանական միությունների ձևավորումը տեղի ունեցավ 19-րդ դարի 60-ական թվականներին, երբ սկսվեց ազգային հալածանքների նոր փուլ: Նաև խուսափելով ազգային բնույթի ճնշումներից՝ առաքելադավան հայերն ընդունում էին բողոքականություն: Թուրքական պետության ազգային քաղաքականության ուսումնասիրությունն այս առումով օգնում է հասկանալ հայերի շրջանում բողոքականության տարածման գործոնների պատճառահետևանքային կապը:

Սրա հետևանքով, բնականաբար, թուլացան Հայոց պատրիարքարանի իշխանությունը և ազդեցության ոլորտը: Օսմանյան կայսրության ազգային քաղաքականությունն այսպիսով ձգտում էր մասնատել հայ ժողովրդի հավաքական կացությունը: Սակայն կաթոլիկ և բողոքական հայերին առանձին ազգի կարգավիճակ տալն ունեցավ նաև բացասական ազդեցություն Թուրքիայի համար: Օգտագործելով կաթոլիկ և բողոքական համայնքների գոյությունը՝ օտար պետությունները միջամտում էին Թուրքիայի ներքին գործերին՝ իրենց հավատակիցների իրավունքները պաշտպանելու անվան տակ:

Պետք է նշել, որ հայ ավետարանականներն իրենց մասնակցությունն են բերել նաև 19-րդ դ. վերջին ծավալված հայոց ազատամարտին: «…Որպէս հայ զգացում ու հայ տիպարականութիւն կրող Աւետարանական Հայերը չէին

կրնար անտարբեր հանդիսատեսներ ըլլալ օրուայ բարբարոսութեանց որ տեղի կ'ունենար երկրին մէկ ծայրէն միւսը» [4, էջ 395]:

Ի տարբերություն Թուրքիայի, որտեղ պետական քաղաքականությունը, հպատակ հայության միասնականությունը պառակտելու նպատակով, հաճախ աջակցում էր միսիոներների գործունեությանը, Պարսկաստանը ձգտում էր ամրապնդել Հայ Առաքելական եկեղեցու դիրքերը՝ փորձելով խոչընդոտել միսիոներների ակտիվ գործունեությանը:

Չնայած դրան, հայ ավետարանականները նշանակալի գործունեություն են ծավալել նաև Պարսկաստանի հայաբնակ շրջաններում: Այս մասին ուշագրավ է Կարապետ Ատանալյանի վկայությունը. «Պարսկաստանի գլխավոր քաղաքներու, ինչպէս Համատանի, Սուլթանապատի, Պուրպուրոտի, Թէպրիզի, Ֆէրէջապատի, Քէնտիի, Լէյլահանի, Օրթիչամանի, Իսպահանի, Ղարախանի եւ մօտակայ փոքր բազմաթիւ գիւղերու մէջ Աւետարանական Եկեղեցին, հակառակ նիւթական անձկութեան եւ հովիւներու պակասութեան, հոս-հոն ջանացած է պահել քաջալերական վիճակի մէջ իրեն ժառանգած գործը» [4, էջ 211]:

Արևելահայերի շրջանում ավետարանական գաղափարները տարածվեցին 18-րդ դ. վերջին – 19-րդ դ. սկզբին՝ առաջին բողոքական անհատների և փոքր խմբերի միջոցով: Արևելահայերի մեջ ավետարանականության տարածմանը նպաստեցին Արևելյան Հայաստանում և Վրաստանի մի շարք շրջաններում բողոքականությանը և մկրտականությանը (բապտիզմ) հարող այդ ցաքուցրիվ փոքր համայնքներն ու անհատները, ինչպես նաև 19-րդ դ. 20-ական թվականներից Կովկասում հաստատված շվեյցարացի, գերմանացի, շվեդ բողոքական քարոզիչները:

Արևելահայ ավետարանական եկեղեցիներն առանձին և ինքնուրույն միավոր են: Սրա պատճառներից պետք է համարել Հայաստանի քաղաքական բաժանումը, ինչի արդյունքում արևելահայերը և արևմտահայերն անցան պատմական զարգացման յուրահատուկ ուղիներով: Արևելահայ ավետարանականներին, չնայած բազմաթիվ դիմումներին, մինչև 1914թ. Ռուսական կայսրությունը պաշտոնապես չճանաչեց որպես առանձին կրոնական համայնք (Ռուսական կայսրությունում պաշտոնապես գործել է միայն Լյութերական եկեղեցին): Լյութերական պաշտոնական եկեղեցին կատարել է փորձեր՝ իրեն ենթարկելու Կովկասի հայ ավետարանականներին: 1820-1890-ական թթ. Անդրկովկասում հայ ավետարանականության կենտրոնը Շամախին ու Ղարաբաղն էին: Անդրկովկասում մեծ համարում են ունեցել Շուշիի, Շամախիի, Թիֆլիսի հայ ավետարանական դպրոցներն ու ուսումնարանները:

19-րդ դ. կեսին հայ ավետարանական համայնքներ են եղել Երևանում, Վաղարշապատում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Թիֆլիսում, Բաքվում, Բաթումում, Սուխումում:

19-րդ դարի վերջերից, հատկապես 1900-ական թթ. սկզբներից, ավետարանականության կենտրոնն Արևելյան Հայաստանում դառնում է Երևանը:

1914թ. հունվարի 31-ին պաշտոնապես գրանցվել է Հայ Ավետարանական Արարատյան Միությունը, որը միավորում էր Երևանի, Վաղարշապատի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Նոր Բայազետի և նրանց շրջակա գյուղերի հայ ավետարանական համայնքները: 1917թ. հունիսի 28-ին Երևանում Արարատյան դաշտի հայ ավետարանականներն անցկացրել են իրենց տարեկան ժողովը, որին ներկա են եղել Արարատյան Միության, Վաղարշապատի, Կարսի, Ալեքսանդրապոլի և շրջակա գյուղերի 300 ներկայացուցիչ, Վանի, Բիթլիսի ավետարանականներ: Մտադրություն է եղել կազմել Կովկասի, Վանի, Բիթլիսի հայ ավետարանական եկեղեցիների միություն և միավորել կովկասահայ ու տաճկահայ ավետարանականներին: Չնայած ընտրվեց 11 հոգուց բաղկացած մի հանձնախումբ, բայց քաղաքական հանգամանքների բերումով դրա իրականացումն անհնարին է դարձել [5, էջ 6-7]:

Հայ ավետարանականները՝ արևմտահայ, թե արևելահայ, միշտ էլ իրենց համարել են Մայր Առաքելական եկեղեցու և միևնույն ազգի զավակներ, ջանացել են նպաստել ազգային ընդհանուր առաջընթացին, ապրել ազգի ընդհանուր ցավերով, իրենց մեջ կրել ու պահպանել համայն հայության արժեքները: Նրանք գործով ու խոսքով հավատարիմ մնալով այդ սկզբունքին՝ վաղուց ապացուցել էին իրենց գոյության իրավունքը, ապահովել իրենց տեղն ու դերը հայ հասարակության մեջ [6, էջ 129]: Սա, մասնավորապես, պայմանավորված էր այն հանգամանքով, որ հայ ավետարանականներն ազգային արժեքների հանդեպ մերժողական վերաբերմունք չորդեգրեցին, և հետզհետե նրանց շրջանում ավելի կարևորվեցին ազգային-քաղաքական խնդիրները [7, էջ 13]:

Ուշագրավ է հայ ավետարանականների գործունեությունը Հայաստանի Առաջին հանրապետությունում: 1918թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության հռչակումով հայ ավետարանական եկեղեցիները նոր կյանք վերապրեցին: 1919թ. Հայաստանում գործում էին բազմաթիվ փորձառու հովիվներ, քարոզիչներ, ավետարանիչներ: Առաջին հանրապետության շրջանի և խորհրդային առաջին տարիների Արարատյան Միության ավետարանական ամենահայտնի գործիչներից էր վերապատվելի Հակոբ Մուղդյանը, որն Արարատյան Միության կենտրոնական խորհրդի քարտուղարն էր: Նա 1915թ. մասնակցել է Վան-Վասպուրականի հերոսամարտին, կազմակերպել ու ղեկավարել է Հայոց ձորի ինքնապաշտպանական կռիվները: Վեր. Հ.Մուղդյանը 1918թ. վերջին դարձել է Հայաստանի Հանրապետության խորհր-

դարանի անդամ։ Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին հայ ավետարանականները ծավալել են բավական ակտիվ գործունեություն։ Իսկ հայ ավետարանականների առաջնորդներից մեկի խորհրդարանի անդամ լինելու հանգամանքը վկայում է պետական հանդուրժողական և լայնախոհ քաղաքականության մասին։ Դրանով, փաստորեն, կարևորվել է հայ ավետարանականության բնականոն մասնակցությունը Հայաստանի կառավարման խնդիրներին։ ՀՀ-ում հայ ավետարանականների թիվը կազմել է մոտ 3000 հոգի [5, էջ 7]։

Միությունը, որի կենտրոնը գտնվում էր Երևանում, գործել է մինչև 1928-ը։ Այն նախագահել է վերապատվելի Վահան Միքայելյանը։ 1923թ. Խորհրդային Հայաստանի կառավարությունը պաշտոնապես ճանաչել է հայ ավետարանականների Արարատյան Միությունը և գրանցել նրա կանոնադրությունը։

1920-ական թթ. Խորհրդային Հայաստանում կային կառավարության կողմից ճանաչված 15 համայնքներ և ևս 15 վայրեր, որտեղ թույլատրվում էր հոգևոր ժողովներ անել։ 1918-1930թթ. հայ ավետարանականների թիվը Հայաստանում եղել է 2500-3000, իսկ ողջ Անդրկովկասում՝ մոտ 3500-4000։ Գրեթե բոլոր համայնքներն ունեցել են եկեղեցիներ կամ աղոթատներ, կիրակնօրյա դպրոցներ, ձեռնադրված հովիվներ։ 1920-ական թթ. վերջից Խորհրդային Միությունում ուժեղացան հալածանքները կրոնական համայնքների նկատմամբ։ 1930 թվականից ԽՍՀՄ տարածքում, ի թիվս այլոց, արգելվել է նաև հայ ավետարանական եկեղեցիների գործունեությունը։

1946թ. փետրվարին Խորհրդային Հայաստանի կառավարությունը պաշտոնապես ճանաչեց Երևանի հայ ավետարանական քրիստոնյա-բապտիստների եկեղեցին, որին մաս կազմեց նաև Գյումրու ավետարանական-մկրտական եկեղեցու համայնքը։

Հայ Ավետարանական եկեղեցու կառուցվածքը

Այսօր հայ ավետարանականները գործում են ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում։ Հայ ավետարանականների հոգևոր, կրթական, բարեգործական և այլ մարմիններն ունեն կարևոր դերակատարություն ինչպես Հայաստանի հոգևոր դաշտում, այնպես էլ Սփյուռքի հայ համայնքների կենսագործունեության ծավալման մեջ։

Հայ Ավետարանական եկեղեցին չունի նվիրապետություն (կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ, թեմեր)։ Յուրաքանչյուր եկեղեցի ունի պաշտոնական երեք մարմին.

1. եկեղեցու հոգաբարձություն, որը հսկում է եկեղեցու ընդհանուր (մասնավորապես՝ հոգևոր) գործունեությունը,

2. խնամակալություն, որը հսկում է եկեղեցու տնտեսական գործերը և ունեցվածքը, նաև տալիս ամուսնության արտոնագիր,
3. դպրոցի հոգաբարձություն, որը հսկում է եկեղեցուն պատկանող դպրոցները: Ավետարանական եկեղեցիների կարևոր մասն են կազմում կիրակնօրյա դպրոցները, երիտասարդական քրիստոնեական կազմակերպությունները, տիկնանց և մշակութային միությունները, միասնական աղոթքի խմբերը:

1991 թվականից Հայաստանում սկսել է գործել Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության երևանյան գրասենյակը: 1994թ. հուլիսի 1-ից Հայ Ավետարանական եկեղեցին ստացել է ՀՀ-ում պաշտոնապես գործելու իրավունք: Հայաստանում կան Հայաստանյայց Ավետարանական 50 եկեղեցի և աղոթատեղի:

1995թ. մայիսին Երևանում ստեղծվեց Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միությունը: Իսկ 1995թ. օգոստոսին ստեղծվեց Հայաստանի, Վրաստանի, Արևելյան Եվրոպայի և Միջին Ասիայի Հայ ավետարանական միությունը (կենտրոնը՝ Երևան, նախագահ՝ վերապատվելի Ռընե Լևոնյան): Միությունն ընդգրկում է Հայաստանի հայ ավետարանական եկեղեցիների միությունը, Վրաստանի հայ ավետարանական եկեղեցիները[1], Սուխումի Հայ ավետարանական-մկրտական եկեղեցին, Սոչիի և Մոսկվայի Հայ ավետարանական եկեղեցիները, ինչպես նաև Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի ներկայացուցչությունը:

Հայաստանում ավետարանականների թվաքանակի մասին հստակ տվյալներ չկան, ուստի ստիպված ենք մոտավոր թվերի վրա հիմնվել: Ռընե Լևոնյանը նշում է, որ Հայ Ավետարանական եկեղեցու անդամների թիվը 25-30 հազար է, իսկ Հայաստանում ավետարանական ուղղվածության բոլոր եկեղեցիների հետևորդների թիվը հասնում է 100 հազարի [8]:

Սփյուռքում գործում են 3 հայ ավետարանական միություն.

1. Մերձավոր Արևելքի (ստեղծվել է 1924թ., կենտրոնը՝ Բեյրութ, ընդգրկում է Սիրիայի 11, Լիբանանի 6, Իրանի 3, Թուրքիայի 3, Հունաստանի 2, Եգիպտոսի 1 եկեղեցիները):
2. Ֆրանսիայի (ստեղծվել է 1927թ., կառավարությունը ճանաչել է 1946թ., կենտրոնը՝ Փարիզ, 14 եկեղեցի):
3. Հյուսիսային Ամերիկայի (ստեղծվել է 1971թ., կենտրոնը՝ Նյու Ջերսի, ընդգրկում է ԱՄՆ 26 և Կանադայի 4 հայ ավետարանական եկեղեցիները):

[1] Հայ Ավետարանական եկեղեցիներ կան Թբիլիսիում, Ախալցխայում, Ախալքալաքում, Բոլնիսում, Լիլոյում, Իսաինում: Վրաստանի հայ ավետարանականներն ակտիվ կապեր ունեն Վրաստանի Ավետարանական Քրիստոնյա-Մկրտականների Միության հետ:

Հայ ավետարանական եկեղեցիներ կան նաև Բուենոս Այրեսում, Սան Պաուլոյում, Մոնտեվիդեոյում, Լոնդոնում, Բրյուսելում, Սոֆիայում, Սիդնեյում [3, էջ 701]:

1980-ական թթ. սկզբին սփյուռքի 3 միությունները կազմեցին Հայ ավետարանական համաշխարհային խորհուրդը (կենտրոնը՝ Նյու Ջերսի, ԱՄՆ), որին հետագայում միացան ՀՀ 2 ավետարանական միությունները: Օրինաչափ կարելի է համարել այն հանգամանքը, որ Նյու Ջերսիում է գտնվում Հայ ավետարանական եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը: Սա վկայում է այն մասին, որ ԱՄՆ հայ բողոքական համայնքը կարևոր տեղ է զբաղեցնում հայ բողոքական իրականության մեջ: Խորհուրդը վարում է միությունների ընդհանուր գործերը: Երկու տարով ընտրվող նախագահը կարող է վերընտրվել ևս մեկ անգամ: Խորհուրդն ունի գործադիր մարմին, որի հրավիրած ժողովներին մասնակցում են Հայ Ավետարանական հինգ միությունների (Միջերկրական Արևելք, Ֆրանսիա, Եվրասիա, Հայաստան, Հյուսիսային Ամերիկա), Հայ Ավետարանչական ընկերակցության ներկայացուցիչները: Ժողովների ընթացքում քննարկվում են Հայ Ավետարանական եկեղեցիների գործունեությանը, հայապահպանությանը վերաբերող հարցեր: Ժողովի ընթացքում խորհուրդն ընտրում է դիվանի կազմը, որը բաղկացած է նախագահից, փոխնախագահից, քարտուղարից, գանձապահից և գործադիր տնօրենից[1]:

1918թ. հունիսի 7-ին ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Ուստր քաղաքում ստեղծվեց Հայ Ավետարանական եկեղեցիների ավետարանչական գործունեության կազմակերպիչ և գործադիր մարմինը, հայ ավետարանական առաջին և միակ միսիոներական կազմակերպությունը՝ Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերությունը (ՀԱԸ): ՀԱԸ-ն մասնաճյուղեր և գրասենյակներ ունի աշխարհի մոտ 20 երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում (1991 թվականից) և ԼՂՀ-ում (1995 թվականից): ՀԱԸ-ն ծրագրերը ՀՀ-ում և Արցախում իրականացնում է Ֆրանսիայի «Հույս Հայաստանի համար» կազմակերպության հետ համատեղ: Ծրագրերն ունեն երկու ուղղվածություն՝ բարեգործական և կրթական: ՀԱԸ կարևոր խնդիրներից են 1988 թվականի դեկտեմբերյան երկրաշարժից տուժած շրջանների վերականգնմանն աջակցելը, զոհված ազատամարտիկների և ծնողազուրկ երեխաների խնամակալությունը, աճող սերնդի քրիստոնեական դաստիարակությունը, բժշկական ծառայություններ մատուցելը, ինչպես նաև գյուղատնտեսության, շինարարության, կրթության բնագավառներում հայկական երկու պետություններին աջակցելը:

Հայ Ավետարանական եկեղեցին իր բարեգործական, կրթական, հրատարակչական, սոցիալական ծառայություններն իրագործում է մոտ մեկ

[1] Հայ ավետարանական եկեղեցիների համաշխարհային խորհրդի գործադիր մարմնի հերթական ժողովը (17 հոկտեմբերի 2008) - http://www.azad-hye.net/media/r1/armenian-evangelical-world-council.htm:

տասնյակ բարեգործական կազմակերպությունների միջոցով, որոնք ղեկավարվում են կամ Հայ Ավետարանական եկեղեցու կողմից, կամ Հայ առաքելական ու Հայ կաթոլիկ եկեղեցական մարմինների հետ համատեղ: Նշանավոր են Ջինիշյան, Փիլիպոսյան, Հայ ավետարանական ընկերային ծառայության կենտրոնը (Լոս Անջելես), Հայ ազգային բուժարանը (Լիբանան), Հայ ծերանոցը (Հալեպ) և այլն:

Կարևոր նշանակություն ունի Սփյուռքի հայ ավետարանականների կապերի ամրապնդումը Հայաստանի հետ: Այս համագործակցությունը նպաստում է ինչպես հայ ավետարանականների և հայ առաքելականների փոխգործակցությանը, այնպես էլ Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Հատկապես կարևորվում է ՀՀ-ԼՂՀ-Սփյուռք կապերի ամրապնդմանն ուղղված միասնական գործողությունների իրականացումը: Անշուշտ, այս առումով կարևոր է տարբեր երկրներում գործող առանձին Հայ բողոքական համայնքների գործունեությունը: Սրանք, ունենալով բազմաթիվ յուրահատկություններ, բողոքական հայության մաս են կազմում, որն էլ հանդիսանում է համայն Հայության անբաժանելի մասը:

Հայ Ավետարանական եկեղեցին Հայաստանյայց Առաքելական եկեղեցին համարել և համարում է Մայր եկեղեցի, ընդունում է Հայ եկեղեցու սուրբ հայրերին, պաշտամունքների ժամանակ օգտագործում է հայ միջնադարյան շարականներ, Հայ Առաքելական եկեղեցու հոգևորականների հետ կատարում է եկեղեցական համատեղ արարողություններ:

Չի կարելի թերագնահատել հայ կաթոլիկների և հայ ավետարանականների քաղաքակրթական կարևոր նշանակությունը: Մասնավորապես, վերջիններս ապահովեցին տարբեր մշակութային արժեքների հետ շփումներ, որոնք ունեցան կարևոր դերակատարություն հայոց համար: Բացի այդ, նրանց գործունեությունը նպաստեց Հայության խնդիրների արծարծմանն օտար շրջանակներում [2, էջ 369]:

Հայ Ավետարանական եկեղեցին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հիմնադիր անդամներից է, գործակցում է ամերիկյան, եվրոպական, մերձավորարևելյան բողոքական եկեղեցիների հետ:

Հայ ավետարանականների կրթօջախները

Հայ Ավետարանական եկեղեցու ձևավորման պահից սկսած՝ ստեղծվեցին ավետարանական կրթօջախներ՝ նախակրթարաններ, երկրորդական վարժարաններ, քոլեջներ, դպրոցներ: Այդ կրթական հաստատություններում ուսանում են բոլոր այն հայերը, ովքեր ցանկանում են՝ առանց դավանական խտրությունների: Ներկայումս գործում են 18 հայ ավետարանական կրթական հաստատություն (նախակրթականից մինչև բարձրագույն): Հայ ավետարանա-

կան կրթական հաստատությունները կարևոր դեր ունեն Լիբանանում և Սիրիայում, ինչպես նաև Հայաստանում, Հունաստանում, Իրանում և ԱՄՆ-ում: Այդ կրթական հաստատություններից առանձնանում է հատկապես Հայկազյան համալսարանը, որը Սփյուռքի հայկական միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է՝ հիմնադրված 1955 թվականին[1]: Նշանավոր են նաև Մերձավոր Արևելքի Աստվածաբանական դպրոցը (Բեյրութ), Հալեպ քոլեջը (Սիրիա) և 1997 թվականի ապրիլին Երևանում բացված Հայաստանի ավետարանական աստվածաբանական ակադեմիան:

Հայ ավետարանականների մամուլը

Հայ Ավետարանական եկեղեցին հրատարակել է պարբերականներ. 1839-1854թթ. Զմյուռնիայում ընդմիջումներով լույս է տեսել հայ լրագրության պատմության մեջ առաջին աշխարհաբար թերթը՝ «Շտեմարան պիտանի գիտելեացը», որին փոխարինեց «Ավետաբերը» (Կ.Պոլիս, հայերեն և հայատառ թուրքերեն): Այժմ լույս են տեսնում «Բանբեր» (1925 թվականից, Փարիզ), «Պատանեկան արձագանք» (1936 թվականից, Բեյրութ), «Ջանասեր» (1937 թվականից, Բեյրութ), «Լը Լյումինյոն» (Մարսել, ֆրանսերեն), «Լրաբեր» (1965 թվականից, Նյու Ջերսի) ամսագրերը, Հյուսիսային Ամերիկայի Հայ ավետարանական միության «Ֆորում» (1975 թվականից) և «Ձիաց մեր հանապազօրդ» (1991 թվականից) պարբերականները, «Հայկազյան հայագիտական հանդես» (1970 թվականից, Բեյրութ) տարեգիրքը, «Հայաստանյայց ավետարանական եկեղեցի» (1997 թվականից, Երևան) եռամսյա հանդեսը [3, էջ 704]:

Եզրակացություններ

- Այսօր հայ բողոքականների խնդիրներն ունեն կարևոր նշանակություն Հայության ինքնակազմակերպման գործընթացներում: Բողոքական հայերի շրջանում հայկական ազգային արժեքների պահպանումն ու ազգային ինքնագիտակցության ամրապնդումը հրատապ են Հայության միասնական հասարակական-քաղաքական համախմբման համար:
- Հայ բողոքականների և Հայ Առաքելական եկեղեցու հարաբերությունների դրական, շարունակական զարգացման արդյունքում հնարավոր է ապահովել քրիստոնեական այս երկու ուսմունքների հայ ներկայացուցիչների առավել բարյացակամ փոխըմբռնումն ու համագործակցությունը:
- Հայ բողոքականներ-հայ առաքելականներ հարաբերություններից զատ կարևոր նշանակություն ունի նաև հայ բողոքականների և Հայության

[1] Մանրամասն տե՛ս www.haigazian.edu.lb

տարադավան մյուս շերտերի համագործակցությունը, որը, դրսևորելով զարգացման որոշ միտումներ, ընդարձակման, խորացման ու ամրապնդման մեծ ներուժ ունի:

- Բողոքական հայության խնդիրները կարևորվում են նաև սփյուռքահայության ազգապահպանության հիմնախնդրի համատեքստում: Հայ բողոքականները պետք է պահպանեն իրենց ազգային դիմագիծը, չօտարվեն առաքելադավան հայրենակիցներից: Այս հարցում կարևոր են երկու կողմերի մոտեցումները, որոնք պետք է հիմնված լինեն ազգային միասնության, հանդուրժողականության, ընդհանուր արժեքների ընդգծման, համատեղ կենսագործունեության ծավալման վրա:
- Հայ բողոքականությունը մեծ քաղաքակրթական արժեք է ներկայացնում, որի գնահատումը և առավելագույն ներգրավումը Հայության առջև ծառացած մարտահրավերների լուծման մեջ 21-րդ դարի հրամայականն են:

Հունիս, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Րաֆֆի,* Ինչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ, Երկերի ժողովածու, 9-րդ հատոր, Երևան, 1958:
2. *Եղիայեան Բ.,* Հայ կաթոլիկ եւ Աւետարանական յարանուանութեանց բաժանումը ԺԹ. Դարուն, Անթիլիաս, 1971:
3. Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003:
4. *Ատանալեան Կ.Պ.,* Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցւոյ, Ֆրեզնո, 1952:
5. *Ղազարյան Ա.,* Հայ Ավետարանական համայնքներն Արևելյան Հայաստանում մինչև խորհրդային կարգերի հաստատումը (համառոտ ակնարկ), Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի, 1 (53), 2010:
6. *Ղազարյան Ա., Լևոնյան Ռ.Ն.,* Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999:
7. *Քասունի Ե.,* Հայ Աւետարանականութեան նպաստները հայ ժողովրդի կրօնական կեանքին, Պէյրութ, 1946:
8. «Հայոց աշխարհ», 27.06.2009:

АРМЯНСКИЕ ПРОТЕСТАНТЫ

Тигран Ганаланян

Резюме

В статье говорится о распространении протестантизма среди Армянства, его причинах, предпосылках и специфике. Вслед за освещением деятельности миссионеров приводится история формирования Армянской протестантской церкви, возникновения армянских протестантов и их деятельности в Восточной и Западной Армении. Затем представлена история армянских протестатов в течение трех Республик Армения. Уделяется важное место деятельности протестантов в Диаспоре. Помимо духовной, освещается также образовательная, общественная, благотворительная, культурная деятельность протестантов. Отмечается важность этой деятельности в РА, Арцахе и Диаспоре, сотрудничество протестантов с другими сегментами Армянства. Армянские протестанты являются неотъемлемой частью Армянства и их вовлечение в решение стоящих перед Армянством вызовов имеет важнейшее значение.

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

*Վահրամ Հովյան**

Լիբանանի հայ բողոքականներն այդ երկրի հայ համայնքի դավանանքային երեք շերտերից մեկն են՝ առաքելական և կաթոլիկ հայերի հետ միասին: Դեռևս 19-րդ դարում Լիբանանում հաստատված հայ բողոքականների համայնքը ստվարացել է 1915թ. Հայոց ցեղասպանության հետևանքով, երբ Օսմանյան կայսրության այլ բնակավայրերից բազմաթիվ հայերի հետ միասին այս երկիր գաղթեցին նաև բողոքական հայերը: Խոսելով Մերձավոր Արևելք հայ բողոքականների գաղթի մասին՝ վերապատվելի Կ.Ատանալյանը գրում է. «Թուրքիոյ հայաջինջ գազանութիւններէ յետոյ վերապրողներէ ոմանք ապաստանեցան այս արաբական երկիրները... կազմեցին աղօթարան, ժողովարան, եկեղեցիներ եւ միութիւններ... Միայն Պէյրութ խռնուած են բիւրաւոր վերապրողներ – 125 քաղաք եւ գիւղերէ, 4 միութիւններէ եւ 100-է աւելի եկեղեցիներէ գաղթականներ» [1, էջ 353]:

Հայ բողոքականները ներկայումս կազմում են Լիբանանի հայ համայնքի մոտ 5%-ը՝ 4-5 հազ. մարդ: Նրանք կենտրոնացած են հիմնականում Բեյրութում և նրա թաղամասերում՝ Բուրջ Համուդում, Էշրեֆիեում, ինչպես նաև Այնճար քաղաքում: Բեյրութն ինչ-որ առումով կարելի է համարել Մերձավոր Արևելքի հայ բողոքականության կենտրոնը, քանի որ այստեղ է գտնվում Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միությունը:

Քանի որ բողոքական հայերը մեծ թիվ են կազմում ընդհանուր լիբանանաբնակ բողոքականների շրջանում, Լիբանանի խորհրդարանում բողոքական համայնքի համար նախատեսված միակ պատգամավորական տեղը կամ մանդատը ժամանակ առ ժամանակ զբաղեցնում է ազգությամբ հայ պատգամավոր: Այդ կերպ Լիբանանի խորհրդարանում հայերին հատկացվող պատգամավորական մանդատների քանակը հասնում է 7-ի, քանի որ հայ առաքելականներն ու կաթոլիկները նույնպես հանդիսանում են առանձին համայնքներ, որոնց նույնպես հատկացվում են պատգամավորական տեղեր՝ համա-

* «Նորավանք» ԳԿՀ փորձագետ:

պատասխանաբար 5 և 1 (ընդհանուր՝ 6) մանդատ համամասնությամբ[1]:

Լիբանանահայ բողոքական համայնքի ընդհանուր վիճակը ներկայացնելու համար կարելի է առանձնացնել հետևյալ հատկանիշները.

1. Բողոքական հայությունը Լիբանանում բավական կազմակերպված, կենսունակ և ակտիվ է: Այդ կենսունակության արտահայտությունն առաջին հերթին նրա կազմակերպչական կառույցների ակտիվ գործունեությունն է:
2. Լիբանանահայ բողոքականությունը կտրված չէ առաքելական և կաթոլիկ հայությունից, այլ նրանց հետ միասին կազմում է օրգանական ամբողջություն: Դրա վկայություններն են.
   - բողոքական կառույցների՝ ընդհանուր համայնքային, ինչպես նաև համազգային նշանակություն ունեցող գործունեությունը,
   - միջդավանական համագործակցությունն ինչպես առաքելական, այնպես էլ կաթոլիկ հայերի հետ բազմաթիվ համազգային ծրագրերի ու խնդիրների լուծման շուրջ:

Հայ բողոքականների կազմակերպչական կառույցները Լիբանանում

Ինչպես բողոքական հայությանն ընդհանրապես, լիբանանահայ բողոքականությանը նույնպես բնորոշ է, բացի կրոնական կառույցներից, նաև կրթական, բարեգործական և այլ կառույցների առատությունը: Լիբանանահայ բողոքական կառույցները, ըստ գործունեության ուղղվածության, բաժանվում են 4 հիմնական խմբի.

- հոգևոր-եկեղեցական
- սոցիալական
- կրթական
- տեղեկատվական:

Հոգևոր-եկեղեցական կառույցներ: Լիբանանահայ համայնքում բողոքական եկեղեցիները հիմնադրվել են 1920-ականներից՝ տեղի հայ բողոքական համայնքի ստվարացմանը զուգընթաց: Առաջին բողոքական եկեղեցին՝ Բեյրութի Առաջին Հայ ավետարանական եկեղեցին, հիմնադրվել է 1922թ.: Ներկայումս հայ ավետարանական եկեղեցիների թիվը Լիբանանում հասնում է 6-

[1] Լիբանանի պետական համակարգը հիմնված է կրոնադավանանքային հիմքով բնակչության շերտավորվածության վրա: Յուրաքանչյուր դավանանքային խումբ, ըստ իր տեսակարար կշռի, խորհրդարանում ստանում է համապատասխան քանակությամբ պատգամավորական մանդատ: Այս սկզբունքի համաձայն՝ հայերին հատկացվում է նաև երկու նախարարական պաշտոն Լիբանանի կառավարությունում:

ի [2, p. 13]: Լիբանանահայ բողոքականության առաջնորդն է վերապատվելի Փոլ Հայտոսթյանը, որը Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության կենտրոնական կոմիտեի նախագահն է:

Սոցիալական կառույցներ: Սոցիալական հաստատություններ լիբանանահայ բողոքականների կողմից հիմնվել են կարիքի թելադրանքով՝ Հայոց ցեղասպանությունից փրկված և Լիբանանում ապաստանած հայության օժանդակելու նպատակով: Դրանք ներկայումս ծավալում են բարեգործական, առողջապահական, կրթադաստիարակչական և այլ գործունեություն: Լիբանանահայ բողոքականության նշանավոր սոցիալական կառույցներից են Հայ ավետարանական սոցիալական ծառայության կենտրոնը, Հայ ազգային առողջարանը, Լիբանանի և Սիրիայի Հայ Ավետարանական եկեղեցիների քրիստոնեական Ջանից միությունը և այլն:

Կրթական հաստատություններ: Լիբանանի բողոքական հայերի կրթական հաստատությունների թվում ամենանշանավորը Բեյրութի Հայկազյան համալսարանն է, որը միակ բուհն է ողջ Սփյուռքում: Հայկազյան համալսարանը հիմնվել է 1955թ.՝ որպես վարժարան, որն աստիճանաբար զարգանալով՝ 1966թ. վերածվել է բուհի: Հայկազյան համալսարանի չորս ֆակուլտետներում, բացի կրոնագիտությունից, ուսուցանվում են արվեստի և գիտության վերաբերյալ բազմաթիվ առարկաներ[1]: Համալսարանի նախագահը լիբանանահայ բողոքականության հոգևոր առաջնորդ, Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության կենտրոնական կոմիտեի նախագահ, վերապատվելի Փոլ Հայտոսթյանն է:

Լիբանանի հայ բողոքական դպրոցները, որոնց թիվը հասնում է 7-ի, ունեն մեծ հեղինակություն ոչ միայն բողոքական հայերի, այլև ողջ լիբանանահայության շրջանում: Դրանք գտնվում են ինչպես Բեյրութում, այնպես էլ Լիբանանի այլ հայաշատ բնակավայրերում [2, p. 13-14]:

Տեղեկատվական կառույցներ: Լիբանանահայ բողոքականության տեղեկատվական կառույցները տպագիր հրատարակություններն են: Դրանք են Բեյրութում լույս տեսնող «Պատանեկան արձագանք», «Ջանասեր» ամսագրերը և «Լույս» եռամսյա հանդեսը: Տպագիր հրատարակությունների թվում կարևորությամբ առանձնանում է Հայկազյան համալսարանի կողմից 1970-ից հրատարակվող Հայկազյան հայագիտական հանդես տարեգիրքը: (Լիբանանի հայ բողոքական կառույցներն ամփոփ ներկայացված են *Հավելվածում*):

---

[1] Տե՛ս http://www.haigazian.edu.lb/Academics/Pages/UndergraduatePrograms.aspx

Բողոքական կառույցների համազգային նշանակություն ունեցող գործողությունները

Լիբանանի հայ բողոքական կառույցների գործունեությունը հաճախ չի սահմանափակվում նեղ բողոքական համայնքի շրջանակներում, այլ ընդգրկում է ողջ լիբանանահայ համայնքը: Հենց այդ համազգային նշանակություն ունեցող գործողություններն էլ վկայում են Լիբանանի բողոքական Հայության՝ ընդհանուր հայ համայնքի օրգանական մասը լինելու մասին: Համազգային նշանակություն ունեցող գործողություններն ընդգրկում են հետևյալ ոլորտները.

- կրթական
- սոցիալական
- տեղեկատվական:

Կրթական ոլորտում բողոքական կառույցների գործունեության համազգային բնույթը երևում է երկու հանգամանքով.

1. Սովորողների դավանանքային կազմը: Լիբանանի հայ բողոքական կրթական կառույցներում ուսանում են ոչ միայն հայ բողոքականները, այլ նաև առաքելականներն ու կաթոլիկները: Այս տեսակետից առանձնանում է առաջին հերթին Հայկազյան համալսարանը, որի գործունեությունը չի սահմանափակվում անգամ ողջ լիբանանահայ համայնքի շրջանակներում: Համալսարանն ամեն տարի ուսանողներ է ընդունում աշխարհի 20 երկրներից՝ անկախ դավանանքային պատկանելությունից[1]:

Հայկազյան համալսարանի գործունեության համահայկական բնույթի առումով վերապատվելի Փոլ Հայտոսթյանը նկատում է. «Հայկազեանը իւրայատուկ հաստատութիւն մըն է, ակադեմական լրջութեամբ, ստեղծած է ընկերային ու բարոյական, կրթական մթնոլորտը՝ որ իր դրական ներդրումը կ'ունենայ մեր ժողովուրդին վրայ: Հայկազեանը կարեւոր կը սեպէ դաստիարակել սերունդները եւ ցոյց տալ որ ոչ՛ համայնքային եւ ոչ՛ ալ յարանուանական ու քաղաքական, կուսակցական թէ տնտեսական մակարդակի վրայ խտրութիւն կարելի է: Այս հաստատութիւնը դարբնոց մըն է ուր մենք պիտի սորվինք որ բոլորս մէկ իրականութեան, կեանքի եւ ժողովուրդի մը մասնիկն ենք, եւ այնպիսի առանձնաշնորհեալ իրավիճակի մէջ կը գտնուինք որ մեր դռները կը բանանք ծառայելու մեր շրջակայ ժողովուրդներուն, կրօններուն, բոլոր տեսակի մարդոց»[2]:

[1] Այն հանգամանքը, որ Հայկազյան համալսարանի ուսանողության շուրջ կեսն այլազգիներ են, վկայում է համալսարանի միջազգային նշանակության, ինչպես նաև միջազգային մակարդակով բարձր հեղինակության մասին:

[2] Հարցազրոյց՝ Հայկազեան համալսարանի նախագահ դոկտ. վերապատուելի Փօլ Հայտօսթեանի հետ http://www.keghart.com/Moskofian_Haigazian:

Ինչ վերաբերում է դպրոցներին, լիբանանահայերի համար դպրոցների ընտրության հարցում տարբերություն չկա: Այդ է պատճառը, որ Լիբանանի հայկական դպրոցներում, այդ թվում նաև՝ բողոքական, «... սովորում են ինչպես լուսավորչական, այնպես էլ կաթոլիկ և ավետարանական ուղղության հետևողների զավակներ»[1]:

Հայ բողոքական դպրոցներում, բացի բողոքականներից, նաև Հայության այլ դավանանքային շերտերին պատկանող երեխաների կրթությունն ավանդական երևույթներից է Լիբանանում: Այս տեսակետից հետաքրքիր վիճակագրական տեղեկություններ է հաղորդում Մերձավոր Արևելքի Հայ ավետարանական կիրակնօրյա վարժարանների մասին 1947-48թթ. տեղեկագիրը: Համաձայն տեղեկագրի՝ թվով 29 վարժարաններում, որոնցից 14-ը գտնվում էին Լիբանանում, 2700 աշակերտների միայն 54%-ն էր ավետարանական: 41%-ը լուսավորչական էր, իսկ մնացած 5%-ը պատկանում էր այլ հարանվանություններին [1, էջ 358-359]:

2. Կրթական ծրագրերը: Հայ բողոքական կրթական հաստատությունները, բացի կրոնական գիտելիքներից, իրենց սաներին ուսուցանում են նաև գիտելիքներ ընդհանուր հայագիտությունից: Հայկազյան համալսարանի հայագիտության ամբիոնում ուսումնասիրվում և ուսուցանվում են հայ գրականություն, պատմություն, քաղաքականություն ու մշակույթ: Այդ առումով խոսելով համալսարանի դերի ու նշանակության մասին՝ վերապատվելի Փոլ Հայտոսթյանը նկատում է. «...Հայկազեանի նման հաստատութիւններուն տրուած է այդ ծանր պարտականութիւնը՝ վերագտնելու այն ինչ որ կորսուեցաւ Մեծ Եղեռնի Ցեղասպանութեան, տեղահանութեան, հողերը պարպելու, բարոյազրկելու այդ մեր երկար ու դաժան տարիներու ընթացքին»[2]:

Համալսարանի կրթական ծրագրերի շնորհիվ նրա շրջանավարտները դառնում են ոչ միայն նեղ բողոքական համայնքի, այլև ողջ լիբանանահայ համայնքի մասշտաբով գործիչներ:

Վերոհիշյալ երկու հանգամանքը, փոխկապակցված լինելով, ապահովում են Լիբանանի հայ բողոքական կրթական հաստատությունների գործունեության համազգային բնույթը: Մասնավորապես, հայագիտական կրթական ծրագրերով է պայմանավորված այն, որ Լիբանանի հայ բողոքական կրթական հաստատություններում ուսանելու են գալիս հայեր՝ անկախ իրենց դավանանքային պատկանելությունից:

[1] Լիբանան. Սփյուռքի սիրտը և շտեմարանը http://wap.report.am/?lang=AM&id=1286

[2] Հարցազրոյց՝ Հայկազեան համալսարանի նախագահ, դոկտ. վերապատուելի Փօլ Հայտօսթեանի հետ http://www.keghart.com/Moskofian_Haigazian

Հայկազյան համալսարանի համահայկական բնույթը ցույց է տալիս նաև այն, որ համալսարանին նյութապես օժանդակում են բազմաթիվ հայ բարերարներ՝ անկախ իրենց դավանանքային պատկանելությունից: Այս առումով ուշագրավ դիտարկում է անում վերապատվելի Փոլ Հայտոսթյանը. «...մարդ, եթէ Հայկազեանին իր նպաստը բերէ, ամբողջ հայ ժողովուրդի պատիւին իր նպաստը բերած կ'ըլլայ»[1]:

Այսպիսով, Լիբանանի հայ բողոքական կրթական հաստատությունները բողոքական են միայն այնքանով, որքանով պատկանում են Հայ Ավետարանական եկեղեցուն: Այլ տեսանկյուններից՝ Հայկազյան համալսարանի նախագահ, վերապատվելի Փոլ Հայտոսթյանի խոսքերով. «Մենք զմեզ կը նկատենք մէկ մասը այն ամբողջութեան՝ որ կը կոչուի հայ ժողովուրդ, որուն ծառայութեան մէջ ենք»[2]: Անդրադառնալով Հայկազյան համալսարանի կերպարի խնդրին՝ վերապատվելին նշում է. «Պէտք է Հայկազեանը ներկայացուի որպէս անհրաժեշտութիւն մը Հայաստանին եւ հայութեան համար: Անշուշտ հայութիւնը եւ Հայաստանը Հայկազեանի համար կարեւոր են, բայց պէ́տք է ըլլայ նաև հակառակը՝ որպէս կարեւոր գործօն մը հայկական իրականութեան մէջ, այնպիսի հաստատութիւն մը՝ որ ամէն մարդ պատիւ զգայ անոր գոյութեամբ»[3]:

Սոցիալական ոլորտի հայ բողոքական հաստատությունները ժամանակին ստեղծվել են ծանր վիճակում հայտնված լիբանանահայության կարիքները հոգալու համար: Ուստի, ակնհայտ է, որ դրանց գործունեությունն ի սկզբանե չէր կարող սահմանափակվել միայն բողոքականության շրջանում, այլ պետք է ընդգրկեր ողջ լիբանանահայությունը՝ անկախ դավանանքային պատկանելությունից: Այսպիսով, այդ սոցիալական կառույցները, ստեղծված լինելով լիբանանահայ բողոքականության՝ Հայ Ավետարանական եկեղեցու կողմից և պատկանելով վերջինիս, ծառայում են ամբողջ լիբանանահայ համայնքին:

Տեղեկատվական ոլորտում բողոքական հայերի կողմից հրատարակվող պարբերականներում տեղ են գտնում ոչ միայն բողոքական համայնքին, այլև ամբողջ լիբանանահայությանը, ինչպես նաև համազգային խնդիրներին առնչվող հրապարակումներ: Համազգային նշանակությամբ աչքի է ընկնում առաջին հերթին Հայկազյան հայագիտական հանդեսի գործառնությունը, որում շոշափվում են հայագիտության տարբեր հիմնահարցեր:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

Միջդավանական համագործակցությունը

Չնայած դավանանքային տարբերություններին՝ Լիբանանի Հայ առաքելական, կաթոլիկ և բողոքական հարանվանությունները սերտորեն ինտեգրված են միմյանց և կազմում են մեկ միասնական ամբողջություն: Այդ ինտեգրվածության հիմքում ընկած է երկու միավորիչ հանգամանք.

1. Ընդհանուր էթնիկ պատկանելության զգացումը: Լիբանանահայության երեք դավանանքային շերտերում էլ առկա է ընդհանուր էթնիկ պատկանելության զգացում, որը խարսխված է բարձր ազգային ինքնագիտակցության վրա: Ավելին, ինչպես բողոքական հայերի պարագայում ընդհանրապես, լիբանանահայ բողոքականների պարագայում էլ ազգային պատկանելության զգացումը գերակայություն ունի կրոնական պատկանելության զգացման նկատմամբ: Հայ բողոքականներն իրենց ընկալում և զգում են առաջին հերթին ոչ թե բողոքական կամ քրիստոնյա, այլ՝ հայ: Այդ մասին լավագույնս վկայում է այն, որ երբ վերապատվելի Փոլ Հայտոսթյանին մի առիթով հարցրել են՝ քրիստոնյա է, թե մուսուլման, նա պատասխանել է, որ հայ է[1]:

Լիբանանի հայ երեք դավանանքային համայնքներին մեկ ամբողջության մեջ միավորող բարձր ազգային ինքնագիտակցության հիմքում, ի թիվս այլ գործոնների, կարևոր տեղ ունի Հայոց ցեղասպանության պատմական հիշողությունը: Հայոց ցեղասպանության կոլեկտիվ հիշողությունը, որը սփյուռքահայերի համար գլխավոր կռվանն է հայրենիքից հեռու իրենց ազգային ինքնությունը պահպանելու համար, միաժամանակ միավորում է նաև Սփյուռքի հայ համայնքների, տվյալ դեպքում՝ լիբանանահայության դավանանքային երեք շերտերին: Ազգագրագետ Հ.Մարությանի դիտարկմամբ՝ «...Էթնիկ ընդհանրության կամ ազգի անդամների միջև կիսվող հիշողությունը հանդես է գալիս իբրև դրանց անդամներին կապող, նրանց հարաբերություններն ու գործողությունները կառուցող միջոց» [3, էջ 9]: Այստեղ կարևոր դեր է խաղում նաև այն, որ կոտորածների ու Ցեղասպանության տարիներին դավանանքային հիմքով տարբերության չի դրվել հայերի մեջ, և «...զրեթէ առանց խտրականութեան՝ ոչնչացուել են ինչպէս հայ առաքելականները, այնպէս էլ հայ կաթոլիկներն ու աւետարանականները» [4]:

2. Հայ համայնքի անվտանգության ապահովումը լիբանանյան բարդ և անկայուն հասարակական-քաղաքական մթնոլորտում: Ընդհանուր մարտահրավերները սովորաբար միավորիչ ազդեցություն են ունենում՝ հանգեցնելով ուժերի համախմբմանը: Լիբանանահայության երեք դավանանքային շերտերի համար ընդհանուր մարտահրավեր է այն բարդ ու անկայուն միջավայրը,

[1] *Арье Гут,* Армянская община Ливана встала на сторону «Хезболлы» http://www.araspel.org/showthread.php?p=4528

որում նրանք գտնվում են: Լիբանանահայերը գիտակցում են, որ իրենք պետք է ստորադասեն բոլոր գաղափարական սկզբունքները՝ հանուն հայ համայնքի պաշտպանության[1]:

Հայ առաքելական, կաթոլիկ և բողոքական համայնքների կողմից մեկ ընդհանուր օրգանական ամբողջության՝ Լիբանանի հայ համայնքի մեջ միավորվածության (կոնսոլիդացիայի) արտահայտություն ու խորհրդանիշ է Հայ Առաքելական, Կաթոլիկ և Ավետարանական եկեղեցիների համագործակցությունը զանազան համազգային ծրագրերի իրականացման ոլորտում:

Հայ Ավետարանական եկեղեցու համագործակցությունը մյուս դավանանքային խմբերի հետ նույնպես ընդգրկում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներ.

- սոցիալական
- գիտակրթական
- քաղաքական:

Սոցիալական ոլորտն առաջնային տեղ ունի Լիբանանի հայության միջդավանական համագործակցության բնագավառում: Նման համագործակցության վառ օրինակ է 1923թ. Հայ Առաքելական և Ավետարանական եկեղեցիների կողմից Մաամլթեյնում հայ ազգային բուժարանի հիմնումը, որը հետագայում՝ 1937թ. տեղափոխվեց Ազունիե: Ազգային հիվանդանոցի հիմնադրումը պայմանավորված էր Հայոց ցեղասպանության արդյունքում Լիբանան գաղթած հայության շրջանում տարածված հիվանդությունները (թոքախտ) բուժելու անհրաժեշտությամբ: Բուժարանի հիմնադրման գործում մեծ ավանդ ունեցած հայ գործիչների թվում առանձնակի շեշտվում են Մեծի Տանն Կիլիկիո Սահակ Խապայան Վեհափառի և Վեր. Ենովք Հատիտյանի անունները: Ներկայումս ազգային հիվանդանոցը Հայ Առաքելական և Ավետարանական եկեղեցիների համատեղ սեփականությունն է և, լինելով Լիբանանի առաջատար բուժհաստատություններից մեկը, շարունակում է իր ազգանպաստ առաքելությունը:

Հիվանդանոցը ղեկավարվում է հոգաբարձուների խորհրդի կողմից, որն ունի ութ անդամ՝ չորս առաքելական և չորս ավետարանական: Համաձայն կանոնադրության՝ հոգաբարձուների խորհրդի ատենապետի պաշտոնը մշտապես զբաղեցնում է Հայ Առաքելական եկեղեցու, իսկ փոխատենապետինը՝ Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչը: Միևնույն ժամանակ, ատե-

[1] Նույն տեղում:

նադպիրը միշտ առաքելական է, իսկ զանձապահը՝ ավետարանական[1]: Փաստորեն, սա այն դեպքն է, երբ միջդավանական համագործակցությունը կրում է ինստիտուցիոնալ բնույթ:

Գիտակրթական ոլորտում միջդավանական համագործակցությունը դրսևորվում է.

- բողոքական կրթական հաստատություններում առաքելականների և կաթոլիկների ակտիվ գործունեությամբ,
- մեկ համայնքի կողմից կազմակերպված միջոցառումներին մյուսների ակտիվ մասնակցությամբ:

Բողոքական կրթական հաստատություններում առաքելական և կաթոլիկ հայերի ակտիվ գործունեության տեսանկյունից կրկին ուշագրավ է Հայկազյան համալսարանի փորձը: Չնայած համալսարանը պատկանում է Հայ Ավետարանական եկեղեցուն, և նրա նախագահն էլ Լիբանանի հայ բողոքականների հոգևոր առաջնորդն է, այնուամենայնիվ, կրթօջախի վարչական աշխատողների և դասախոսական կազմում մեծ թիվ են կազմում նաև Հայ Առաքելական և Կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչները: Ինքը՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը, Հայկազյան համալսարանում կանոնավոր կերպով հանդես է գալիս դասախոսություններով՝ նվիրված հայագիտական, աստվածաբանական և էկումենիզմի թեմաներին: Համալսարանում դասավանդող Հայ Կաթոլիկ եկեղեցու նշանավոր դեմքերից է Ա.Կռանյանը, որը Հայկազյան հայագիտական հանդեսի գլխավոր խմբագիրն է[2]:

Միջդավանական համագործակցության ու շփումների դրսևորում են նաև կապերը Լիբանանի հայկական երեք դավանանքային համայնքներին պատկանող դպրոցների միջև: Այդպիսի կապերի առկայության մասին վկայում է Բեյրութի Հայ Կաթողիկե պատրիարքարանի Գևորգ Հարպոյան վարժարանի տնօրեն Ռիթա Պոյաճյանը. «...կապեր ունինք Հ.Բ.Ը.Մ.ի եւ Ազգային Վարժարաններու տնօրէնութեանց, Հայ Աւետարանական դպրոցներու քարտուղարութեան հետ»[3]:

Մեկ համայնքի կողմից կազմակերպվող միջոցառումներին մյուսների ակտիվ մասնակցության ուշագրավ օրինակ է Անթիլիասում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության և Երևանի Մատենադարանի համատեղ գիտաժողովը՝ «Կիլիկյան Հայաստանի մշակույթը» խորագրով, որին ակտիվ մասնակցու-

[1] Հայ ազգային բուժարան, Ազունիէ, Լիբանան http://www.keghart.com/Moskofian_Azunie:

[2] Ливанские эскизы, http://aniv.ru/view.php?numer=16&st=2

[3] Տիկին Ռիթա Պոյաճեան, Պէյրութի Հայ Կաթողիկէ պատրիարքարանի՝ Գէորգ Հարպոյեան վարժարանի տնօրէնուհի. «Ամէն հայ ծնողք՝ որ կ'ուզէ իր զաւակը հայ պահել՝ միակ միջոցը հայկական վարժարան ուղարկելն է» http://www.keghart.com/Moskofian_Boyajian

թյուն ցուցաբերեցին Լիբանանի Հայ Կաթոլիկ և Ավետարանական եկեղեցիները[1]: Սա ևս մեկ փաստ է, որը վկայում է կաթոլիկ և բողոքական հայերի՝ ընդհանուր հայկական քաղաքակրթական դաշտի մասը լինելու մասին:

Ուշագրավ է նաև 2005թ. Հայկազյան համալսարանի 50-ամյակին նվիրված տոնակատարությանը Հայ Առաքելական և Կաթոլիկ եկեղեցիների մասնակցությունը՝ ի դեմս Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերյանի և Հայ կաթողիկե պատրիարքության ընդհանուր փոխանորդ Վարդան եպս. Աշգարյանի [5]:

Մեկ այլ ուշագրավ օրինակ է 2009թ. հոկտեմբերի վերջին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունում կազմակերպված համագումարը՝ նվիրված Ադանայի ջարդերի 100-ամյակին, որտեղ միջդավանական համագործակցությունը դրսևորվեց տարածաշրջանային մակարդակով: Համագումարին, որին մասնակցում էին Մերձավոր Արևելքի երկրների հայ համայնքների ներկայացուցիչները, իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին նաև հայ կաթոլիկ և ավետարանական եկեղեցիները ի դեմս համապատասխանաբար՝ Անդրանիկ վարդապետ Կռանյանի և վերապատվելի Հարություն Սելիմյանի[2]:

Մեկ համայնքի կողմից կազմակերպվող միջոցառումներին մյուսների մասնակցության ամենաթարմ օրինակներից է 2010թ. ապրիլի 29-ին Հայկազյան համալսարանի նոր մասնաշենքի՝ «Ժառանգության շենքի» *(Heritage Building)* բացման արարողությունը, որը տոն էր ոչ միայն ամբողջ լիբանանահայության, այլև լիբանանյան հասարակության համար ընդհանրապես [6, էջ 21-22]:

Քաղաքական ոլորտում միջդավանական համագործակցությունը դրսևորվում է համազգային խնդիրների և մարտահրավերների դիմագրավման ուղղությամբ համատեղ դիրքորոշումների, ինչպես նաև քայլերի ձեռնարկման մեջ: Լիբանանահայ համայնքը, անկախ իր ներքին շերտավորվածությունից՝ կուսակցական կամ դավանանքային սկզբունքներով, միասնական է այնպիսի համազգային նշանակություն ունեցող խնդիրներում, ինչպիսիք են Հայոց ցեղասպանության ճանաչումը, Հայ դատը, Արցախյան հակամարտությունը, թուրքական նկրտումներին դիմակայելը և այլն:

Այդ միասնականության խորհրդանիշն է Բիկֆայայում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին կառուցված հուշարձանը, որի վրայի գրությունը մատնանշում է, որ այն կանգնեցվել է ողջ լիբանանահայ համայնքի կողմից[3]: Սրանից հետևում է, որ ողջ լիբանանահայությունը՝ անկախ կուսակցական կամ դավանանքային պատկանելությունից, միասնական է Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում:

[1] Ливанские эскизы, http://aniv.ru/view.php?numer=16&st=2:

[2] Հարություն Սելիմյանը Սիրիայի հայ ավետարանականների համայնքապետն է, ինչպես նաև Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի նախագահը:

[3] Armenians in Lebanon http://www.horizonworld.com/vb/showthread.php?t=63

Քաղաքական հարցերում Լիբանանի երեք հայկական կրոնական համայնքների միասնականության ակնառու դրսևորում էր 2006թ. օգոստոսին Հայ Առաքելական, Կաթոլիկ և Ավետարանական եկեղեցիների համատեղ հայտարարությունը՝ ընդդեմ Լիբանանում թուրքական խաղաղապահ ուժերի տեղակայման[1]:

Բացի տեղի Հայ առաքելական և կաթոլիկ համայնքների հետ սերտ ինտեգրվածությունից, Լիբանանի հայ բողոքական համայնքը սերտորեն ինտեգրված է նաև Մերձավոր Արևելքի այլ հայ բողոքական համայնքների հետ: Լիբանանի հայ ավետարանական համայնքը մաս է կազմում Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության, որի կենտրոնը, ինչպես արդեն նշվեց, գտնվում է Բեյրութում:

Սակայն Լիբանանի հայ բողոքական համայնքի ինտեգրվածությունը չի սահմանափակվում միայն ազգային մակարդակով: Այն հասնում է նաև միջազգային կամ վերազգային մակարդակի՝ դրսևորվելով տարածաշրջանային ինտեգրման ձևով: Մասնավորապես, Լիբանանի հայ ավետարանական համայնքը Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության միջոցով անդամակցում է Մերձավոր Արևելքի ավետարանական եկեղեցիների միությանը և վերջինիս շրջանակներում սերտորեն ինտեգրված է տարածաշրջանի այլ ավետարանական համայնքների հետ: Այդ ինտեգրվածությունը դրսևորվում է նախ և առաջ կազմակերպական-կառուցվածքային հարթությունում: Մերձավոր Արևելքի ավետարանական եկեղեցիների միության շրջանակներում պատասխանատու պաշտոններ են ստանձնում նաև Լիբանանի հայ ավետարանական համայնքի ներկայացուցիչները: Մասնավորապես՝ 2010թ. հունվարի 11-13-ը Լիբանանում (Բեթանյա, Հարիսսա - *Bethanya, Harissa*) տեղի ունեցած Մերձավոր Արևելքի ավետարանական եկեղեցիների միության 6-րդ ընդհանուր ժողովում Լիբանանի հայ ավետարանական համայնքի ներկայացուցիչ, Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության նախագահ, վերապատվելի Մկրտիչ Կարագյոզյանն ընտրվեց Մերձավոր Արևելքի ավետարանական եկեղեցիների միության գործադիր կոմիտեի անդամ[2]:

Այսպիսով, Լիբանանի հայ բողոքականների կազմակերպչական կառույցների համազգային նշանակություն ունեցող գործունեությունը, ինչպես նաև միջդավանական ակտիվ համագործակցությունը ցույց են տալիս, որ

[1] Տե՛ս Армяне Ливана против включения турецких сил в состав миротворческого контингента http://www.regnum.ru/news/690305.html :

[2] 6th General Assembly of the Fellowship of the Middle East Evangelical Churches http://www.chanitz.org/2010/01/6th-general-assembly-of-fellowship-of.html:

«...Լիբանանում այլևս սուր չէ ո՛չ նախկին «դաշնակ-հնչակ-ռամկավար» և ո՛չ էլ «առաքելական-կաթոլիկ-ավետարանական» պայքարը»[1]: Հետևաբար, լիբանանահայ բողոքականները, կազմելով բավական ակտիվ և կենսունակ համայնք, միաժամանակ սերտորեն ինտեգրված են Լիբանանում բնակվող մնացյալ Հայության հետ և միասին կազմում են մեկ միասնական օրգանական ամբողջություն՝ լիբանանահայ համայնքը:

Հունիս, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Ատանալեան Կ.,* Յուշարձան Հայ աւետարանականաց եւ աւետարանական եկեղեցւոյ, Ֆրեզնո, 1952:
2. AMAA Directory 2009: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide.
3. *Մարության Հ.,* Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, Երևան, 2006:
4. Ալիք, 01.11.2009:
5. Ազգ, 06.07.2005:
6. Լուսաբաց, 15.05.2010:

АРМЯНСКАЯ ПРОТЕСТАНТСКАЯ ОБЩИНА ЛИВАНА

Ваграм Овян

Резюме

Современная община армян-протестантов в Ливане, сформировавшаяся, по большому счету, в результате Геноцида армян, составляет примерно 5% от общей численности ливанских армян – 4-5 тыс. человек. Будучи довольно жизнеспособной и активной, она за счет своих организационных структур разворачивает бурную деятельность в духовно-церковной, образовательной, социальной и информационной сферах.

[1] Լիբանան. Սփյուռքի սիրտը և շտեմարանը http://wap.report.am/?lang=AM&id=1286:

Среди ливанских армян-протестантов достаточно развито национальное сознание, что предотвращает их изоляцию от армянской общины этой страны. Развитое национальное сознание, в основе которого важное место занимает историческая память о Геноциде, объединяет ливанских армян-протестантов с местными адептами ААЦ и армянскими католиками в единую общность – армянскую общину Ливана. Помимо нацинального сознания, объединяющим фактором для трех армянских конфессиональных групп является также сложная и нестабильная общественно-политическая ситуация в этой стране.

Свидетельством интегрированности армянской протестантской общины в ряды ливанского армянства является распространение деятельности ее организационных структур на всю армянскую общину, независимо от конфессиональных отличий. Деятельность этих структур зачастую не ограничивается узкими рамками протестантской общины, но охватывает также армян-католиков и адептов ААЦ, а порой имеет общенациональное значение: например, в случае с университетом Айказян – единственным вузом во всей Диаспоре. Подтверждением того, что армяне-протестанты – неотъемлемая часть ливанского армянства, является также тесное межкофессиональное сотрудничество с армянской апостольской и католической общинами.

Հավելված

Լիբանանի հայ բողոքական կազմակերպչական կառույցները[1]

Եկեղեցիներ

Կառույց	Ղեկավար	Հասցե	Կապի միջոցներ
Armenian Evangelical Church	Pastor: Rev. Raffi Messerlian	Ainjar, Bekaa, Lebanon P.O.Box 66 Zahle, Bekaa, Lebanon	Tel: (961-8) 620-628, aessa@dm.net.lb
Armenian Evangelical Church	Pastor: Rev. Soghomon Kilaghbian	Ashrafieh, Beirut, Lebanon P.O.Box 80758 Bourdj Hammoud, (Beirut) Lebanon	Tel: (961-1) 442-596, badveli@arevchas.com
First Armenian Evangelical Church	Pastor: Rev. Hagop Sarkissian	Mexique Street, Beirut, Lebanon P.O.Box 11-2508 Beirut, Lebanon	Tel: (961-1)349-817/343-182, Fax/Tel: 349-815, faec@terra.net.lb
Armenian Evangelical Emmanuel Church	Pastor: Rev. Hovhannes Svajian	Nor Amanos (Dora), Lebanon P.O.Box 80169 Bourdj Hammoud, (Beirut) Lebanon	Tel: (961-1) 241-636, Fax: (961-1) 241-637 aeecna@gmail.com
Armenian Evangelical Church	Pastor: Rev. Megrditch Karagoezian	Nor Marash, Bourdj Hammoud Lebanon	Tel: (961-1) 261-239
Syriac Evangelical Church	Pastor: Rev. Selim Sabounji	P.O.Box 11-0377 Riad El Solh 1107 2040 Beirut, Lebanon	Tel.: (96-1) 680-724 Sabounji@hotmail.com

[1] Հիմնական աղբյուրը՝ AMAA Directory 2009: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, p. 3, 13-14.

Կրթական հաստատություններ

Կառույց	Ղեկավար	Հասցե	Կապի միջոցներ
Haigazian University	President: Rev. Dr. Paul Haidostian	Mexique St., Kantari, Beirut, Lebanon P.O.Box 11 1748 Riad El Solh 1107 2090 Beirut, Lebanon	Tel/Fax: (961-1) 739-412, 353-010/1/2, 349-230/1 Pres. Office (961-1) 349-230, Tel./Fax: 350-926 Pres. Res. (961-1) 739-375 www.haigazian.edu.lb President@haigazian.edu.lb
Near East School of Theology	President: Dr. Mary Mikhael	Sourati Street, Hamra, Beirut, Lebanon P.O.Box 13 5780 Chouran, Beirut, Lebanon	Tel: (961-1) 346 708, 354 194, 349-901 Fax: (961-1) 347-129 nest.adm@inco.com.lb
Armenian Evangelical Y. & M. Philibosian College	Principal: Zaven Messerlian	Mexique St., Kantari, Beirut, Lebanon P.O.Box 11-3672 Riad El Solh Beirut, Lebanon	Tel: (961-1) 349 816, 863 592 Fax: (961-1) 751-469 a_e_c@cyberia.net.lb
Armenian Evangelical Central High School	Principal: Mrs. Maral Deyirmenjian	Ashrafieh, Beirut, Lebanon P.O.Box 80758 Bourdj Hammoud, Lebanon	Tel: (961-1) 442 594 Fax: (961-1) 562-155 principal@aechs.com
Armenian Evang'l Shamlian Tatigian Secondary School	Principal: Badveli Hrayr Cholakian	Nor Marash, Bourdj Hammoud, Lebanon P.O.Box 80907 Bourj Hamoud, Lebanon	Tel: (961-1) 261-749, 240-995 Fax: (961-1) 240-996 AESSBH@terra.net.lb hrayrch@terra.net.lb
Armenian Evangelical Secondary School	Principal: Rev. Raffi Messerlian	Anjar, Bekaa, Lebanon P.O.Box 66 Zahle, Lebanon	Tel: (961-8) 620-629 aessa@dm.net.lb
Armenian Evangelical P. & E. Torossian Middle School	Principal: Seta Karagoezian	Nor Amanos (Dora), Bourdj Hammoud, Lebanon P.O.Box 80169 Bourdj Hammoud, Lebanon	Tel: (961-1) 265-521 Fax: (961-1) 241-637 aetorosian@gmail.com
Armenian Evangelical Guertmenian School	Principal: Sahag Dedeyan	Mar Mekhayel - Hadjin, Beirut, Lebanon	Tel: (961-1) 442 278 gertmenian@hotmail.com

Սոցիալական կառույցներ

Կառույց	Ղեկավար	Հասցե	Կապի միջոցներ
Armenian Evangelical Social Service Center	Social Worker: Rita Lao Mangilikian	Trad, Bourdj Hammoud, Lebanon P.O.Box 11 0377 Riad el Solh 1107-2040 Beirut, Lebanon	Tel: (961-1) 263 155 AE-SAC@terra.net.lb
Armenian National Sanatorium (Azounieh, Lebanon)	Director: Tigran Boyajian	P.O.Box 11 0377 Riad el Solh 1107-2040 Beirut, Lebanon	
CAHL (Centers for Armenian Handi-capped in Lebanon)	Director: Kevork Karaboyadjian	Trad, Bourdj Ham-moud, Lebanon P.O.Box 80250 Bourdj Hammoud, Lebanon	Tel: (961-1) 260 533/4, 266 822, 484 175, (961-3) 291-509 Fax: (961-1) 249-479 Cahl@cyberia.net.lb
Christian Endeavor Union of Armenian Evang'l Churches of Syria and Lebanon	Chairman: Rev. Raffi Messerlian	P.O.Box 11-0443 Beirut, Lebanon	Tel: (961-1)443 547 Fax:(961-1) 565-629 aecelb@terra.net.lb
Jinishian Memorial Program	Director: Seta Pamboukian	Trad, Bourdj Ham-moud, Lebanon P.O.Box 11-0437 (Code No. 55) Beirut, Lebanon	Tel/Fax: (961-1) 268 020 Tel: (961-1) 261 008, 499 749 jmpleban@terra.net.lb
KCHAG (Christian Endeavor Summer Camp)		Beit Meri, Lebanon P.O.Box 11-0443 Beirut, Lebanon	

Տեղեկատվական կառույցներ

Կառույց	Ղեկավար	Հասցե	Կապի միջոցներ
Հայկազյան հայագիտական հանդես	գլխավոր խմբագիր՝ Անդրանիկ վարդապետ Կռանյան	Mexique St., Kantari, Beirut, Lebanon P.O.Box 11 1748 Riad El Solh 1107 2090 Beirut, Lebanon	
Badanegan Artsa-kank	Director: Mrs. Rosette Alemian	P.O.Box 11-0377 Riad el Solh 1107-2040 Beirut, Lebanon	Tel: (961-1) 565-719 publications@uaecne.org
Chanasser	Director: Mrs. Rosette Alemian	P.O.Box 11-0377 Riad el Solh 1107-2040 Beirut, Lebanon	Tel: (961-1) 565-719 publications@uaecne.org
Luys	Director: Mrs. Rosette Alemian	P.O.Box 11-0377 Riad el Solh 1107-2040 Beirut, Lebanon	Tel: (961-1) 565-719 publications@uaecne.org

Տարածաշրջանային ղեկավար կառույց

Կառույց	Ղեկավար	Հասցե	Կապի միջոցներ
Union of the Arme-nian Evangelical Churches in the Near East (UAECNE)	President: Rev. Megrditch Karagoezian, Chair Central Committee of UAECNE: Rev. Soghomon Kilaghbian,	P.O.Box 11-0377 Riad El Solh 1107 2040 Beirut, Lebanon	Tel: Res. (961-1) 444-439, (961-1) 739-375 Union (961-1) 565-628 HU Off. (961-1) 350-926 Fax: (961-1) 565-629 www.uaecne.org uaecne@cyberia.net.lb

ՀԱՅԵՐԻ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՈՒՄԸ 1894-96թթ.

*Մհեր Աբրահամյան**

1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմում Օսմանյան կայսրությունը պարտություն է կրում, և Բեռլինյան կոնգրեսում նրան պարտադրվում է բարեփոխումներ իրականացնել նաև ոչ մուսուլման ժողովուրդների իրավունքների և վիճակի հետ կապված: Բարեփոխումները վերաբերում էին նաև Օսմանյան կայսրության քաղաքացի հայերին, սակայն դրանք հիմնականում մնացին թղթի վրա, և ի հայտ եկած Հայկական հարցը գերտերությունների համար դարձավ օսմանյան կառավարության վրա ազդելու միջոց: Թուրքական կողմն, իր հերթին, սկսեց ավելի գործնական քայլեր մշակել Հայկական հարցը հիմնովին ու «վերջնական» լուծելու ուղղությամբ և տարբեր նահանգներում կազմակերպեց հայերի զանգվածային կոտորածներ: Օսմանյան կայսրությունում նախկինում արդեն տեղ գտած կոտորածները 1894-96թթ. ստացան ավելի մշակված և կազմակերպված բնույթ: Տարբեր աղբյուրներ փաստում են, որ կոտորածները կազմակերպվել են հենց պետության կողմից:

Համիդյան կոտորածներին զուգահեռ, օսմանյան իշխանությունները գործի դրեցին ի սկզբանե պետական քաղաքականության տեսք ստացած բռնի կրոնափոխության մեթոդը. տարբեր աղբյուրների վկայությամբ՝ այդ տարիներին հազարավոր հայերի իսլամ պարտադրվեց:

Պետք է նշել, որ բռնի իսլամացման գործընթացներն Օսմանյան կայսրությունում ավելի ինտենսիվացան հատկապես կոտորածների, ցեղասպանությունների ժամանակ, և 1894-96թթ. համիդյան ջարդերը բացառություն չէին: Այդ տարիներին օսմանյան կառավարությունը գործի է դրել ինչպես բռնի պարտադրման, այնպես էլ «կամովին» իսլամ ընդունելու մեխանիզմները: Հենց այդ տարիներին են արձանագրվել բազմաթիվ հայերի դիմում-խնդրագրեր «կամովին» իսլամ ընդունելու վերաբերյալ [1, էջ 11]: Դրանք ակնհայտորեն արվել են մահից խուսափելու համար, սակայն օսմանյան իշխանությունները ներկայացրել են որպես ինքնակամ երևույթ:

Հայտնի է, որ 1894-96թթ. կոտորածները տեղի ունեցան մի քանի նահանգում, որի ընթացքում զոհվեցին շուրջ 300 հազար հայեր [2, էջ 167]: Սպանդի

---

* ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի ասպիրանտ:

նահանգներից էր նաև Դիարբեքիրը: Հենց այստեղ է արձանագրվել կրոնափոխության ամենամեծ ալիքներից մեկը: Նոյեմբերի սկզբին ծայր է առել կոտորածը, և արդեն նոյեմբերի 10-ին Դիարբեքիրի նահանգապետ Էսիլ փաշան հաղորդում է կենտրոնական իշխանություններին, որ որոշ հայկական գյուղերի բնակիչներ ցանկանում են իսլամ ընդունել, և Բարձր Դռնից փորձում է ճշգրտել իր հետագա գործողությունները: Նոյեմբերի 14-ին կենտրոնից եկած հրահանգում նշված էր՝ առայժմ մերժել կրոնափոխության դիմումները, իսկ դրանք կրկնվելու դեպքում ընդառաջել միայն մի մասին [3, p. 352]: Սակայն ընդհանուր բռնության և անպաշտպանության մթնոլորտն այնպիսին էր, որ շատ հայեր որպես փրկության վերջին միջոց դիմում էին կրոնափոխության և անգամ չէին էլ սպասում իշխանությունների դրական պատասխանին: Այսպես, 1895թ. նոյեմբերի 12-ին Մամյուրեթյուլազիզ վիլայեթի Փերի գյուղում հայերն իրենք իրենց թլպատել էին [3, pp. 354-355]: 1895թ. նոյեմբերի 27-ին Բիթլիսի միանգամից 3՝ Մերզան, Էրզիֆ, Թանիմավերան գյուղերի կանայք և տղամարդիկ դիմում են կրոնափոխության [3, p. 355]: Բացի հիշյալ «կամովին» իսլամացումներից, կրոնափոխություն էր կատարվում նաև մահվան սպառնալիքի տակ: Ակն գավառում իր բարբարոսությամբ հայտնի Էմին Իբրահիմ Չավուշը և Հոմեր Էֆենդին, խաղաղ բնակչությանը կոտորելուց բացի, մահվան սպառնալիքի ներքո պարտադրել են իսլամ ընդունել: Ժողովրդին մզկիթներում հավաքելով՝ թլպատել և ստիպել են հրապարակավ իսլամ ընդունել: Նրանց գլխավորած հրոսակները հարձակվել են Վանք, Կռանի, Խոռոջ և Էնեհկինք գյուղերի վրա, սպանել բնակչության մի մասին, իսկ ողջ մնացածներին բռնի իսլամացրել են: Բանըզ գյուղի հայերը 1896թ. կոտորածներից հետո մեծ մասամբ իսլամացել են, նույնը կատարվել է Քեռթյուն գյուղում, իսկ Ուրֆայում իսլամացել է 400-500 հայ [4, էջ 288]:

Հարկ է շեշտել, որ կրոնափոխությունը ոչ միշտ էր ազատում մահից, և եղել են դեպքեր, երբ պարտադրելով իսլամ՝ այնուհետև նրանց կրկին աքսորել կամ կոտորել են: Կրոնափոխության ալիքի ծավալմանը զուգահեռ, օսմանյան իշխանությունները փորձում էին հիմնավորումներ և պատճառներ փնտրել, և բացի նրանից, որ նշում էին, թե հայերը կամովին են փոխում կրոնը, նաև տարածվում էր այն վարկածը, թե կենտրոնական իշխանություններն այս ամենի հետ կապ չունեն, և եթե անգամ արձանագրվել են բռնի կրոնափոխության դեպքեր, ապա մեղավորը քրդերն են, որոնց և հայերի միջև տարատեսակ խնդիրներ կան [3, p. 348]:

Ավելորդ չէ նշել, որ ինչպես հայերի կոտորածները, այնպես էլ բռնի կրոնափոխության գործընթացը գտնվում էին արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչությունների ուշադրության կենտրոնում: Նրանք փորձում էին միջամտել: Նաև այդ հանգամանքի շնորհիվ օսմանյան կառա-

վարությունը կազմում է հանձնաժողով, որը, իբր թե, պետք է ուսումնասիրեր կրոնափոխության պատճառները և գործընթացը: Հանձնաժողովի կազմում էին երկու պաշտոնյա Հալեպից և բրիտանական դեսպանատան թարգմանիչ Ֆիցմաուրիսը: Հանձնաժողովը հանդիպում է կրոնափոխված համայնքի ղեկավարների հետ, որոնք պնդում էին, որ վերջին իրադարձությունները վախով էին լցրել իրենց կյանքը, և այդ պատճառով էլ իսլամացել են: Նրանք նաև նշել են, որ չեն վերադառնա իրենց կրոնին այնքան ժամանակ, քանի դեռ վտանգը լիովին չի վերացել [3, p. 364]: Սակայն ուշագրավ է այն հանգամանքը, որ հիշյալ կառավարական հանձնաժողովը համայնքի ղեկավարներին ստիպում է ստորագրել մի փաստաթուղթ, որով նրանք վստահեցնում են, որ ճնշման տակ չեն կրոնափոխվել:

Սակայն հանձնաժողովի անդամ, բրիտանական դեսպանատան թարգմանիչ Ֆիցմաուրիսը հավաստիացնում էր, որ զանգվածային ջարդերը և կրոնափոխությունները կենտրոնական կառավարության և տեղական ղեկավար մարմինների կազմակերպածն է եղել: Նա նշում է, որ մուսուլմանական ամբոխը գոռում էր՝ փադիշահը հրամայել է, որ հայերը պետք է կոտորվեն, և ոչ մի քրիստոնյա չպետք է մնա իրենց երկրում [3, p. 365]: Ֆիցմաուրիսը պնդում էր, որ զանգվածային ջարդերը և իսլամացումն իրականացվել են սուլթանի հրամանով, սակայն նա ոչ մի ուղիղ կարգադրություն չի արել:

Ինչպես բոլոր կոտորածների ժամանակ, այս անգամ ևս կրոնափոխության առաջնային թիրախներից էին կանայք և երեխաները: Կոտորածներից հետո սկսվեց մուսուլմանների տներում պահվող առևանգված հայ կանանց և երեխաներին ազատելու գործընթացը, որում մեծ դեր ունեին օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունները: Դիարբեքիրում Ֆրանսիայի հյուպատոս Գուստավ Մեյրիերը գրում է, որ իրենք վերադարձրել են 6 կին, որոնցից ոչ մեկը չէր ցանկանում վերադառնալ իր ընտանիք: Նրանք վախենում էին մահից և գիտեին, որ ոչ մի պաշտպանություն չէին գտնի [3, p. 360]: Կա նաև հարցի մեկ այլ կողմ, որ առևանգված կանայք իրենք չէին ցանկանում վերադառնալ, քանի որ լուրջ կասկածներ և մտավախություն ունեին իրենց ազգակիցների կողմից ընկալվելու հարցում: Բրիտանական կառավարությունը ևս նախաձեռնում է բռնի իսլամացած հայ կանանց որոնում: Հյուպատոս Մեյրիերը պատվիրակություն է ուղարկում Տիգրանակերտի շրջակա գյուղերը՝ գտնելու և փրկելու առևանգված հայ կանանց, բայց անհաջող: Հյուպատոսը տալիս է ավելի քան 100 անուն, սակայն պատվիրակությունը վերադառնում է միայն մեկ կնոջ ու աղջկա հետ: Մուսուլմանները թաքցնում էին իրենց զոհերին, անգամ ուղարկում էին այլ վայրեր [3, p. 362]:

Համիդյան կոտորածների ժամանակ հայերի բռնի կրոնափոխությունն ուներ մեկ այլ յուրահատկություն ևս. այն է՝ կոտորածների հուժկու ալիքից հե-

տո նաև նպաստավոր պայմանների առկայության պարագայում բռնի իսլամացված հայերի մի մասը վերադարձավ իր ակունքներին: Բռնությունների դադարելուց հետո, նաև օտարեկրյա դիվանագետների ճնշմամբ իշխանությունների տված թույլտվությամբ որոշ թվով հայեր վերընդունեցին քրիստոնեություն, սակայն վախի պայմաններում նրանցից շատերը բացահայտ չգնացին այդ քայլին: Այդ մարդկանց մի մասն ավելի ուշ բռնեց լիովին ուծացման ճանապարհը և հեռացավ քրիստոնեադավան ազգակիցներից: Անդրադառնալով կոտորածների ժամանակ հայերի կրոնափոխությանը և, մասնավորապես, դրան հետևած քրիստոնեություն վերընդունելու գործընթացին՝ թուրք հետազոտող Սելիմ Դերինգիլը որոշ հարցադրումներ է անում. *«Իսլամացվածների ո՞ր մասը վերադարձավ Առաքելական քրիստոնեության, որքա՞ն մարդ մնաց մուսուլման, ի՞նչ ճակատագիր ունեցան նրանք 1915-ին: Արդյոք նրանք կապ պահպանեցի՞ն իրենց նախկին համայնքի հետ»* [3, p. 371]:

Բռնի կրոնափոխված հայերի՝ հետագայում քրիստոնեությանը վերադառնալու երևույթը, անշուշտ, չէր վրիպել օսմանյան ղեկավարների աչքից, և դրան հաջորդած 1909թ. Ադանայի և արդեն 1915թ. Հայոց ցեղասպանության ժամանակ իշխանությունները հստակ զգուշացնում էին, որ հայերը իսլամ ընդունում են լոկ մահից ազատվելու համար, իսկ այնուհետև կրկին վերադառնում են քրիստոնեության:

Ամփոփելով՝ նշենք, որ 1894-1896թթ. կոտորածների ժամանակ տեղի ունեցած բռնի իսլամացումը եղել է ցեղասպանական գործողություն և պետության իրականացրած թուրքացման քաղաքականության բաղկացուցիչ մասն էր: Այն, միևնույն ժամանակ, նախահիմք հանդիսացավ հետագայում թուրքացման, իսլամացման ավելի բուռն քաղաքականության շարունակման համար:

Հունիս, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Մելքոնյան Ռ.,* Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, 2010:
2. *Սաֆրաստյան Ռ.,* Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Երևան, 2009:
3. *Selim Deringel,* “The Armenian question is finally closed”: Mass conversion of Armenians in Anatolia during Hamidian massacre of 1895-1897 comperative studies in society and history, 2009.
4. *Պողոսյան Ս.,* Հայոց ցեղասպանության պատմություն, Երևան, 2008, հ. I:

НАСИЛЬСТВЕННАЯ ИСЛАМИЗАЦИЯ АРМЯН В 1894-96гг.

Мгер Абрамян

Резюме

Ассимиляция немусульманских народов в Османской империи была одним из важных элементов государственной политики, для осуществления которой зачастую применялась насильственная смена вероисповедания – исламизация. Этот метод особенно активно использовался в ходе периодически происходящих в Османской империи погромов, и армянские погромы 1894-96гг. не были исключением: в этот период помимо сотен тысят убитых армян была зафиксирована и насильствеенная исламизация десятков тысяч армян. По сути, это было геноцидальное явление, которое, в дальнейшем усовершенствовавшись, применялось и в ходе Геноцида армян 1915-23гг.

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Արսեն Պետրոսյան**

1. Թեմայի հրատապությունը

1.1 Ժողովրդագրական լարվածություն

Անկախության ժամանակահատվածում Հայաստանից արտագաղթած բնակչության թիվը համարժեք է Մեծ եղեռնի զոհերի թվին՝ 1.500.000[1]: Նույն ժամանակահատվածում բնակչության բնական հավելաճը կազմել է շուրջ 450.000:

1990թ. 23,6-ի փոխարեն ամուսնության միջին տարիքը ներկայումս 26,4 է, իսկ պտղաբերության գործակիցը (մեկ կնոջ երեխաների միջին թիվը) 2,6-ից նվազել է 1,4-ի: Ընդ որում, գյուղում պտղաբերության գործակիցը հավասարվել է քաղաքի ցուցանիշին՝ սկսած 2007 թվականից (1,4)[2]: Այս թվերից բացի, առավել մտահոգողն ընդհանուր ժողովրդագրական և սոցիալական իրավիճակն է, մշտապես առկա արտագաղթը:

Աղյուսակ 1

Հիմնական ժողովրդագրական ցուցանիշները 1990, 2004-2009թթ.

հազար մարդ

Ցուցանիշ	1990	2004	2005	2006	2007	2008	2009
Բնակչություն, որից	**3574,5**	**3215,8**	**3219,2**	**3222,9**	**3230,1**	**3238,0**	**3250,8**
աշխատունակ տարիքից ցածր	1152,0	758,2	731,2	700,3	673,4	653,9	---
աշխատունակ տարիքի	1974,3	2036,9	2079,9	2119,1	2169,9	2198,6	---
Ծնվածներ	**79,8**	**37,5**	**37,5**	**37,6**	**40,1**	**41,2**	**44,4**
Մահացածներ	21,9	25,7	26,4	27,2	26,8	27,4	27,5
Ամուսնություններ	**28,2**	**17,0**	**16,6**	**16,9**	**18,1**	**18,5**	**18,7**
Ամուսնալուծություններ	4,3	2,0	2,5	2,8	2,9	3,0	2,8
Միգրացիոն մնացորդ	_---	**-7,7**	**-7,8**	**-6,7**	**-6,4**	**-5,4**	**-4,4**

* Տնտեսագիտության թեկնածու:

[1] *Խոջաբեկյան Վ.Ե.,* «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի նախաշեմին», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2002, էջ 304-309: www.dmr.am, www.bachtoarmenia.am (ՀՀ ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայություն):

[2] Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2009, ՀՀ ԱՎԾ, էջ 19:

Բարձրանում է առաջին անգամ ամուսնացող թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց միջին տարիքը, ընդ որում, ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական վայրերում: Որպես այս երևույթի տրամաբանական շարունակություն առկա է երեխայի ծննդյան պահին մոր միջին տարիքի աճի միտումը, իսկ ծնելիության տարիքային գործակիցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին նվազում է առավել երիտասարդ տարիքի խմբի կանանց ծնելիությունը, փոխարենը՝ աճում է 30-39 տարիքային խմբի կանանց ծնելիության գործակիցը: 2004-2009թթ. ունենք ինչպես ամուսնությունների, այնպես էլ ամուսնալուծությունների աճ, սակայն, ցավոք, ոչ համարժեք՝ 40% ամուսնալուծությունների աճ ամուսնությունների 10% աճի դիմաց:

Աղյուսակ 1-ում բերված միգրացիայի մնացորդը, ըստ Ազգային վիճակագրական ծառայության, ամբողջական չէ, քանզի հիմնված լինելով ոստիկանության բաժիններում հաշվառվող և հաշվառումից դուրս եկող անձանց տվյալների վրա, չի արտացոլում միգրացիոն տեղաշարժերի իրական պատկերը: Փոխարենը ներկայացնում ենք արտաքին ուղևորաշրջանառության համախառն ծավալներն ըստ ՀՀ սահմանային անցման կետերում տարվող ուղևորների հաշվառման տվյալների:

Աղյուսակ 2

Ուղևորաշրջանառության համախառն ծավալը[1]

հազար մարդ

Տարեթիվը	Ժամանել են	Մեկնել են	Հաշվեկշիռ
2000	399,7	457,2	-57,5
2001	508,2	568,6	-60,4
2002	590,7	593,4	-2,7
2003	618,3	628,5	-10,2
2004	739,9	737,8	2,1
2005	845,8	833,3	12,5
2006	983,7	962,0	21,8
2007	1293,6	1296,8	-3,2
2008	1397,2	1420,2	-23,1
2009	1431,9	1456,9	-25,0
Նախորդ 10 տարին	**8809,0**	**8954,7**	**-145,7**

[1] ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն, http://backtoarmenia.am

Վերջին տասը տարիներին, անկախացումից հետո տնտեսական առումով մեր լավագույն ժամանակաշրջանի յուրաքանչյուր տարում միջինը 15 հազար մարդ է հեռացել երկրից: Նշված ժամանակահատվածում պահպանվել է միտումը՝ թե՛ արտագաղթողների և թե՛ ներգաղթողների ընդհանուր թվաքանակի ավելի քան կեսը բաժին է ընկնում 20-49 տարիքային խմբի բնակչությանը: Հայաստանից մեկնողների տարիքային երկրորդ մեծ խումբը մինչև 14 տարեկաններն են: Այն, որ արտագաղթողների մեծ մասը երիտասարդությունն է, վկայում են նաև այլ սոցիոլոգիական հետազոտություններ: Հարցման ենթարկված ընտանիքների 42,5%-ի երեխաները գտնվում են հայրենիքի սահմաններից դուրս: Ընտանիքների 5,7%-ին բաժին է ընկնում երկու երեխա, 13,1%-ին՝ աղջիկներ, 18,8%-ին՝ թոռներ, 11,3%-ին՝ երկու թոռ: Սակայն, ինչպես հայտնի է, երիտասարդությունը ոչ միայն բնակչության, այլև հասարակության ներքին արդյունքի հիմնական վերարտադրողն է, ազգային եկամուտ արարողը[1]: Արտերկիր մեկնողների թվաքանակի, մեկնման նպատակի, ժամկետների, մեկնողների կարգավիճակի, ինչպես նաև Հայաստան վերադարձողների հստակ հրապարակային հաշվառում չի վարվում: Ուղևորահոսքերի հաշվեկշիռները, ԱՎԾ ընտրանքային հետազոտությունների տվյալները և ոստիկանության տարածքային անձնագրային բաժինների հաշվառման տվյալները վկայում են, որ ժամանում են առավելապես Ռուսաստանից, Վրաստանից և Ուկրաինայից, իսկ մեկնում են հիմնականում Ռուսաստան, Եվրոպա և ամերիկյան մայրցամաք: Ներգաղթողների մեջ կան ինչպես ժամանակավոր արտագաղթածներ, այնպես էլ Սփյուռքում ծնված հայրենակիցներ:

ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2007-ին իրականացված 7872 տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության ժամանակ Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանությամբ տնտեսապես ակտիվ բնակչության 30,7%-ը եղել է գործազուրկ:

Աղյուսակ 4-ը ներկայացնում ենք, ինչպես ասում են, առանց մեկնաբանության:

[1] *Խոջաբեկյան Վ.Ե.,* «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի նախաշեմին», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2002, էջ 309:

Աղյուսակ 3

Աղքատությունը և բարեկեցությունը բնութագրող ցուցանիշներ

Ցուցանիշ	*1990*	1996	2004	2005	2006	2007	2008	2009
Աղքատության մակարդակը, %	. . .	9,3	34,6	*29*,8	26,5	25,0	23,5	. . .
1 շնչի եկամուտները, դրամ/ամիս, որից տրանսֆերտներ, %	. . .	9592 16,5%	14 450 12,6%	17 766 9,7%	18 446 9,2%	22 287 10,6%	26 866 10,0%	. . .
1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ, $	2589[1]	754	1113	1523	1982	2853	3685	2686
Գործազրկություն, %	. . .	9,3	9,6	8,2	7,5	7,0	6,3	. . .
Արտաքին առևտրի հաշվեկշիռ, $ մլն, FOB	-643,4	-565,5	-450	-582	-899	-1593	-2644	-2070
1 շնչին բաժին ընկնող արտաքին պարտք, $	. . .	. . .	368	341	374	448	487	913
Պարենամթերքի արտաքին առևտրի հաշվեկշիռ ($ մլն)[2]	. . .	. . .	-199,8	-201,8	-221,7	-368,8	-560,9	-428,6
Սղաճ, % (ժամանակաշրջանի վերջը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)	. . .	2,0	2,0	-0,2	5,2	6,6	5,2	6,5
Գրադարաններ/ գրքեր- մլն	1441/ 21	1248/ 20	1058/ 19,4	1051/ 19,3	1045/ 19,2	1038/ 19,2	1034/ 19,2	. . .
Թատրոններ/ հաճախում- հազ.	19/ 1450	20/ 690	24/ 340	25/ 400	26/ 380	26/ 410	26/ 410	. . .
Նախադպրոցական Հիմնարկներ	1192	1037	653	645	645	637	628	. . .
Գողություններ	4125	2945	2791	2463	3090	2712	3216	3961

[1] Այս տարվա ցուցանիշն արտահայտված է ԽՍՀՄ ռուբլով:

[2] Համաձայն 1996թ. Պարենի համաշխարհային գագաթաժողովի ընդունած Պարենի համաշխարհային ապահովության և գործողությունների պլանի Հռոմի հռչակագրի՝ պարենային ապահովությունն առկա է, մարդկանց ֆիզիկապես, սոցիալապես և տնտեսապես մատչելի է իրենց կարիքներին և նախասիրություններին համապատասխան ակտիվ և առողջ կյանք վարելու համար բավարար քանակությամբ անվտանգ և սննդարար պարենամթերքը:

Աղյուսակ 4

Տարածաշրջանի ժողովրդագրական միտումները[1]

Ցուցանիշ	Ժամանա-կաշրջան	Հայաստան	Ադրբեջան	Վրաստան	Թուրքիա	Իրան
Արտագաղթի գործակից, % *	2000-2002	20,3	14,3	18,3	4,2	1,3
Բնական աճի տարեկան գործակից, % **	1990-1995	1,1	1,8	0,6	1,8	2,2
	2005-2010	0,7	1,2	0,1	1,2	1,3
ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ընդհանուր գործակից (1 կնոջ հաշվով ծնունդները)	1990-1995	2,4	2,9	2,1	2,9	4,0
	2005-2010	1,7	2,2	1,6	2,1	1,8
Բնակչություն, մլն մարդ	2007	3,1	8,6	4,4	73,0	72,4
	2020	3,2	9,8	4,0	83,9	83,7
Կախվածության գործակից, ծերեր ***	1990	8,8	6,9	14,1	6,8	6,2
	2010	16,1	9,5	20,7	8,8	6,8
Կախվածության գործակից, երեխաներ ****	1990	47,4	55,7	37,2	60,5	86,7
	2010	29,4	34,4	24,2	39,0	33,4

Ծանոթություն

* արտագաղթողների քանակն՝ արտահայտված %-ով մայր երկրի բնակչության և արտագաղթածների թվաքանակի նկատմամբ

** բնակչության աճի չափը՝ միայն ծնունդով և մահով որոշվող

*** 65 և բարձր տարիքի բնակչությունն աշխատունակ տարիքի բնակչության (15-64) նկատմամբ, %

**** մինչև 15 տարեկան բնակչությունն աշխատունակ տարիքի բնակչության (15-64) նկատմամբ, %

1.2 Սպասումներ

Մակրոտնտեսական կարգավորման փորձը զարգացած երկրներում ցույց է տալիս, որ «կանոններով խաղը» անվիճելի առավելություն ունի կամայական քաղաքականության նկատմամբ: Առաջին՝ նվազում է ոչ իրավասու որոշումների ընդունման ռիսկը, երկրորդ՝ նվազում է քաղաքական բիզնեսցիկլի ազդեցությունը զբաղվածության մակարդակի ցիկլիկ տատանումների, արտադրության և ինֆլյացիայի վրա, երրորդ՝ ձևավորվում են պայմաններ կառավարության և կենտրոնական բանկի քաղաքականության նկատմամբ վստահության աճի համար: Այս առիթով Ռ.Լուկասը նշում է. «…սպասումներն այսօր նույնքան կարևոր են տնտեսության համար, որքան կառավարության տնտեսական քաղաքականությունը»: Կառավարության անհետևողա-

[1] Human Development Report 2009, UNDP.

կան քաղաքականության արդյունքում որքան էլ բարի թվան հետապնդվող նպատակները, տնտեսությունն ընդհանուր առմամբ էականորեն տուժում է, քանզի տնտեսական աճի խթանները կապված են լինում վատատեսական սպասումներով[1]:

Մեր պետական-հասարակական կյանքի բոլոր բնագավառներում առկա անհետևողականությունն ու դրական միտումների բացակայությունն այսօր սպառնում են ազգային անվտանգությանը[2]:

Ազգային վիճակագրական ծառայության հետազոտության համաձայն, 2004 և 2008 թվականներին ջրամատակարարման, ջրահեռացման, աղբահանության, հեռախոսի, էլեկտրաէներգիայի, փոստի, բանկի, ոռոգման, առողջապահության, կրթության, հասարակական տրանսպորտի ծառայությունների վատացման դեպքերում ծառայություն ստացողները չեն դիմել համապատասխան կազմակերպության ղեկավարությանը: Ընդ որում, այս «իներտ» ցուցանիշը բարելավման միտում չի ունեցել այդ ընթացքում. 2004-ին ծառայության որակի վատացման դեպքում չի դիմել ծառայություն ստացողների 98,4%-ը, 2008-ին՝ 99,2%-ը: Նմանատիպ միտում առկա է նաև ոչ շատ մեծ չափի հանցագործությունների (կողոպուտ, գողություն) դեպքերում, երբ ոչ միշտ է տուժած կողմը դիմում իրավապահին: Կարծում ենք, որ այստեղ առկա են ինչպես պետական-հասարակական ինստիտուցիոնալ թուլության, ակնհայտ անվստահության, այնպես էլ ազգային խառնվածքի գործոններ:

Աղյուսակ 5

Պետության ուժը

Ցուցանիշ	1990	1996	2004	2005	2006	2007	2008	2009
Հարկեր և տուրքեր/ՀՆԱ, %	14,0	9,1	14,1	14,5	14,2	16,1	17	16,5
Արտաքին պարտք/ՀՆԱ, %	. . .	. . .	33,3	22,4	18,9	15,8	13,2	34,0
Մարդասիրական օգնություն/ՀՆԱ, %	. . .	2,7	3,1	2,6	2,7	2,5	1,8	1,9
Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ, որից	1443	1077	3669	3269	3774	3629	4276	5419
Հրազենի և ռազմամթերքի կիրառմամբ	. . .	. . .	95	80	85	106	84	100

[1] *Манасерян Т.,* "Нобелевские лауреаты в области экономики", Ереван, 2009, с. 125, 133-134.

[2] Անցանկալի երևույթների առկայությունն այսօրվա հայոց զինուժում փաստ է (որպես դրա արդյունք ունենք խաղաղ պայմաններում մահացությունների և դասալիքների մեծ թիվ), իսկ դրանց արմատահանումը՝ հրատապ անհրաժեշտություն: Մեր բանակի բարոյահոգեբանականը պետք է բարելավվի հիմնավորապես, այլապես այն շարունակելու է անցանկալի հետևանքներ ունենալ ոչ միայն զինվորական, այլև ՀՀ անվտանգության այլ ոլորտներում՝ շարունակելով խրախուսել կործանարար չափերի հասնող արտագաղթը: Չէ՞ որ բանակը և հասարակությունը խորապես փոխազդում են միմյանց վրա, հետևաբար շատ կարևոր է այստեղ արդարության, հավասարության և օրենքի կիրարկման ապահովումը (*Արմեն Այվազյան,* Հիմնատարրեր Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, Երևան 2004, Հայաստանի պաշտպանական հայեցակարգը): Տե՛ս նաև *COMMISSION OF THE EUROPEAN COMMUNITIES,* Implementation of the European *Neighborhood Policy in 2008, Progress Report Armenia* (*Աղյուսակ 5*):

Հատկապես ծանր հանցագործությունների թվաքանակի վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները ներառել ենք *Աղյուսակ 5-ում,* քանի որ անցումային տնտեսություն ունեցող երկրների պետական ինստիտուտների որակը բնորոշող ցուցանիշ է հանդիսանում նաև բնակչության թվաքանակի համեմատ կատարվող ծանր հանցագործությունների թիվը[1]:

Աղյուսակ 6-ում ներկայացված են Հայաստանից կանանց և տղամարդկանց մեկնելու հիմնական դրդապատճառները: Ի թիվս այլ պատճառների, որպես առանձին խմբեր առանձնացվում են *սոցիալական, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտն ու Հայաստանում զարգացման հեռանկարի նկատմամբ հավատի բացակայությունը:* Համաձայն աղյուսակի, տարբեր տարիներին այս ցուցանիշները եղել են 1-20%-ի սահմաններում, սակայն կարծում ենք, որ հենց սրանք են, որ անկախ այլ դրդապատճառների առկայությունից, վերջին երկու տասնամյակում գրեթե միշտ ուղեկցել են Հայաստանից հեռացողին (օրինակ, 1990-ականներից սկսած աշխատանքի և գործազրկության խնդիրները, այնպես, ինչպես ձեռներեցությամբ զբաղվելու դժվարությունները մշտապես առաջնակարգ են եղել Հայաստանում, միևնույն ժամանակ քիչ չեն եղել աշխատանք չունեցող և երկրում մնացած ընտանիքները): Ավելին, կարծում ենք, որ հասարակության որոշ շերտերի համար (օրինակ, ինտելեկտուալ, ընդգծված ազգային դիմագծով ու պահպանողական անհատներ) հեռանալու որոշում կայացնելու համար «համբերության վերջին կաթիլը» հենց սոցիալական, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտն ու Հայաստանում զարգացման հեռանկարի նկատմամբ հավատի բացակայությունն է: Հետևաբար, հետագա հետազոտությունների և քաղաքականության մշակման ժամանակ, կարծում ենք, անհրաժեշտ է երկրից մեկնելու այս դրդապատճառներին առավել շատ ուշադրություն դարձնել:

Այս ամենին զուգահեռ, քաղաքակիրթ աշխարհին այնքան է առաջադիմել, որ անգամ անօրինական կարգավիճակով «եվրոպաներում» հայտնված ՀՀ քաղաքացիները տեղի պետական-հասարակական կառույցների կողմից հաճախ այնպիսի հոգածության են արժանանում, որ համեմատելի չէ նախկին «անսպասում» իրականության հետ:

[1] Տե՛ս *Гжегож В. Колодко,* От шока к терапии. Политическая экономика постсоциалистических преобразований, М. 2000, с. 159:

Աղյուսակ 6

Հայաստանից մեկնելու հիմնական դրդապատճառները[1]

Դրդապատճառները		Ընդամենը		0-19		20-49		50 +	
		Կին	Տղամ.	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ
Աշխատատեղերի բացակայությունը	1991-1998ն	24	46	4	3	31	50	17	45
	2001	34	58						
Մասնագիտական աշխատանքի բացակայությունը	1991-1998	3	5	1	1	4	5	2	5
	2001	3	5						
Բավարար կենսամակարդակի համար վաստակելու անհնարինությունը	1991-1998	12	18	3	-	15	20	13	21
	2001	29	30						
Սոցիալական-բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը	1991-1998	6	5	5	3	8	5	3	7
	2001	3	1						
Աշխարհաքաղաքական անկայուն իրավիճակը	1991-1998	1	2	-	-	1	2	-	1
	2001	3	-						
Հայաստանում զարգացման հեռանկարի նկատմամբ հավատի բացակայությունը	1991-1998	3	5	-	-	4	5	3	2
	2001	20	4						
Ձեռներեցությամբ զբաղվելու դժվարությունները	1991-1998	1	4	-	-	1	4	-	4
	2001	-	1						
Ընտանիքի վերամիավորումը	2001	40	8	76	81	29	2	39	8
Այլ	1991-1998	10	7	11	12	7	7	23	7
	2001	8	1						

Արտագաղթի և ներգաղթի հարցերի շուրջ «հավասարակշռված» հրապարակային հետազոտություններից բացի, նշենք նախորդ երկու ամսվա անձնական դիտարկումներից սպասումներ ձևավորող օրինակներ.

- Գյումրու երիտասարդների շրջանում կատարված հարցման մասնակիցների 79%-ը դրական է պատասխանել հնարավորություն ունենալու դեպքում արտասահման մեկնելու կողմնորոշմանը (20.02.10, 16:15 ռադիո Երևան, FM 102):

[1] http://www.armstat.am/file/article/gender_99_arm_4.pdf /Source – 2001 migration Survey performed by NSS of the Republic of Armenia/, HOW TO REVERSE EMIGRATION? 2003, p. 8, A. Yegiazaryan, V. Avanesian, N. Shahnazaryan, jointly with "Ameria" CJSC.

- Օտար լեզուների ուսուցման կենտրոնի տվյալներով՝ ներկայումս անգլերեն սովորող 20-ից 12-ը և ֆրանսերեն սովորող 20-ից 15-ը պատրաստվում են փորձել մեկնել արտասահման (սեփական հարցում):
- Երիտասարդների նկատմամբ պետական հոգածություն չի նկատվում: Փոխարենն արտասահմանը հրապուրիչ ծրագրեր է առաջարկում երիտասարդ գիտնականներին: (Գիտության պետական կոմիտեի նախագահ, «ԱՐ» ՀԸ, Ազդարար, 14.02.10):
- «Տրանսֆերտների աճին ուղիղ համեմատական աճում են թմրամոլությունը, սեռական հիվանդությունները, հարբեցողությունն ու անբարոյականությունը: ...Սոցիալական իրավիճակը ծնում է անզորություն, անհանդուրժողականություն, չարություն իշխանության, նաև ընտանիքի անդամի, կնոջ նկատմամբ» (ազգագրագետ, «Շողակաթ» ՀԸ, 14.01.10):

Անտարբերությունը, սեփական շահերին հետամուտ չլինելը, արդարության հաղթանակի նկատմամբ հույսի անկումը, օրենքի՝ ըստ պահանջի անտեսումը, բարոյականության անկումն ու հասարակության «վերարժևորումը», վերջապես անմիաբանությունը դարձել են հայաստանյան կյանքի ուղեկիցները[1]: Պետության շահի ու վաղվա օրվա նկատմամբ մեծամասնության անտարբերությունը չի կարելի դիտել որպես հասարակական համերաշխություն: Ցավոք, դժգոհությունն ու անընդունելիությունը հիմնականում անտարբերությամբ և արտագաղթով են արտահայտվում:

2. Հիմնական խնդիրները

2.1 Արտագաղթը որպես հետևանք

Անգամ առանց խոր վերլուծության ակնհայտ է, որ մեր երկրի կարևոր և ահագնացող խնդիրն առաջիկայում կլինի ու կմնա արտագաղթը, եթե օր առաջ չսկսենք ըստ էության ու հետևողական զբաղվել դրանով, ինչպես նաև արտագաղթը ծնող, ժողովրդագրական ճգնաժամը պայմանավորող մյուս խնդիրներով: Ներկա փուլում արտագաղթը հետևանք է սոցիալ-տնտեսական իրավիճակի, արժեքների բացակայության և թույլ պետական հաստա-

[1] «... մեր տարեկան պետական բյուջեներն էլ՝ ներառյալ վերջերս քվեարկված 2008-ինը, «սոցիալական» ՉԵՆ: «Սոցիալական» անվանում տալը ինքնին չի նշանակում, որ էապես սոցիալական քաղաքականություն և բյուջե է կազմվել և որդեգրվել: Այլապես, ինչպե՞ս է հնարավոր, որ սոցիալական կամ սոցիալական ուղղվածություն ունեցող պետության մեջ, այսինքն՝ իրական պետական ազգային ծրագրեր ու բյուջեներ որդեգրած երկրում աղքատությունը կազմի 29,8%՝ բնակչության 1/3-ը, և որ աղքատ լինելու սանդղակը պաշտոնապես համարվի 20.289 դրամ: ...Տանջող ու ցավալի իրականություն է այս ու նաև զանգվածային աղքատացումը, արտագաղթը ժողովրդագրական և տնտեսության անկումը, անգրագիտության զարգացումը, որակյալ մարդուժի, այսինքն՝ հայկական իրական կապիտալի արտահոսքը...», «Տեսակետ ՄԻԺԻ» N 24, դեկտեմբեր 2007, էջ 10-11:

տության: Ժողովրդագրության բնույթից ելնելով՝ դրա և սոցիալ-տնտեսական միջավայրի սերտ կապվածությամբ պայմանավորված, այսօր և հետայսու յուրաքանչյուր բավականաչափ չծրագրված միջոցառում, ազգի ու պետականության շահերով ու քաղաքականությամբ չպայմանավորված ցանկացած քայլ, լինի կենսաթոշակային բարեփոխումների[1], առողջապահական կամ կրթական բնագավառներից, տնտեսական ու արդյունաբերական միջոցառումների շարքից, ինչպես նաև այլ ոլորտներում ծրագրված քաղաքականության չիրացումը, ամեն փուլի համար պահանջվող քայլեր չձեռնարկելն անխուսափելիորեն հանգեցնելու է ժողովրդագրական իրավիճակի վատթարացման և արտագաղթի միտումների պահպանման: Իսկ առաջիկա մարդահամարը, դրա պատշաճ կազմակերպման պարագայում, նոր աղետալի ցուցանիշներ է դնելու մեր առջև:

2.2 Ժողովրդագրական ճգնաժամ

Տարբեր սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով մինչև այժմ իրականացված ժողովրդագրական բնույթի աշխատանքները չեն տվել էական դրական արդյունքներ, և մենք այսօր գտնվում ենք ժողովրդագրական ճգնաժամի մեջ: Ստորև առանձնացվել են այն խնդիրները, որոնք գուցե մասամբ կրկնեն միմյանց կամ պայմանավորված լինեն միմյանցով, սակայն ամբողջական պատկերացում են տալիս մեր գերխնդիրների վերաբերյալ.

1. Բնակչության բնական աճի ցածր ցուցանիշ
2. Բնակչության բացարձակ թվաքանակի ակնհայտ նվազման միտում
3. Բնակչության ծերացում և հասարակության գերբեռնվածություն
4. Աշխատուժի առաջարկի և պահանջարկի խիստ անհաշվեկշռվածություն
5. 2010-ականների ճգնաժամ
6. Բարձր վերարտադրողական պոտենցիալ և որակական ներուժ ունեցողների մեծ տեսակարար կշիռ արտագաղթող զանգվածում
7. Ժամանակավոր արտագաղթի ձևավորում (գենոֆոնդի մարում)[2]
8. Փոքր քաղաքները աղետի գոտու և սահմանամերձ շրջանների հետ միասին մնում են որպես արտագաղթի և ներքին միգրացիայի օջախներ
9. Հրապուրիչ Արևմուտք
10. Պատրաստ լինել աշխարհաքաղաքական և տնտեսական իրավիճակի կտրուկ և մասշտաբային փոփոխություններին:

---

[1] *Արա Նռանյան,* «25 տարի հետո քաղաքացիները պարզելու են, որ չեն ստանում այն կենսաթոշակները, որ ակնկալում էին», http://hetq.am/am/society/a-nranyan-3/:

[2] Ներքին և արտաքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, ՀՀ ԱՎԾ, Երևան-2008:

Մինչև հիմա ասվածից եզրակացնում ենք, որ Հայաստանը կանգնած է բնակչության միգրացիայի սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական քաղաքականություն մշակելու հրատապության դեմ-հանդիման:

3. Հեռանկար և անելիքներ

3.1 Միջազգային փորձ

Ուսումնասիրելով միգրացիայի բնագավառի ժամանակակից փորձը, գործող միջազգային համաձայնագրերը, առանձին երկրների միգրացիոն և ժողովրդագրական խնդիրների լուծման անցած ճանապարհը՝ գալիս ենք հետևության, որ համաշխարհային գլոբալ միտումները կարող են ընձեռել միանգամայն տարբեր հնարավորություններ իրենց համապատասխան հետևանքներով ու արդյունքներով: Այսպես, *ժամանակակից ժողովրդագրական, գենդերային միտումները, աշխատանքի միջազգային բաժանման, զբաղվածության, կադրերի որակավորման խնդիրները, ինչպես նաև կապիտալի արդյունավետ օգտագործման հրամայականը միջազգային մակարդակով ընդհանուր լիբերալ մոտեցումներ են մատնանշում աշխատուժի միջազգային միգրացիայի առումով՝ հիմնականում շեշտելով մարդու իրավունքների և ազատությունների չվնասման հարցը: Այս պայմաններում առանձին երկրների ազգային օրենսդրությունները, պետական ծրագրերն ու քաղաքականություններն են որոշիչ դարձնում համապատասխան երկրի ու ազգի հեռանկարը: Ու եթե 10, 20, 30 մլն և ավելի ազգաբնակչությամբ պետությունների համար նվազ կարևոր կարող են լինել այս խնդիրները, ապա 3 միլիոնանոց ժամանակակից Հայաստանի համար այս բնագավառում քաղաքականություն վարել-չվարելն աներկբայորեն ճակատագրական է:*

Անգամ այս բնագավառի միջազգային կազմակերպությունների խորհրդատվական փաստաթղթերը հորդորում են, որ միգրացիոն հարցերին նվիրված առաջավոր *պրակտիկան պետք է լինի նորարարական բնույթի, պարունակի ստեղծագործ մոտեցում միգրացիայի խնդիրների լուծման բնագավառում՝ դրանով նպաստելով, մասնավորապես, աշխատուժի միգրացիայի կատարելագործմանը, ավելացնելով միգրացիայի օգուտը և կրճատելով դրա հետ կապված ծախքերը*[1]*:* Վերոնշված մարտահրավերների և հնարավորությունների մասին են վկայում նաև ստորև բերվող մասնավոր օրինակները որոշ երկրների փորձից, սակայն նախքան դրանք ներկայացնելը համառոտ թվարկենք աշխատուժի միջազգային միգրացիայի բնագավառում Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) և Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) կողմից առաջ քաշվող հիմնական սկզբունքներից մի քանիսը.

[1] ILO Multilateral Framework on Labour Migration, INTERNATIONAL LABOUR OFFICE, GENEVA, 2006:

- հարկ է օժանդակել աշխատանքային տարիքի բոլոր տղամարդկանց և կանանց, այդ թվում միգրանտներին իրենց և իրենց ընտանիքների տնտեսական, սոցիալական կարիքները հոգալու նպատակով արժանապատիվ աշխատանք, կենսաթոշակային բավարարություն ազատորեն փնտրելուն և գտնելուն, պաշտպանելով մարդու անվտանգությունը, արժանապատվությունը, հիմնարար իրավունքներն ու ազատությունները,
- կառավարությունները, խորհրդակցելով գործատուների և աշխատավորների միությունների հետ, պետք է հաստատեն միջազգային հարաբերություններ ապահովելու և օժանդակելու համար զբաղվածության անհրաժեշտ մակարդակ,
- անհրաժեշտ է դիտարկել օրինական աշխատանքային միգրացիայի ուղիների ընդլայնման հարցը՝ հաշվի առնելով աշխատուժի շուկաների պահանջարկը և ժողովրդագրական միտումները,
- անհրաժեշտ է ընդունել և առավելագույնս մեծացնել այն ներդրումը, որն աշխատանքային միգրացիան բերում է ծագման և նշանակման երկրների տնտեսությանը, աղքատության հաղթահարմանը և զարգացմանը:

Մալայզիա: ԱՄԿ օժանդակությամբ, Արհմիությունների կոնգրեսն աշխատանքային միգրանտների համար կազմակերպում է խոշոր սեմինար՝ լուսաբանելու և աշխատանքային միգրանտների կարգավիճակը մասսայականացնելու համար: Սեմինարի նպատակներից է նաև արհմիությունների կողմից միգրանտներին ուղղված պաշտպանությունը մեծացնելը:

Կանադա: Միգրացիայի կանադական քաղաքականությունը ենթադրում է որակավորված աշխատուժի և ինտելեկտուալ աշխատանքի տեր անձանց ընդունելություն, համակարգն աշխատում է բալերի շնորհման միջոցով, հետևյալ բնութագրիչների հիման վրա. տարիք, կրթություն, անգլերենի և ֆրանսերենի իմացություն, երեխաների քանակ, աշխատանքային փորձ և այլն: Կանադան ունի նաև գյուղատնտեսական աշխատողների սեզոնային ներգրավման փորձ, որը հիմնականում իրացվում է Մեքսիկայի հետ ունեցած համաձայնագրի շրջանակներում (նմանատիպ համագործակցություն առկա է նաև Գերմանիայի և Լեհաստանի միջև):

Ֆիլիպիններ: Ֆիլիպիններում իրականացվում է զբաղվածության կողմնորոշում ունեցող միգրացիոն քաղաքականություն աշխատուժի ժամանակավոր միգրացիայի, աշխատողների իրավունքների պաշտպանության և հայրենիք կատարվող դրամական փոխանցումների առավելացման շեշտադրումով: Կառավարությունն արտասահմանյան աշխատանքի շուկաներում բացահայտում է համապատասխան խորշեր և կազմակերպում է աշխատուժի պլանավորված արտահանում, վերահսկում արտասահմանյան գործատուների,

տեղական և արտասահմանյան աշխատանքի տեղավորման գործակալությունների աշխատանքը՝ արտահանվող երկրների հետ ունեցած երկկողմանի պայմանագրերի հիման վրա: Ֆիլիպինները միջոցառումներ և խթանների համախումբ է նախատեսում նաև միգրանտների երկիր վերադառնալուց հետո: Որոշակի դեպքերում զբաղվածության գործակալությունները արտագաղթող աշխատուժ հավաքագրելիս սոցվճարումներ են կատարում կենսաթոշակային և սոցապահովագրության պետական հիմնադրամ:

Իսպանիա: Օտարերկրյա միգրանտների հետ աշխատանքի բազմակողմանի փորձին 2005-ին Իսպանիան ավելացրեց նաև, այսպես կոչված, օրինականացման ծրագիրը, որն իրացվեց գործատուների և վարձու աշխատողների կազմակերպությունների հետ լայն քննարկումների արդյունքում: Այն օտարերկրացիները, որոնք աշխատելով Իսպանիայում՝ որոշակի ժամանակահատվածում չունեին իրավախախտումներ և համարվում էին որակյալ աշխատուժ, ստացան ռեզիդենտի կարգավիճակ:

Շրի Լանկա: 2008-ից սկսած՝ ԱՄԿ օժանդակությամբ իրականացնում է լայնամասշտաբ Ազգային աշխատանքային միգրացիոն քաղաքականություն: Աշխատանքային հարաբերությունների և զբաղվածության նախարարը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ պարբերաբար այցելում են հիմնական ընդունող երկրներ, հանդիպումներ ունենում իրենց քաղաքացիների հետ:

Չինաստան: Իշխանության տարբեր մակարդակներով իրականացնում է «ուղեղների արտահոսք» գործընթացի շրջադարձ: Այն դեպքում, երբ կենտրոնական կառավարությունն իրացնում է լայնամասշտաբ քաղաքականություն և ապահովում է ընդհանուր հասարակական-քաղաքական մթնոլորտ գիտության և տեխնիկայի զարգացման ուղղությամբ, բազմաթիվ տեղական մարմիններ և կազմակերպություններ միջոցներ են ձեռնարկում որակյալ կադրերին երկիր վերադարձնելու ուղղությամբ:

Մեքսիկա: Արտասահմանում գտնվող մեքսիկացի աշխատանքային միգրանտները, հայրենիք դրամական միջոցներ ուղարկելիս համապատասխան երկրում մեքսիկական հյուպատոսություններին ներկայացնում են ներդրումային առաջարկություններ իրենց ծագման վայրում ենթակառուցվածքների զարգացման, պետության կողմից ծառայությունների մատուցման կամ աշխատատեղերի ստեղծման վերաբերյալ: Այն առաջարկները, որոնք որպես ներդրումային ծրագիր հաստատվում են կառավարության կողմից, միգրանտների միության փոխանցած 1 դոլարին միացվում են համայնքային, մարզային և կենտրոնական իշխանությունների մեկական դոլարները (3X1 ծրագիր):

ՄԲ-ՀԱՀ: Փոխըմբռնման հուշագրի հիման վրա բժշկական կրթական համակարգերը փոխանակում են կադրեր և փորձ: Տեղի է ունենում բուհական փաստաթղթերի փոխադարձ ճանաչման գործընթաց, հարավաֆրիկյան մաս-

նագետները ժամանակավոր աշխատում են Բրիտանիայի պետական առողջապահության ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվող հաստատություններում: Միացյալ Թագավորությունը նաև երկկողմանի պայմանագրեր է ստորագրել Իսպանիայի, Չինաստանի, Ֆիլիպինների և Հնդկաստանի հետ առողջապահական կադրերի հավաքագրման նպատակով:

3.2 Սոցիալ-ժողովրդագրական միջոցառումների համախումբ

Բոլորիս քաջ հայտնի հիմնարար-բազիսային միջոցառումներից բացի, որոնք կազմելու են մեր ազգային տնտեսության հիմքն ու հեռանկարը, նշենք որոշակի առումով նոր, ոչ ավանդական կամ դեռևս հետևողականորեն չիրացված միջացառումները, որոնց իրագործումը նպաստելու է վերն առանձնացված խնդիրների հաղթահարմանը:

Միգրացիայի կառավարման և ժողովրդագրական բարեփոխումներ ծրագրի իրացում: Ծրագիրը պետք է զերծ լինի ոչ գործունակ ու ոչ հեռանկարային դրույթներից: Դրույթների ակտուալացման ու մոնիթորինգի առումով այն պետք է ունենա միջավայրին բազմակողմանիորեն և օպերատիվ արձագանքելու ունակություն: Միգրացիոն և ժողովրդագրական ծրագիրը պետք է ամբողջովին ներառի և ուղղորդի մինչև այժմ եղած և հետագայում հնարավոր բոլոր տեսակի մասնավոր և միջազգային կառույցների միջոցներն ու ներուժը: Այն իր կարևորության, բազմաշերտության և ազգային անվտանգության հայեցակարգի բոլոր դրույթների հետ առնվազն անուղղակի կապերով մի յուրօրինակ պետական գերփաստաթուղթ է հանդիսանալու: Ստորև ներկայացվելիք միջոցառումները դասակարգված են Միգրացիոն և ժողովրդագրական ծրագրի՝ *Արտագաղթի կասեցում, Ներգաղթի խրախուսում, Ներքին միգրացիայի կանոնակարգում ու Սոցիալ-ժողովրդագրական այլ միջոցառումներ* բաժինների պայմանական դասակարգումով:

***Արտագաղթի կասեցում.*- Որակական և վերարտադրողական բարձր պոտենցիալով օժտված անձանց (երիտասարդ ուղեղներ) երկրում պահելու հատուկ մեխանիզմի ներդրում:** Սա իրագործելու համար ունենք երկու զլոբալ խնդիր.

ա) սահմանել չափորոշիչներ և «զույքագրել» Հայաստանում առկա ուղեղները,

բ) նյութական շահագրգռվածություն և բարոյական առումով պատվաբեր ու բավարարվածություն պատճառող զբաղվածության ապահովում:

Առաջինի առումով կարծում ենք, որ առնվազն առաջիկա 15-25 տարվա ժամանակահատվածում մեզ համար առաջնային ուղղությունների համար ներուժ հանդիսացող մասնագիտությունների «ուղեղների» գույքագրումը պետք է արագ իրագործվի: Նման ինչ-որ հանձնառություն հնչել է բավական բարձր պետական մակարդակով, բայց, ցավոք, ընթացքից տեղյակ չենք: Առավել մանրամասն անդրադառնանք երկրորդ խնդրին: Միանգամայն արժանի տարբերակ ենք համարում *ժողովրդագրական փորձաքննության ինստիտուտը* կյանքի կոչելը, որը ցանկանում ենք պատկերացնել ոչ միայն միջոցառումների ու սկզբունքային մոտեցումների գործնական ներդրման համախումբ, այլ նաև իրավաբանական անձի կարգավիճակով պետական-հասարակական կազմակերպություն՝ իր կառուցվածքով, խնդիրներով ու գործառույթներով, որի նպատակը ոչ միայն առանձին որոշումների, նախագծերի և իրավական ակտերի ժողովրդագրական հեռանկարի առումով փորձաքննության իրականացումը կլինի, այլ նաև այս բնագավառում քաղաքականությունների, կառուցակարգերի մշակումն ու տարբեր մարմիններին խորհրդատվությունների և քաղաքական հանձնարարականների ներկայացումը: Վերադառնալով «ուղեղները պահելու» հիմնախնդրին՝ նշենք, որ գիտագործնական ուղղվածություն ունեցող այս հաստատությունն իր բուն գործառույթի առարկայի բերումով մասնագիտական առումով տարբեր ուղղվածություններ ունեցող կոլեկտիվ կհանդիսանա, որտեղ էլ կարող են գործի լծվել մեր «ուղեղներից» շատերը:

Աշխատանքային միջազգային զաղթին տալ բացահայտ, կազմակերպված և օրինական բնույթ: Կարծես ինչ-որ բարդույթ ենք ունեցել նախկինում կամ չենք նկատել սրա կարևորության հասունացումը: Միաժամանակ չստնահարելով մարդու հիմնարար իրավունքները՝ պետությունը պետք է ձգտի հարյուր տոկոսով վերահսկել ոլորտը: Հատկապես այս ասպարեզում պետք է որ պետությունն օտարված չլինի քաղաքացուց, իսկ կապը ոչ մի դեպքում չպետք է կրի ձևական բնույթ: Պետությունը պետք է հավաքագրի աշխատանքային պոտենցիալ միգրանտներին, տիրապետի նրանց որակական և քանակական կառուցվածքին: Սա որակյալ վիճակագրություն կապահովի տարբեր պետական կառույցների գործունեությանն օժանդակելու համար, ինչպես նաև մշտական հրատապ բազա կհանդիսանա Միգրացիոն պետական ծառայության և Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության համար միջազգային հարաբերությունները կազմակերպելու և քաղաքականություններ մշակելու նպատակով: Մեր երկրում հավատարմագրված դեսպանատները լիովին տիրապետում են մեր քաղաքացիների արտերկիր մեկնելու առնվազն ֆորմալ նպատակներին (բացառությամբ, թերևս, ԱՊՀ երկրների): Պետք է գտնել մեխանիզմ, որ ՀՀ-ն ևս տիրապետի իր քաղաքացիների մեկնելու ման-

բակրկիտ վիճակագրությանը: Սակայն դա պետք է անել նախապես, այսինքն՝ պետք է ընդառաջ գնալ միգրանտին: Ահա այստեղ է, որ կարևորվում է մյուս միջոցառումների անհրաժեշտությունը: Որոշ քայլեր արվում են միջազգային կառույցների օժանդակությամբ, սակայն եթե մենք հստակ չպատկերացնենք ինչ է մեզ պետք, չվերցնենք իրավիճակը մեր ձեռքը ու չկառավարենք այն, արդյունք ակնկալել չենք կարող: Սկսած տուրիստական գործակալություններին և դեսպանատան միջնորդներին վճարվող ոչ ֆորմալ գումարների չափերից մինչև արտագաղթի տեսակների ու դրդապատճառների վիճակագրությունը՝ լիազոր մարմինը պետք է տիրապետի, որպեսզի կարողանա ճիշտ քաղաքականություններով և լծակներով արձագանքել: Տարբերակ կարող է հանդիսանալ, օրինակ, աշխատանքի տեղավորման գործակալությունների պարզ լիցենզավորումը և/կամ հաշվետվությունների ներկայացման իմպերատիվ նորմի կիրառումը (պետք է նկատել, որ այս բնագավառի որոշ կազմակերպությունների կողմից հաճախ խախտվում են քաղաքացու իրավունքները, միջազգային կոնվենցիաների դրույթները)[1]: Նշված հաշվետվություններում առանձին տողով պետք է արտացոլված լինի պոտենցիալ աշխատանքային արտագաղթի կադրային ներուժը: Թվերը պետք է ուղիղ և հետադարձ կապի մեջ լինեն ՀՀ դեսպանատների հետ, իսկ դրանց ընդհանրացված տվյալները՝ աշխատանքի և միգրացիայի միջազգային կազմակերպությունների հետ քննարկումների սեղանին: Աշխատանքային գաղթին պետք է տալ բացահայտ, կազմակերպված և օրինական բնույթ:

Աշխատուժի քաղաքակիրթ շուկայի ձևավորումը: Պետք է քննարկել այն պատճառներն ու նախադրյալները, որոնք չհասունացած են պահում արհմիությունների ինստիտուտի կայացման անհրաժեշտությունը: Պետք է գտնել հաջողված օրինակներ ՀՀ-ում և ուսումնասիրել անցումային երկրների հաջողված փորձը: Այս քաղաքականությանը պետք է ստորադասել նաև զբաղվածության ծառայության և աշխատանքի տեղավորման առնտրային գործակալությունների գործառույթները: Որոշակի ընդգծված վերաբերմունք և քաղաքականություն ձևավորել աշխատանքի տեղավորման գործակալությունների և արտասահմանյան ուղևորություններ կազմակերպող գրասենյակների գործունեության հանդեպ:

***Ներգաղթի խրախուսում.*- Հայրենադարձությունն ապահովող միջոցառումների գրագետ նախապատրաստված մեկնարկ,** Սփյուռքի ոգին ներկա Հայաստանում ունենալու անհրաժեշտության կարևորում: Աշխարհը «փոքրանում է», ու դրա անխուսափելի բացասական հետևանքներով հանդերձ պետք է

[1] Տե՛ս 1997թ. Կոնվենցիա մասնավոր աշխատանքի գործակալությունների մասին (No. 181) և կից հանձնարարականը (No. 188):

ձգտել առավելագույնի հասցնել երկրի օգուտները: Այդ միջոցառումների առանձին տարրեր կարող են հանդիսանալ, օրինակ.

- **Պետական մակարդակով արտասահմանում գտնվող հայրենակիցների նախապես առանձնացված խմբերում (օրինակ, երիտասարդներ, ԽՍՀՄ-ից հեռացածներ, արտասահմանում բնակվող և այլ երկրներում ներդրումներ կատարող հայ գործարարներ) իրականացնել վիճակագրական հարցում, դրանց արդյունքների շահագրգիռ և համակողմանի քննարկման և հեռանկարային որոշ կարևոր եզրակացությունների և քաղաքականությունների մշակման նպատակով:** Առաջարկվող վիճակագրական հարցերի օրինակներ կարող են հանդիսանալ. *ի՞նչ պայմանների առկայության դեպքում կվերադառնայիք Հայաստան, ո՞ր երեք խնդիրները պետք է լուծի հայաստանյան հասարակությունն առաջիկա տարիներին…, ե՞րբ եք վերջին անգամ եղել Հայաստանում, ինչպե՞ս եք տեսնում երկքաղաքացիության և հայրենադարձության փոխկապվածությունը, տեղյա՞կ եք հայերի աշխարհագրությանը և Հայաստանի ժողովրդագրական ցուցանիշներին, որքա՞ն հաճախ եք այցելում հայկական էլեկտրոնային կայքեր և այլն…*
- **Երկու և ավելի անդամից բաղկացած հայրենադարձվող ընտանիքներին** պետական սեփականություն հանդիսացող բնակարանի համար հերթագրում, բնակարանի տրամադրում, որոշակի ժամանակահատված անց անհատույց սեփականության անցման հնարավորություն (շահերի կենտրոն, երեխաներ, ներդրումներ և այլն):
- **Քայլեր երկրագնդի առկա և առաջացող թեժ կետերից մեր հայրենակիցներին ՀՀ տեղափոխվելու պետական առաջարկության ձևակերպման ուղղությամբ** (նմանատիպ քաղաքականություն որդեգրելիս ընթացքում կարելի է փորձել ներգրավել նաև ՄԱԿ և այլ միջազգային կազմակերպությունների ռեսուրսները):
- **Հայաստանի գործարարների ներուժով բոլոր մարզերում միաժամանակ բնակշինարարության** (սոցիալական-բարեգործական բնակարանաշինություն) մեկնարկի ազդարարում, որոնց շահառուները կարող են լինել, օրինակ, Սփյուռքի և Հայաստանի երիտասարդներով համատեղ ստեղծվող ընտանիքները:
- **Հայրենադարձած ընտանիքներին արտոնյալ առևտրային և հիփոթեքային վարկերի տրամադրում:**
- **Հայաստանում կրթություն ստանալու պայմանների որոշակի մեխանիզմների ներդրում: Միաժամանակ հաշվառման վարում դրսում սովորող ՀՀ քաղաքացիների մասով:**
- **Հատկապես սփյուռքահայերի ներդրումների պաշտպանություն:**

Միգրացիայի կանոնակարգում.- Փոքր քաղաքներում ներդրումներ կատարողներին, որոնք ապահովելու են տեղի բնակչության համար, օրինակ, 40 և ավելի աշխատատեղ, գործունեության իրականացման տվյալ վայրում ստացվող շահութահարկի 100%-անոց արտոնություն որոշակի ոչ կարճ ժամանակահատվածում:

Հասարակական մոնիթորինգի ներքո սահմանել պլանային համակարգ պետական հետևյալ մարմինների առանձին գործառույթների գնահատման նկատմամբ: Մասնավորապես.

Սփյուռքի նախարարության աշխատանքի արդյունավետության գնահատման առաջնային ցուցանիշներից համարել հաշվետու տարում հայրենադարձվող ընտանիքների թվաքանակը:

Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատանքի արդյունավետության առաջնային ցուցանիշներից համարել հաշվետու տարում ժողովրդագրական կոնկրետ միջոցառումների իրագործումն ու պրոպագանդումը:

Էկոնոմիկայի նախարարության աշխատանքի արդյունավետության առաջնային ցուցանիշներից համարել հաշվետու տարում օտարերկրյա ներդրումների ծավալը և առևտրային հաշվեկշռի բարելավումը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի արդյունավետության գնահատման առաջնային ցուցանիշներից համարել զբաղվածության պետական գործակալության միջոցով հաշվետու տարում աշխատանքի տեղավորված և մինչև տվյալ տարեվերջ աշխատատեղը չկորցրած անձանց թվաքանակը, կենսաթոշակի և նվազագույն ու միջին աշխատավարձերի որոշակի հարաբերակցությունները:

Քաղաքաշինության նախարարության աշխատանքի արդյունավետության գնահատման առաջնային ցուցանիշներից համարել հաշվետու տարում աղետի գոտու և հայրենադարձվող ընտանիքներին տրամադրվող բնակարանների քանակը:

Տարածքային կառավարման նախարարության աշխատանքի արդյունավետության գնահատման առաջնային ցուցանիշներից համարել հաշվետու տարում մարզերում ենթակառուցվածքային բնույթի աշխատանքների մեկնարկը և կոնկրետ ստեղծված աշխատատեղերի քանակները մարզերում, մարզերում գործող հարկատուներից մուտքերի դինամիկան, մարզերում գրանցվող նոր բիզնեսների թիվը:

Կրթության և գիտության նախարարության աշխատանքի արդյունավետության գնահատման առաջնային ցուցանիշներից համարել աշակերտների և ուսանողների ադապտացիոն ծրագրերի մշակումն ու ներդրումը:

Սոցիալ–ժողովրդագրական այլ միջոցառումներ.- Աշխատանքի նկատմամբ նվիրվածությունը, արդյունավետ օգտագործված աշխատաժամանակը, որակյալ ծառայության, արտադրանքի թողարկումը (թե՛ մասնավոր, թե՛ պետական հատվածում) դարձնել հայրենասիրության արտահայտության չափանիշ: Մեզ ծանոթ են նման մոտեցումներ հատկապես արևելյան տերություններից, որոնք նույնիսկ ոչ թե մոտեցում, այլ ազգային դիմագիծ են հանդիսանում նրանցից շատերի համար: Ահա հաջողության պարզ գրավականներից կարևորը: Այսօր հասարակությունը չի ճանաչում իր աշխատավորին, բարեխիղճ ու նվիրված պետական ծառայողին, պետք է նրանց գտնել ու ճանաչելի դարձնել, բայց հնարավորինս օբյեկտիվ և նվազագույնս ձևական, որպեսզի այս միջոցառումը էություն ու հեռանկար ունենա:

«Ժողովրդագրություն» դասընթացի լայնամասշտաբ ներմուծում բուհական լսարան, պարբերական մամուլում «Ժողովրդագրություն» սյունակի վարում: Այն հրատապ է մեզ համար: Այս դասաժամերին պետք է պարբերաբար լսարանում (ասել է թե՝ աշխատանքային ու ամուսնական տարիքի լսարանում) գտնվեն պետական, հասարակական կառույցների հայտնի ներկայացուցիչները (ունկնդրի, բանավեճի մասնակիցների և մոնիթորինգ իրականացնողների կարգավիճակներով): Իսկ «Ժողովրդագրություն» սյունակը պարբերական մամուլում Հայաստանին ու Սփյուռքին առնչվող վիճակագրությամբ, օտարերկրյա փորձի ու համեմատությունների ներկայացումով, կարծում ենք, կարող է բարձրացնել նաև տվյալ ԶԼՄ հեղինակությունը:

Կանանց կենսաթոշակի հաշվարկման սանդղակներում մեծ դերի վերապահումով հաշվի առնել չափահասության տարիքի հասցրած նրանց երեխաների թիվը: Օրինակ, յուրաքանչյուր երեխան հավասար լինի 5 տարվա ստաժի, կամ բացարձակ չաշխատած, բայց 3 և ավելի չափահաս երեխա ունեցած կանայք ևս ունենան կենսաթոշակային մեծ հնարավորություններ: Եկամտահարկի գործուն արտոնություն սահմանել 3, 4 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքի ծնողներին: Զուգահեռաբար կարելի է քննարկել որոշակի տարիքի հասած չամուսնացածների համար լրացուցիչ հարկի դրույքաչափ սահմանելու նպատակահարմարությունը (ԽՍՀՄ-ն ուներ նման նախադեպ):

Հաշվառման, վիճակագրության կատարելագործման և տեղեկացվածության բարելավում: Ունենք այսքան սուր խնդիրներ, մինչդեռ չունենք մեր պանդուխտների մասին ստույգ տեղեկություններ, թե՛ թվային, թե՛ որակական: Բացարձակ հավատ ընծայելով 1989, 2001 թվականների մարդահամարների արդյունքներին[1], հետագա տարիներին դրանց մեխանիկական «հավելագրումներով» մենք վտանգում ենք մեր անգամ մոտ ապագան: Քաղաքականություն մշակողը և իրականացնողը պետք է սկզբունքային խնդիրներ դնի միգ-

[1] *Խոջաբեկյան Վ.Ե.,* «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի նախաշեմին», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2002, էջ 304, 308-309:

րացիոն և վիճակագրական ծառայությունների առջև, որպեսզի վերջիններիս աշխատանքները համապատասխան բնագավառներում լինեն նպատակային և ծառայեն ազգային ու պետական հիմնական խնդրի իրագործմանը:

Միջազգային կազմակերպությունների և ծրագրերի (այդ թվում մարդկանց առևտրի և անօրինական միգրացիայի հարցերով զբաղվող) ռեսուրսների առավելագույնս կազմակերպված, արդյունավետ և ամբողջական օգտագործում՝ դրանք ծառայեցնելով Միգրացիոն և ժողովրդագրական ծրագրի իրագործմանը:

Այսպիսով, ժողովրդագրական խնդիրները ցավոտ և ապագան վտանգող հարցերից են: Դրանց ուղղությամբ աշխատանքներ իրականացվում են[1]: Սակայն հիմնական բացը պետության ամենաբարձր մակարդակներում հետևողական և ծրագրային աշխատանքի պակասն է, *վեկտորի բացակայությունը:*

Մայիս, 2010թ.

ДЕМОГРАФИЧЕСКИЕ И МИГРАЦИОННЫЕ ПРОБЛЕМЫ В АРМЕНИИ

Арсен Петросян

Резюме

В период независимости из Армении мигрировало порядка 1.5 млн. человек. В тот же период естественный прирост населения составил около 450 тысяч. Демографическая и миграционная ситуация в Армении напряженная: страна на пороге демографического кризиса.

Демографические показатели очень чувствительны к непосредственной среде, геополитическим изменениям, и можно с уверенностью утверждать, что упущение из поля зрения этих показателей даже на 1-2 квартала чревато тяжелейшими последствиями. Опыт разных стран и международных организаций показывает, что в условиях современных демографических тенденций, международного разделения труда, занятости, проблем квалификации кадров, настоятельной необходимости эффективного использования капитала перспективы конкретной страны и нации определяют национальные законодательства, политические программы и воля соответствующего государства.

[1] ԱՎԾ-ի կողմից իրականացված, ինչպես նաև ՄԱԿ առանձին կառույցների հովանավորությամբ կատարված հետազոտությունները:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ. Ի՞ՆՉ Է ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՓՈՐՁԸ

Սուրեն Գոմցյան[*]

Ներածություն

2009թ. վերջին Հայաստանի կենսաթոշակային համակարգի կառուցվածքային բարեփոխման նախագիծը մտցվեց Ազգային ժողով: Սպասվում է, որ նոր համակարգը կիրառության մեջ կմտնի 2011թ. հունվարի 1-ից: Հայաստանի կենսաթոշակային համակարգի բարեփոխման անհրաժեշտությունը պայմանավորված է սոցիալական և տնտեսական բազմաթիվ պատճառներով, որոնցից առավել կարևոր են.

- ***գործազրկության և զբաղվածության մակարդակը*** – տնտեսական դժվարությունները և արդյունաբերության անկումը հանգեցրին գործազրկության մակարդակի բարձրացման և աշխատավարձի հարաբերական նվազման: Գլոբալ ճգնաժամն իր հերթին խորացրեց հիմնախնդիրը: Ճգնաժամի պայմաններում Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների կենսաթոշակային համակարգերի վիճակի մասին Համաշխարհային բանկի (ՀԲ) 2009թ. նոյեմբերին հրապարակած զեկույցում նշվում է, որ պետական կենսաթոշակային համակարգերի եկամտային մասը, գործազուրկների թվի աճի և աշխատավարձի նվազման հետևանքով, լուրջ «հարված» է ստացել, այն դեպքում, երբ ծախսային մասն ավելացել է, քանի որ գործազուրկների թվի աճը խթանում է շուտ թոշակի անցնելը և անաշխատունակության սոցիալական վճարներ ստանալու համար դիմելը: Ընդ որում, կենսաթոշակի չափը նույնն է մնացել, իսկ որոշ դեպքերում նույնիսկ աննշան բարձրացել է, քանի որ պետությունները հակված չեն պակասեցնել այն անգամ աշխատավարձերի իջեցման պարագայում: Կենսաթոշակային ապահովման համակարգերի եկամուտների

[*] Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, իրավաբանական գիտությունների թեկնածու:
Հեղինակը շնորհակալ է Հայկ Եգանյանին Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային բարեփոխումների նախագծին ծանոթանալիս ցուցաբերած օգնության և Էմիլյա Միրզոյանին՝ արժեքավոր մեկնաբանությունների համար:

զգալի կորուստը ծախսերի ոչ մեծ աճի հետ մեկտեղ հանգեցնում է կենսաթոշակների ֆինանսավորման դեֆիցիտի կամ ավելացնում է կենսաթոշակների ֆինանսավորման արդեն առկա դեֆիցիտը [1, p. 4]:

- ***վատթարացող ժողովրդագրական վիճակը*** – բնակչության «ծերացման» խնդիրը բավական վառ է արտահայտված Հայաստանում, ինչի արդյունքում նկատվում է կենսաթոշակային տարիքի անձանց թվաքանակի ավելացման և աշխատունակ տարիքի անձանց թվաքանակի նվազման միտում: ՀՀ կառավարության տվյալներով՝ 2011թ. սոցիալական վճարներ կատարող անձանց թիվը պակաս կլինի թոշակառուների թվից [2]: Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության 2010թ. բյուջեում կենսաթոշակների վճարման համար հատկացվել է 180 մլրդ դրամ, որից միայն 105 մլրդ-ն պետք է ֆինանսավորվի սոցիալական վճարների հաշվին [3]: Վատթարացող ժողովրդագրական իրավիճակը կապված է նաև վերջին երկու տասնամյակում Հայաստանից արտագաղթի մեծ ցուցանիշների հետ:
- ***հարկերի վճարումից խուսափումը*** – հարկերից խուսափելը թեև գուցե չի վերածվել «ազգային սպորտաձևի», բայց բավական տարածված է և բացասաբար է անդրադառնում այն անձանց թվի վրա, որոնք պարտադիր սոցիալական ապահովության վճարներ են կատարում: Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ զբաղվածների թիվը Հայաստանում գերազանցում է 1,1 մլն-ը, բայց սոցիալական վճարներ կատարում է միայն այդ թվաքանակի մեկ երրորդը (հարկ է հաշվի առնել, որ զբաղվածների 45%-ը հաշվառված է գյուղատնտեսությունում, և գործող օրենսդրության համապատասխան՝ այս ճյուղում սոցիալական վճարներ չեն կատարվում)[1]: Ընդ որում, թոշակառուների թիվը կազմում է 350 հազար [3]:

Մեր նպատակը չէ Հայաստանի կենսաթոշակային համակարգի «մասնավորեցման » նախագիծն արդարացնելը կամ քննադատելը, ինչպես նաև մասնավոր կենսաթոշակային համակարգի մի ինչ-որ ասպեկտի ինքնատիպ ուսումնասիրությունը: Ընդամենը փորձել ենք ընդհանրացնել մասնավոր կենսաթոշակային համակարգերի կիրառման արտասահմանյան փորձը և առանձնացնել առավել էական խնդիրները, որոնց բախվել են օտարերկրյա կառավարությունները դրանք կիրարկելիս: Ընդ որում, վերլուծվող գիտական հետազոտությունների հիմնական մասը վերաբերում է Լատինական Ամերի-

[1] Հայաստանի Հանրապետության «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» օրենքի համապատասխան՝ սոցիալական վճարներ կատարում են. 1) գործատուները, 2) վարձու աշխատողները, 3) անհատ ձեռնարկատերերը և նոտարները [4, հոդ. 3 կետ 4]:

կայի երկրներին, քանի որ այս տարածաշրջանի երկրների մեծամասնությունում մասնավոր կենսաթոշակային համակարգերը գործում են համեմատաբար երկար ժամանակի ընթացքում. Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մի շարք երկրներ միայն վերջերս են կառուցվածքային բարեփոխումներ անցկացրել ազգային կենսաթոշակային համակարգերում: Նկատի ունենալով հոդվածում կիրառած մեր մոտեցումը՝ հազիվ թե կենսաթոշակային ապահովման բնագավառում գիտական նոր ուսումնասիրություններին ուշադիր հետևող մասնագետներն այս ուսումնասիրության մեջ նոր շատ բան գտնեն: Սակայն, քանի որ վերջին տարիներին երկրում ակտիվ բանավեճեր են ընթանում կենսաթոշակային բարեփոխումների շուրջ, կարծում ենք՝ հոդվածը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ընթերցող լայն շրջանակի համար և կնպաստի այն բանին, որ կենսաթոշակային բարեփոխման առանձին հարցերի վերաբերյալ բանավեճերում գերազանցեն հիմնավորված և հաստատված փաստերը, այլ ոչ թե հոչակագրային, միակողմանի և իրականությանը չհամապատասխանող հայտարարությունները, որոնք երբեմն մեծ ազդեցություն են գործում կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ հանրային կարծիքի ձևավորման վրա[1]: Մինչև այժմ Հայաստանի կենսաթոշակային համակարգի բարեփոխման սակավաթիվ որակյալ հետազոտություններից մեկը պատրաստվել է 2008թ. կենսաթոշակային բարեփոխումների նախապատրաստման խմբի կողմից [7]:

Հոդվածի կառուցվածքը հետևյալն է. երկրորդ մասում ներկայացված են մասնավոր կենսաթոշակային համակարգերի համառոտ պատմությունը և դրանց հիմնական տարբերությունները պետական համակարգերից, երրորդ մասը նպատակ ունի պատասխանել այն կարևոր հարցին, թե հասնում են արդյոք մասնավոր կենսաթոշակային համակարգերն այն նպատակներին, որոնք դրվում են նրանց առջև մինչև բարեփոխումը, չորրորդ մասում մասնավոր կենսաթոշակային համակարգերի գործառնության փորձի մասին գիտական ուսումնասիրությունների վերլուծության հիման վրա թվարկվում են այդ համակարգերի հիմնական ռիսկերն ու խնդիրները, վերջում արվում են որոշ եզրակացություններ:

[1] Մասնավորապես, կենսաթոշակային բարեփոխման մասին բանավեճերից մեկում նշվել է, որ «առաջին անգամ այս համակարգը (մասնավոր կենսաթոշակային համակարգը – *Ս.Գ.*) ներդրվել է Չիլիում՝ [Ավգուստո] Պինոչետի օրոք, բայց հիմա քաղաքականությունը փոխվել է, և Չիլիի ներկայիս նախագահը [Միշել Բաշելեն] ձգտում է հետ վերադառնալ նախկին [պետական կենսաթոշակային] համակարգին» [5]: Մինչդեռ իրականում ոչ թե հին մոդելին վերադառնալու փորձ արվեց, այլ Չիլիի նախկին նախագահ Միշել Բաշելեն ստեղծել էր կենսաթոշակային բարեփոխման հանձնաժողով, որի առաջարկություններն ընկան 2006թ. դեկտեմբերին ընդունված և երկրի մասնավոր կենսաթոշակային համակարգի կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների հիմքում: Առաջին հերթին, միջոցառումներ ձեռնարկվեցին մասնավոր կենսաթոշակային համակարգի ծածկույթի բարձրացման, կենսաթոշակային ֆոնդերի միջև մրցակցության ուժեղացման և նրանց կոմիսիոն պարգևատրումների նվազեցման, կանանց և տղամարդկանց համար կենսաթոշակային ապահովման հավասար պայմանների ստեղծման ուղղությամբ [6]:

1. Մասնավոր կենսաթոշակային համակարգերի զարգացումը

Առաջին անգամ մասնավոր կենսաթոշակային համակարգ ներդրվել է Չիլիում 1981թ., Ավգուստո Պինոչետի կառավարման տարիներին, այն բանից հետո, երբ երկրի գործող պետական կենսաթոշակային համակարգը հայտնվեց ճգնաժամում. այն ավելի շատ կենսաթոշակներ էր վճարում, քան մուծումներն էին: Քանի որ բարեփոխումն իրականացվեց ռազմական դիկտատուրայի պայմաններում, միջազգային հանրության ուշադրությունը դրա նկատմամբ զգալի չէր: Սակայն 1989թ. Չիլիում ժողովրդավարության ինստիտուտների հաստատումից հետո իրավիճակը փոխվեց: Դրան նպաստեցին նաև ֆոնդային շուկայի աճը, խնայողությունների բարձր մակարդակը և Չիլիում տնտեսական աճն այդ թվականին՝ տարածաշրջանի մյուս երկրների համընդհանուր ռեցեսիայի ֆոնին, քանի որ մի շարք տնտեսագետներ Չիլիի հաջողությունները կապում էին կենսաթոշակային համակարգի մասնավորեցման հետ [8, p. 497]: Հետագա ավելի քան 25 տարիներին Լատինական Ամերիկան վերածվեց կենսաթոշակային բարեփոխումների լաբորատորիայի. տասը երկիր ամբողջությամբ կամ մասնակի մասնավորեցրեց կենսաթոշակային համակարգերը (կառուցվածքային բարեփոխումներ), և միայն ութը պահպանեց պետական կենսաթոշակային համակարգը՝ իրականացնելով պարամետրիկ կամ ոչ կառուցվածքային փոփոխություններ՝ երկարատև հեռանկարում համակարգի ֆինանսական առողջացման նպատակով (օրինակ, կենսաթոշակային տարիքի կամ վճարների չափի ավելացման, կենսաթոշակային համակարգի կամավոր կուտակային մասի ստեղծման միջոցով և այլն) [9, pp. 317–319]: Լատինական Ամերիկայի երկրների փորձն օգտագործվեց նաև Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի որոշ երկրներում համանման բարեփոխումներ իրականացնելիս:

Կենսաթոշակային համակարգերի բարեփոխման հանդեպ մեծ հետաքրքրությունը վերջին երկու տասնամյակում պայմանավորված է բնակչության ծերացմամբ. ՄԱԿ հաշվարկներով՝ 60-ից ավելի տարիք ունեցող մարդկանց թիվը 2000-2050թթ. եռապատկվելու է [8, p. 491]: Կյանքի տևողության երկարացմանը և ծնելիության կրճատմանը զուգընթաց այդ գործոնը կրճատում է ռեսուրսային բազան, որի հաշվին պետությունները կարող են ֆինանսավորել ընդլայնվող սոցիալական պարտավորությունները:

Մասնավոր և պետական կենսաթոշակային համակարգերը միմյանցից տարբերվում են չորս հիմնարար բնութագրերով. վճարներ , եկամուտներ, ֆինանսավորում և կառավարում: Մասնավոր համակարգը բնութագրվում է վճարների որոշակի չափով (*defined contribution, DC*), եկամուտների անորոշ չափով (դրանք կախված են անհատական հաշվին կուտակված գումարից), լրիվ ֆինանսավորված կենսաթոշակային պլանով (կենսաթոշակային վճա-

րումներն իրականացվում են այն միջոցներից, որոնք կուտակվում են աշխատողի աշխատանքային գործունեության ժամանակաշրջանի ընթացքում) և մասնավոր կառավարմամբ (թեև գործնականում կառավարումը կարող է իրականացվել նաև պետական կամ խառը կառույցների կողմից)։ Պետական կենսաթոշակային համակարգն ունի վճարների անորոշ չափ (ժամանակի ընթացքում դրանք կարող են ավելանալ՝ ֆինանսական հավասարակշռության պահպանման նպատակով, քանի որ կենսաթոշակառուների և վճարողների հարաբերակցությունը կարող է փոխվել բնակչության ծերացման արդյունքում), եկամուտների որոշակի չափով (*defined benefit, DB*), կարճաժամկետ ֆինանսավորմամբ (*pay-as-you-go, PAYG*) և պետական կառավարմամբ։

Կիրառության մեջ հանդիպում են մասնավոր կենսաթոշակային համակարգերի երեք տեսակ. անկախ, զուգահեռ և խառը մոդելներ։ Անկախ մոդելի շրջանակներում պետական կենսաթոշակային համակարգն ամբողջովին փոխարինվում է մասնավոր համակարգով՝ իր բոլոր չորս հիմնական բնութագրիչներով։ Ընդ որում, որոշակի տարիքի հասած անձանց համար կարող է պահպանվել պետական համակարգը։ Զուգահեռ մոդելը ենթադրում է երկու համակարգերի միաժամանակյա գործառնություն, ընդ որում, աշխատողն իրավունք ունի ընտրել իր համար ավելի նախընտրելի համակարգը։ Վերջապես, խառը մոդելի պարագայում պետական և մասնավոր կենսաթոշակային համակարգերը միավորված են. կենսաթոշակի հիմնական մասը կամ առաջին աստիճանն (*first pillar*) ապահովվում է ի հաշիվ պետական համակարգի, իսկ լրացուցիչ կենսաթոշակը կամ երկրորդ աստիճանը (second pillar)՝ ի հաշիվ մասնավորի [9, p. 318]։ Ընդգծենք, որ չնայած այն հանգամանքին, որ հանրային աստիճանը առաջինն է հիշատակվում, ՀԲ մասնագետների կարծիքով՝ այն պետք է չափով մեծ չլինի, որպեսզի բավականաչափ տեղ թողնի ֆինանսավորվող աստիճաններին և ցածր պահի հարկային բեռը [10, p. 484]։

Մասնավոր կենսաթոշակային համակարգերին անցման շրջադարձային կետ դարձավ 1994թ. «Խուսափելով ծերունական ճգնաժամից» հայտնի աշխատության հրապարակումը [11]։ Դրանից հետո ՀԲ-ն և միջազգային այլ կազմակերպություններ սկսեցին աջակցել մասնավոր կենսաթոշակային համակարգերին անցմանը։ Շատ հետազոտողներ մասնավոր կենսաթոշակային համակարգն սկսեցին անվանել «բանկի մոդել»՝ «բանկ» ասելով նկատի ունենալով ՀԲ-ն։ Հաջորդ մի քանի տարիներին կենսաթոշակային համակարգերի բարեփոխումների վերաբերյալ բանավեճերում հիմնականում քննարկվում էր բարեփոխման այս մոդելը, և ՀԲ-ն օգնեց ավելի քան 80 երկրի փոփոխություններ կատարել ազգային կենսաթոշակային համակարգերում։ Այդ երկրներից ավելի քան 20-ը ստեղծեցին անհատական կենսաթոշակային կուտակային հաշիվներ։ Սակայն 2004-ից ՀԲ, ԱՄՀ և որոշ երկրների (որոնք արդեն մասնավորեց-

րել էին ազգային կենսաթոշակային համակարգերը) վերաբերմունքը կենսաթոշակային համակարգերի բարեփոխումների գործընթացի հանդեպ որոշակի փոփոխության ենթարկվեց: Փոփոխված վերաբերմունքի առաջին տարրերը ներկայացվեցին «Սոցիալական ապահովման մասին խոստման պահպանումը Լատինական Ամերիկայում» [12] աշխատությունում և ՀԲ անկախ գնահատման խմբի զեկույցում [13], որոնցում ասվում էր, որ հարկ է, որ ՀԲ-ն ավելի մեծ ուշադրություն նվիրի կենսաթոշակային համակարգերի պարամետրիկ բարեփոխումներին և մշակի այն անձանց համար սոցիալական ապահովման միջոցներ, որոնք կենսաթոշակային համակարգի ծածկույթից դուրս են: Ընդ որում, նշված տասնամյակում ՀԲ վերաբերմունքը կենսաթոշակային համակարգերի բարեփոխմանը մնում էր նույնը, պարզապես այն հարստացել էր արդեն իրականացված բարեփոխումների փորձով [14, pp. 6–7]: Որպես հետևանք՝ կենսաթոշակային համակարգերի բարեփոխման՝ ՀԲ մասնակցությամբ մշակվող նոր նախագծերը հաշվի են առնում նախկին նախագծերի թերությունների մեծ մասը: Մասնավորապես, ՀԲ կենսաթոշակային բարեփոխումների նախնական նախագծերը երեք աստիճան էին ներառում. առաջին աստիճանը՝ *PAYG* բաղադրիչը, երկրորդ աստիճանը՝ պարտադիր կուտակային կենսաթոշակը և երրորդը՝ կամավոր կուտակային բաղադրիչը: Այսօր ՀԲ նախագծերն արդեն հինգ աստիճան են ներառում: Հավելյալ երկու աստիճաններն են այսպես կոչված «զրոյական աստիճանը» (*"zero pillar"*), որն ունիվերսալ է և կախված չէ վճարներից , և այն աստիճանը, որը ներառում է ոչ միայն ուղղակի դրամական վճարումները թոշակառուներին, այլ նաև ոչ դրամական օգուտները, օրինակ՝ բնակարանով ապահովելու կամ առողջապահական համակարգից օգտվելու միջոցով: Բայց ռիսկերը, որոնցից մի քանիսը պայմանավորված են տվյալ երկրի առանձնահատկություններով, գոյություն ունեն նաև այժմ:

2. Մասնավոր կենսաթոշակային համակարգին անցման նպատակահարմարությունը և հնարավոր այլընտրանքները

Մինչև մասնավոր կենսաթոշակային համակարգերի ռիսկերի դիտարկումը անհրաժեշտ է պարզել ելակետային մի հարց. կա՞ն արդյոք մասնավոր կենսաթոշակային համակարգերի այլընտրանքներ, և արդյո՞ք իսկապես մասնավոր կենսաթոշակային համակարգը հաղթահարում է այն բոլոր խնդիրները, որոնց առջև կանգնում է պետական կենսաթոշակային համակարգը:

Սառա Բրուքսի (Օհայոյի պետական համալսարան) հետազոտությունում նշված են մի քանի գործոն, որոնք նպաստում են պետական կենսաթոշակային համակարգի կառուցվածքային բարեփոխման իրականացման հավանականությանը: Ցածր եկամուտներ ունեցող երկրների համար մասնավոր կենսաթոշակային համակարգի անցման հիմնական ազդակ է հանդիսանում

ազգային խնայողությունների մակարդակի բարձրացումը: Չնայած գիտական գրականության մեջ կենսաթոշակային համակարգի մասնավորեցման և խնայողությունների աճի միջև կապի առկայության ապացույցները հակասական են, մի շարք աշխատություններում հաջողվել է ապացուցել, որ նման կապ գոյություն ունի: Մասնավորապես, Ժ.Բեյլյուն և Գ.Ռեյսենն [15] ու Պ.Մրֆին և Ա.Մուսալեմը [16] գտել են մասնավոր խնայողությունների մակարդակների և պարտադիր ֆինանսավորվող կենսաթոշակային ծրագրերի միջև առկա կապի էմպիրիկ ապացույցներ:

Առավել զարգացած երկրները որպես հիմնական խթան դիտարկում են ժողովրդագրական խնդիրների հետևանքով կենսաթոշակային համակարգի երկարաժամկետ ֆիսկալ ճգնաժամից խուսափելու հնարավորությունը: Նշված հիմնական գործոնների հետ մեկտեղ կենսաթոշակային բարեփոխման համար կարևոր են նաև մի շարք այլ գործոններ.

1. պետական պարտքի մակարդակը. որքան այն բարձր է, այնքան ցածր են կենսաթոշակային մասնավորեցման հավանականությունն ու աստիճանը, քանի որ անցումային ծախսերը, որպես կանոն, ֆինանսավորվում են պետական պարտատոմսերի[1] թողարկման հաշվին, իսկ պարտքի բարձր մակարդակի պայմաններում արդեն նոր թողարկումները կարող են հանգեցնել սուվերեն վարկային ռեյթինգների իջեցման,
2. աշխարհաքաղաքական գործոնները, որոնք ասելիս պետք է հասկանալ նախ՝ հարևան երկրների միջև մրցակցությունը ներդրումների համար (հաջող բարեփոխումը մեկ երկրում, հատկապես տարածաշրջանում համեմատաբար հաջողակ երկրում, կարող է խթանել այլ երկրներին), երկրորդ՝ երկրի ներգրավվածությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների նախագծերում (երկրները, որոնք ավելի շատ են ներգրավված ՀԲ-ի կողմից հովանավորվող զարգացման նախագծերում, ավելի շատ են հակված կենսաթոշակային բարեփոխումների իրականացմանը)[2],
3. երկրում որոշակի վճարներով կենսաթոշակային սխեմաների գործողությունը, որոնք հովանավորվում են գործատուների կողմից, սակայն այս գործոնը վիճակագրական առումով նշանակալի է միայն զարգացած երկրների համար (այն զարգացած երկրները, որոնք մասնավոր կենսաթոշակային համակարգեր են ներդրել, բարեփոխումն իրականացրին

[1] Ֆինանսավորման մյուս երկու միջոցները՝ հարկերի բարձրացումը և այլ ոլորտներում պետական ծախսերի կրճատումը, քաղաքականապես պակաս ցանկալի են և դժվարհասանելի:

[2] Միջազգային ֆինանսական կազմակերպությունների նախագծերում ներգրավվածության և կենսաթոշակային բարեփոխման ավելի մեծ հավանականության միջև կապի առկայությունը մեծ չափով կապվում է երկրի կառավարության նախաձեռնության, այլ ոչ թե ՀԲ՝ իր շահերն այդ երկրում առաջ մղելու ցանկության հետ. կենսաթոշակային համակարգի ձևի մասին վերջնական որոշումն ընդունում են պետությունների կառավարություններն ու օրենսդիր մարմինները, իսկ ՀԲ կենսաթոշակային բարեփոխման տեխնոլոգիաների ուղղակի հասանելիությունն օգնում է նվազեցնել բարեփոխման ծախսերը:

կամավոր կուտակային աստիճանի գործողության ընդլայնմամբ և պարտադիր կարգով այն բոլոր աշխատողների վրա տարածելով) [8, pp. 510, 515–516][1]:

Այսպիսով, երկրների մեծամասնությունում մասնավոր կենսաթոշակային համակարգերին անցնելու հիմնական փաստարկն ու պատճառն այն է, որ պետական կենսաթոշակային համակարգն ի վիճակի չէ հաղթահարել ժողովրդագրական փոփոխությունները, այն դեպքում, երբ ֆինանսավորվող մոդելը կենսաթոշակային համակարգն ազատում է ժողովրդագրական շոկից[2]: Նիկոլաս Բարը (Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքագիտության դպրոց) այս փաստարկն առասպել է անվանում, որը, ինչպես և ցանկացած այլ առասպել, կարող է ճշմարտության տարր պարունակել, «սակայն ուշադիր դիտարկման պարագայում այդ տարրը կամ թույլ է, կամ հիմնված է սահմանափակող թույլտվությունների վրա և, հետևաբար, դեպի մոլորություն տանող ուղեցույց է քաղաքականության համար» [17, p. 7]:

Ծնելիության նվազումը և բնակչության ծերացումը հանգեցնում են այն բանին, որ *PAYG* համակարգը հայտնվում է դժվարության առջև, քանի որ ավելի քիչ աշխատողներ պետք է ֆինանսավորեն ավելի շատ թոշակառուների կենսաթոշակային վճարումները: Այս խնդրի լուծման տարբեր սցենարներ կան, որոնցից յուրաքանչյուրն իր թերություններն ունի. կենսաթոշակների իջեցում, աշխատողների և գործատուների կատարած սոցիալական վճարների չափի բարձրացում, կենսաթոշակային տարիքի բարձրացում և այլն: Քանի որ մասնավոր կենսաթոշակային համակարգը ենթադրում է, որ յուրաքանչյուր աշխատող ինքնուրույն է ֆինանսավորում իր կենսաթոշակը, համարվում է, որ այն վերացնում է այդ խնդիրը: Բայց ժողովրդագրական փոփոխություններով պայմանավորված հիմնական խնդիրն այն է, որ ընկնում է արտադրությունը: *PAYG* համակարգի վրա ազդեցությունն ի հայտ է գալիս աշխատողներին տրվող սոցիալական վճարների բազայի նեղացման միջոցով: Մասնավոր կենսաթոշակային համակարգի համար այդ խնդիրն աննկատ է մնում, բայց այն գոյություն ունի, քանի որ ի հայտ է գալիս անհամապատասխանություն առաջարկի և պահանջարկի միջև ինչպես ապրանքային, այնպես էլ կապիտալի

[1] Հատկանշական է, որ Ս.Բրուքսի հետազոտության արդյունքները հաստատում են առավել արմատական կենսաթոշակային բարեփոխման իրականացման հավանականությունը պակաս ժողովրդավարական երկրներում: Ավելի ուժեղ ժողովրդավարական ինստիտուտներ ունեցող երկրներն ընդունում են մասնավոր կենսաթոշակային համակարգերին փուլային անցման մոդելները: Մասնավորապես, առավել արմատական կենսաթոշակային բարեփոխումներ են իրականացվել ավտորիտար (Պերու և Չիլի) կամ «կիսադեմոկրատական» (Մեքսիկա և Ղազախստան) կառավարություններ ունեցող երկրներում [8, p. 517]:

[2] Հայաստանում նույնպես այս փաստարկը քանիցս կառավարության բարձրաստիճան պաշտոնյաները նշել են որպես երկրում մասնավոր կենսաթոշակային համակարգի կիրառման հիմնական պատճառներից մեկը [օրինակ՝ 18]:

շուկաներում: Ենթադրենք, ավելի բազմաքանակ սերունդը փոխարինվում է համեմատաբար սակավաթիվ սերնդով: Հետևաբար, այն շրջանում, երբ արտադրությունն ընկնում է, գոյություն ունեն ավելի մեծ թոշակային կուտակումներ: Հին սերունդը սկսում է օգտագործել իր կուտակումները կենսաթոշակի անցնելուց հետո սպառման ցանկալի մակարդակն ապահովելու համար: Նրանց սպառման մասշտաբը կգերազանցի երիտասարդ սերնդի կուտակային վճարների չափերը: Ապրանքների շուկայում լրացուցիչ պահանջարկը կհանգեցնի ինֆլյացիոն միտումների՝ դրանով իսկ պակասեցնելով երկրորդ սերնդի կուտակումների գնողունակությունը: Կապիտալի շուկաներում իրավիճակը փոքր-ինչ այլ է. առաջին սերնդի կողմից ակտիվների հավելյալ առաջարկն իջեցնում է դրանց գինը՝ միաժամանակ պակասեցնելով կենսաթոշակային կուտակումները և առաջին սերնդի գնողունակությունը: Միաժամանակ բացասական ազդեցություն կգործվի նաև երկրորդ սերնդի կուտակումների վրա՝ ներդրումների եկամտաբերության մակարդակի նվազման հետևանքով: Երկու դեպքում էլ թոշակառուները չեն ստանում այն կենսաթոշակը, որի հույսն ունեին: Այլ խոսքով՝ ինչպես և պետական կենսաթոշակային համակարգը, մասնավորը նույնպես բախվում է ժողովրդագրական հիմնախնդրին, սակայն այդ խնդիրն անուղղակի է և պակաս տրանսպարենտ[1]: Ընդ որում, երկու համակարգերում էլ ժողովրդագրական հիմնախնդիրը լուրջ ազդեցություն չի գործում կենսաթոշակի վրա, եթե զուգահեռ տեղի է ունենում արտադրության աճ. առաջին համակարգի համար՝ ի հաշիվ աշխատավարձի ավելացման, իսկ երկրորդի համար՝ ի հաշիվ ապրանքների և կապիտալի շուկաներում պահանջարկի և առաջարկի միջև հավասարակշռության ձեռքբերման: Այսպիսով, կենսաթոշակային համակարգերի ժողովրդագրական հիմնախնդիրների լուծման համար առաջնային է արտադրությունը, այլ ոչ թե կենսաթոշակային համակարգի տեսակը [17, pp. 7–10]:

Արտադրության ավելացումը հնարավոր է երկու ճանապարհով. 1. ի հաշիվ յուրաքանչյուր աշխատողի արտադրողականության և, որպես արդյունք, նրանց աշխատավարձի բարձրացման (օրինակ՝ կրթության մակարդակի բարձրացմամբ), 2. ի հաշիվ աշխատողների թվի ավելացման (օրինակ՝ կենսաթոշակային տարիքի բարձրացման, աշխատողների ուղղակի ներմուծման՝ միգրացիոն կանոնների հեշտացման միջոցով), աշխատողների անուղղակի ներմուծման (երիտասարդ բնակչությամբ երկրներում կապիտալի ներդրմամբ) [17, p. 10]:

[1] Հետաքրքիր է, որ հոդվածի նախնական տարբերակում Ն.Բարը մասնավոր կենսաթոշակային համակարգի շրջանակներում ժողովրդագրական հիմնախնդրի պակաս տրանսպարենտության մասին նշում է. «...այդ պատճառով [մասնավոր կենսաթոշակային համակարգը], հնարավոր է, ավելի նախընտրելի է քաղաքական գործիչների համար, որոնք գերադասում են, որ վատ նորություններն ընկալվեն որպես շուկայական մեխանիզմների, այլ ոչ թե քաղաքական լուծումների արդյունք» [20, p. 9]: Վերջնական կրճատված տեքստում մեջբերված հատվածը հանված է:

Ն.Բարի փաստարկի հիմնավորվածությունն ընդունելով՝ հանուն արդարության անհրաժեշտ է նշել, որ գործնականում ներկայացված իդեալական մոդելներն այնքան էլ կոռեկտ չեն: Մասնավորապես, արտադրության աճին զուգահեռ հնարավոր է նաև բարձր գնաճ: Հետևաբար, պետական համակարգի շրջանակներում կենսաթոշակների գնողունակության պահպանման համար աշխատողների բարձր աշխատավարձերը, հաշվի առնելով նաև նրանց պակասող թվաքանակը, կարող են չբավարարել կենսաթոշակների ֆինանսավորման համար:

Որպես պետականի համեմատ մասնավոր կենսաթոշակային համակարգի հաջորդ առավելություն հաճախ նշում են երկրորդի «աշխատանքի շուկայի ճիշտ խթաններ» ստեղծելու կարողությունը: Իսկապես, մասնավոր կենսաթոշակային համակարգը ենթադրում է աշխատողների վճարումների չափերի և նրանց կենսաթոշակների չափերի միջև սերտ կապի առկայություն, և դա նպաստում է աշխատանքի շուկայում որոշ խեղաթյուրումների վերացմանը: Հայաստանում առաջարկվող կենսաթոշակային բարեփոխումների նախագիծը եկամուտների հայտարարագրման երկու ազդակ է ստեղծում. սոցվճարների և կենսաթոշակների միջև կախվածությունը և աշխատողի կուտակային 5%-ոց վճարի պետական կրկնակիհացումը [19][1]: Բայց նման խթանիչ էֆեկտի կարելի է հասնել պետական կենսաթոշակային համակարգի շրջանակներում, եթե կենսաթոշակները վճարվում են պարտադիր սոցիալական ապահովության իրականացված վճարներին համամասնորեն [17, p. 14]: Ավելին, ինչպես ցույց կտրվի ստորև, էմպիրիկ հետազոտությունները չեն հաստատում մասնավոր կենսաթոշակային համակարգերի որոշ խթանիչ էֆեկտները:

Այս նկատառումներից, ինչպես նաև այն ռիսկերից ելնելով, որոնք ի հայտ եկան մասնավոր կենսաթոշակային համակարգերի գործառնության ընթացքում (բարձր ինֆլյացիա, ֆինանսական չզարգացած շուկաներ, կուտակման վրա ազդող բարձր վարչական ծախսեր), մի շարք հետազոտողներ իրենց ուշադրությունը փոխադրեցին ժողովրդագրական հիմնախնդրի հետ բախված պետական կենսաթոշակային համակարգերի բարեփոխման այլընտրանքային տարբերակների առաջարկների վրա: Նման տարբերակներից մեկը կենսաթոշակային ֆոնդերի ստեղծումն է՝ հիմնված որոշակի չափերի պարտադիր վճարների վրա (*DC* սխեմա), ինչպես և մասնավոր կենսաթոշակային համակարգի երկրորդ աստիճանը, բայց պետության կողմից կառավարվող: Նման ֆոնդերի օրինակներ են Սինգապուրի Կենտրոնական խնայողական ֆոնդը (*Central Provident Fund*) և Մալայզիայի Աշխատողների խնայողական ֆոնդը

[1] Տարբեր աղբյուրների տվյալներով՝ ոչ ֆորմալ կամ չգրանցված զբաղվածությունը Հայաստանում կազմում է 140-180 հազ. մարդ: Հայաստանի Հանրապետության Վիճակագրական ծառայության ուսումնասիրության համաձայն՝ 2005թ. ոչ ֆորմալ զբաղվածությունը կազմել է զբաղված բնակչության 22,9%-ը [7, с. 33]:

(*Employees Provident Fund*)։ Դրանք զգալի պոտենցիալ ունեցող զարգացման ֆոնդեր են, որոնք իրենց մասնակիցներին հնարավորություն են ընձեռում բավարարել իրենց պահանջները կրթության, առողջապահության, բնակարանով ապահովման, ինչպես նաև կենսաթոշակների զանազան տեսակների ձեռքբերման ոլորտներում։ Մասնավոր սեկտորի՝ նշված երկու ֆոնդերի ակտիվների ներդրումային գործընթացին մասնակցության ավելացումը նշանակում է, որ մասնավոր սեկտորը նոր նախաձեռնություններ է մտցնում պետության կողմից կառավարվող ֆոնդերում [10, p. 489]։

Մյուս այլընտրանքը այսպես կոչված որոշակի վճարներով «երևակայական» կամ «պայմանական» կենսաթոշակային համակարգերն են (*notional defined contribution pension system*, *NDC*)։ Այս կենսաթոշակային համակարգի էությունն այն է, որ անհատական կենսաթոշակային հաշիվները և տոկոսները, որ ստացվում են կուտակված ակտիվների ներդրման արդյունքում, ֆիկտիվ են։ Երբ անձը թոշակի է անցնում, հաշվարկվում է այդ անձի կենսաթոշակային բոլոր փոխանցումների և դրանց հաշվեգրված տոկոսների գումարը։ Այդ գումարից ելնելով էլ վճարվում է կենսաթոշակը։ Այսպիսով, *NDC* սխեման շատ նման է մասնավոր կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչին, բայց այն տարբերությամբ, որ կուտակված գումարը մինչև թոշակի անցնելը գոյություն ունի միայն թղթի վրա։ Իրական տոկոսները դրա վրա չեն հաշվեգրվում, քանի որ աշխատողների թոշակային փոխանցումներն օգտագործվում են թոշակառուների ներկա սերնդի կենսաթոշակները վճարելու համար։ *NDC* սխեմաների շրջանակներում կարևոր հարց է երևակայական կամ պայմանական կուտակված միջոցների վրա հաշվեգրվող տոկոսադրույքների որոշումը։ Այդ դրույքը որոշվում է՝ ելնելով ՀՆԱ աճի մակարդակից, շուկայական տոկոսադրույքներից, միջին աշխատավարձերի աճի մակարդակից և այլն։ Հետևաբար, տոկոսադրույքն այն լրացուցիչ դիսկրեցիոն գործոնն է (կենսաթոշակային տարիքի, սոցիալական վճարների չափի և այլնի կողքին), որն օգտագործվում է կենսաթոշակային համակարգի ֆինանսական բնութագրիչների վրա ազդելու համար։ Նման կենսաթոշակային համակարգ է գործում, մասնավորապես Շվեդիայում[1]։

Ըստ էության, *PAYG* համակարգ լինելով՝ *NDC* սխեման հասնում է երկու արդյունքի, որոնք հատուկ են մասնավոր կենսաթոշակային համակարգերին. առաջին՝ այն հասնում է խիստ կախվածության կենսաթոշակների չափի և աշխատողների վճարումների չափերի միջև և տանում է դեպի անհատական թոշակների գումարների միջև տարբերության ավելացման, երկրորդ՝ այն կեն-

[1] Հետաքրքիր է նշել, որ Շվեդիայում *NDC* կենսաթոշակային համակարգի անցնելուց երեք տարի առաջ այդ սխեման ներդրվեց Լատվիայում։ Եվ այս փաստը թույլ տվեց շատ քննադատների նշել, որ *NDC* սխեմայի ներդրումը Լատվիայում ծրագրի «փորձնական գործարկում» էր Շվեդիայում այն ներդնելուց առաջ [22, p. 28]։

սաթոշակների չափը կախվածության մեջ է դնում մահացության և կենսաթոշակի անցնելու ընտրված տարիքի գործակցից: Հետևաբար, որքան երկար է զբաղվածության ժամանակը և բարձր՝ աշխատավարձը, այնքան բարձր պետք է լինի կենսաթոշակի չափը:

Սակայն Մայքլ Սայքոնն արդարացիորեն նշում է, որ *NDC* սխեման նույնպես թույլ չի տալիս լուծել ժողովրդագրական հիմնախնդիրը և, ինչպես և պետական կենսաթոշակային համակարգը, բնակչության ծերացման և կյանքի տևողության ավելացման պարագայում բախվում է ֆինանսավորման նույն խնդիրներին [21, pp. 93–94]:

3. Մասնավոր կենսաթոշակային համակարգերի ռիսկերը

Դիտարկենք առավել էական ռիսկերն ու խնդիրները, որոնց հետ բախվել են մասնավոր կենսաթոշակային համակարգեր ունեցող պետությունները:

Կենսաթոշակային համակարգի ծածկույթը. Կարմելա Մեսա-Լագոն (Փիթսբուրգի համալսարան) Լատինական Ամերիկայի երկրների օրինակով ցույց է տվել, որ մասնավոր կենսաթոշակային համակարգերը տանում են կենսաթոշակային համակարգով աշխատուժի ծածկման կրճատման. ծածկման միջին ցուցանիշը տասը երկրներում, որոնք իրականացրել են կառուցվածքային կենսաթոշակային բարեփոխումներ, մասնավոր կենսաթոշակային համակարգի ներդրման պահից յուրաքանչյուր երկրում նվազել է 38-ից մինչև 26,3%-ի, ընդ որում, մնացած ութ երկրում պետական կենսաթոշակային համակարգերի ծածկումը 2004թ. կազմել է 41,4% [9, pp. 320–322]: Հետազոտության արդյունքները տրամագծորեն հակառակ էին նախնական սպասելիքներին, որոնց համաձայն՝ մասնավոր կենսաթոշակային համակարգերը պետականի համեմատ պետք է ավելացնեին ծածկույթը կենսաթոշակային համակարգին միանալու համար աշխատողների մեծ ազդակների հետևանքով:

Մեկ այլ հետազոտությունում Տապեն Սինխան և Մարիա դե լոս Անխելես Յանեզը նշում են, որ Մեքսիկայի կառավարությունը երկրի կենսաթոշակային համակարգի մասնավորեցման ժամանակ ենթադրում էր, որ կենսաթոշակային համակարգի ծածկույթը պետք է ավելանար ի հաշիվ բազմաթիվ աշխատողների ֆորմալ սեկտոր փոխադրման, և պետք է զարգանային ֆինանսական շուկաները: Բայց գործնականում բարեփոխված կենսաթոշակային համակարգը բախվեց որոշ հիմնախնդիրների. այն անձանց թվաքանակի նվազում, որոնք իրականացնում են վճարներ մասնավոր կենսաթոշակային ֆոնդերում, բարձր կոմիսիոն ծախսեր և բարձր հավանականությունն այն բանի, որ պետությունը հարկադրված կլինի օգնություն ցույց տալ ցածր եկամուտներ ունեցող թոշակառուներին, եթե թոշակի անցնելիս նրանց կուտակումները ցածր լինեն անհրաժեշտ նվազագույնից: Մյուս կողմից, պետական պարտա-

տոմսերի շուկան դարձել է ավելի զարգացած [23]:

Համաշխարհային բանկի 2005թ. անցկացրած հետազոտությունում նույնպես նշվում է, որ «թույլ ծածկույթը» ցույց է տալիս քաղաքացիների թերահավատությունը կենսաթոշակային համակարգերի նկատմամբ, իսկ երբեմն էլ՝ նույնիսկ դրանք մերժելը [12]: Ծածկման նվազման պատճառներն են ոչ ֆորմալ սեկտորի աճը, ոչ վարձու աշխատողների ծայրահեղ ցածր ծածկումը (*self-employed workers*), գործազուրկների մեծ թիվը և վճարների չափերի մեծացումը դեպքերի մեծամասնությունում, ինչը հետ է պահում կենսաթոշակային համակարգին միանալուց:

Ինչ վերաբերում է Հայաստանում առաջարկված կենսաթոշակային բարեփոխումների նախագծին, ցածր ծածկման խնդիրն այստեղ լուծված է, քանի որ նախագիծը հաշվի է առնում մասնավոր կենսաթոշակային համակարգում «զրոյական» և առաջին հանրային աստիճանների ներդրման վերաբերյալ ՀԲ հանձնարարականները, որոնք պետք է երաշխավորեն պետության կողմից ունիվերսալ կենսաթոշակների վճարումները (բազային և սոցիալական կենսաթոշակներ, որոնցից մեկը կախված է աշխատանքի ստաժից, մյուսը՝ ոչ) [24]: Ըստ էության, խոսքը խառը մասնավոր կենսաթոշակային համակարգի մասին է:

Կենսաթոշակային վճարումների չափերը. Կենսաթոշակային համակարգի արդյունավետության կարևոր ցուցանիշ են համարվում կենսաթոշակային վճարումների չափերը: Ենթադրվում է, որ մասնավոր կենսաթոշակային համակարգի անցնելու դեպքում քաղաքացիներին կենսաթոշակային վճարումների չափերը կավելանան: Ներկայումս մասնավոր և պետական կենսաթոշակային համակարգերի վճարումների համեմատական չափերի վերաբերյալ լուրջ էմպիրիկ հետազոտություններ չկան, քանի որ մասնավոր կենսաթոշակային համակարգերն առայժմ «հասուն» չեն համարվում: Սակայն մասնավոր կենսաթոշակային համակարգերի շրջանակներում ներդրումային լուրջ ռիսկեր կան: Հետազոտությունները, մասնավորապես, ցույց են տալիս, որ 2001-02թթ. ճգնաժամի հետևանքով եթե Արգենտինայում չվերականգնվեր պետական կենսաթոշակային համակարգը, ապա 30-ամյա ժամանակաշրջանում վճարներ կատարած միջին վիճակագրական քաղաքացու կենսաթոշակի չափը կկրճատվեր 65%-ով [9, p. 322]:

Գենդերային անհավասարության հիմնախնդիրը. Որպես կանոն, կանայք, անկախ կենսաթոշակային համակարգի ձևից, ավելի քիչ կենսաթոշակ են ստանում, քան տղամարդիկ: Անհավասարության պատճառներն են, մասնավորապես, այն, որ կանայք ավելի քիչ են մասնակցում վարձու աշխատանքում, խտրականություն կա աշխատավարձերի հարցում, կանայք ավելի շատ են մասնակցում բարձր որակավորում չպահանջող աշխատանքներում,

ինչը, որպես հետևանք, ավելի ցածր աշխատավարձ և թույլ սոցիալական երաշխիքներ է ենթադրում և այլն: Այս գործոնների արդյունքում կանանց կուտակումներն ավելի քիչ են ստացվում: Մասնավոր կենսաթոշակային համակարգերը թոշակներ վճարելիս միայն խորացնում են գենդերային հավասարության խնդիրը: Նախ՝ մասնավոր կենսաթոշակային համակարգեր ունեցող երկրների մեծամասնությունում կենսաթոշակ ստանալու համար անհրաժեշտ է որոշակի ժամանակաընթացքում իրականացնել կուտակային վճարներ, ինչը նվազեցնում է կանանց բարձր կենսաթոշակ ստանալու հավանականությունը: Երկրորդ՝ մասնավոր կենսաթոշակային համակարգերը կենսաթոշակային վճարումների չափերը խստորեն կապում են աշխատավարձի չափի հետ: Երրորդ՝ մասնավոր կենսաթոշակային համակարգերի շրջանակներում վճարումների չափը որոշելու համար կիրառվում են թոշակառուների կյանքի տևողության սեռից կախված աղյուսակներ (անհատական հաշվում կուտակված գումարը բաժանվում է կյանքի տևողության միջին ցուցանիշի վրա): Ընդ որում, կանանց կյանքի տևողության միջին ցուցանիշը մի քանի տարով ավելին է, քան տղամարդկանցը: Սա նշանակում է, որ նրանց կուտակումներն ավելի երկար ժամանակի վճարումներ պետք է ապահովեն, հետևաբար՝ կենսաթոշակի չափը փոքր կլինի, հատկապես եթե կանայք ավելի շուտ են կենսաթոշակի անցնում [9, pp. 322–323]:

Այսօր մասնավոր կենսաթոշակային համակարգի անցած ավելի շատ երկրներում են ուշադրության առնում երկու սեռերի հավասարության հարցը կենսաթոշակային համակարգերի շրջանակներում: Օրինակ, Չիլիում կենսաթոշակային օրենսդրության կատարելագործման միջոցառումների մշակման հատուկ հանձնաժողովն առաջարկել է կանանց թոշակի անցնելիս բոնուս վճարել յուրաքանչյուր երեխայի ծննդյան համար [14, p. 11]: Էսթել Ջեյմսը, Ալեխանդրա Քոքս Էդվարդսը և Ռեբեքա Վոնգը, հենվելով երեք երկրում (Չիլի, Մեքսիկա, Արգենտինա) գենդերային հավասարության վրա կենսաթոշակային բարեփոխումների ազդեցության վերաբերյալ հետազոտությունների արդյունքներին, առաջարկում են մասնավոր կենսաթոշակային համակարգի հանրային աստիճանի շրջանակներում ավելի բարձր կենսաթոշակ սահմանել կանանց համար և երկարացնել կանանց թոշակի անցնելու տարիքը [25]:

Հայաստանում կենսաթոշակային բարեփոխման նախագծում գենդերային անհավասարության էֆեկտը մասամբ լուծված է, քանի որ առաջարկվում է, նախ, հավասարեցնել տղամարդկանց և կանանց թոշակի անցնելու տարիքը, և երկրորդ՝ օգտագործել մահացության՝ երկու սեռի համար ընդհանրական աղյուսակներ կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի շրջանակներում անուիտետները և ծրագրային վճարները հաշվարկելիս [24, 26]:

Մրցակցությունը և վարչական ծախսերը. Մասնավոր կենսաթոշակային համակարգերի նախագծեր կազմողները պնդում էին, որ այդ համակարգերը, պետական կենսաթոշակային համակարգի մոնոպոլիայի վերացման և մրցակցության արդյունքում, հանգեցնում են վարչական ծախսերի նվազման: Սակայն գործնականում մասնավոր կենսաթոշակային համակարգերի անցած երկրներում նկատվեց ավելացող համակենտրոնացման միտում կենսաթոշակային կուտակումների կառավարման շուկայում: Մասնավորապես, Չիլիում վերելքի պահին գործում էին 22 կենսաթոշակային ֆոնդեր: 2007թ. այդ թիվն ընդամենը 5 էր, ընդ որում, 3 խոշորագույն ֆոնդերը վերահսկում էին շուկայի ավելի քան երկու երրորդը: Բեռնարդ Քեյսիի (Լոնդոնի տնտեսագիտության դպրոց) պնդմամբ, լուրջ կասկածներ կան կենսաթոշակային ֆոնդերի միջև մրցակցության հնարավորության վերաբերյալ. նախ՝ բավական դժվար է համեմատել վարչական ծախսերի գանձման տարբեր կառուցվածքները, երկրորդ՝ տարբեր կառավարիչներ եկամտաբերության տարբեր պլաններ են տրամադրում՝ կախված հաշվարկման վերցված շրջանից [22, p. 38]: Այնուամենայնիվ, օրինակ, Չիլիում օրենսդրությունը, մրցակցությունը խթանելու և սպառողների տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով, կենսաթոշակային ֆոնդերից պահանջում է լրիվ բաց տեղեկատվություն ծախսերի և միջնորդական վարձատրության մասին:

Համակենտրոնացման միտման և փոքր շուկաների համատեղ էֆեկտի հետ են կապում անբավարար մրցակցության և բարձր վարչական ծախսերի հիմնախնդիրը: Բայց, մյուս կողմից, մասնավոր կառավարող ընկերությունների մեծաթվությունը հանգեցնում է նրան, որ դրանք կորցնում են մասշտաբի խնայողության էֆեկտը: Մինչդեռ, պետական կենսաթոշակային համակարգի շրջանակներում մասշտաբի խնայողության գործոնն օգտագործվում է առավել օպտիմալ կերպով, քանի որ ամբողջ համակարգը գործառում է մեկ սուբյեկտով՝ հանձին պետության: Բացի այդ, մասնավոր կենսաթոշակային ֆոնդերը և կառավարող ընկերությունները զգալի գումարներ են ծախսում կենսաթոշակային կուտակումներ ներգրավելու (մարքեթինգային ծախսեր) և միջնորդների վարձատրության համար: Մասնավոր կառավարիչները վարձավճար են գանձում նաև կենսաթոշակային կուտակումների կառավարման համար:

Կարմելա Մեսա-Լագոյի հաշվարկներով՝ 2004թ. Լատինական Ամերիկայի ինը երկրում, որոնք մասնավոր կենսաթոշակային համակարգ ունեին, կառավարիչների վարչական ծախսերը աշխատավարձի դիսկոնտի ընդհանուր բաժնում (վարչական ծախսեր՝ գումարած անհատական կուտակային հաշվի գումարը) կազմել են 25,4%: Այլ խոսքով՝ անհատական կուտակային հաշվին փոխանցված յուրաքանչյուր դոլարի մեկ քառորդը ծախսվել է կառավարչի վարձավճարի և եկամտի վրա [9, pp. 323–324]: Ընդ որում, եթե վարչա-

կան ծախսերը թեկուզ և մասամբ հիմնված են ամուր ֆիքսված գումարի վրա, ապա ցածր աշխատավարձ ունեցող աշխատողներն ավելի քիչ միջոցներ են կուտակում, քան բարձր աշխատավարձ ունեցողները [27, p. 48]: Այս պատճառով կենսաթոշակի կուտակային մասը չպետք է փոքր լինի, այլապես վարչական ծախսերի բաժինը դրանում կարող է չափազանց բարձր լինել: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ միջին եկամուտների ցածր մակարդակի և, որպես հետևանք, լրացուցիչ խնայողությունների սահմանափակ հնարավորությունների պայմաններում երրորդ աստիճանին մասնակցությունը համեստ է լինում: Սա նշանակում է, որ կենսաթոշակի կուտակային մասի համեմատաբար մեծ չափերը պետք է ապահովված լինեն երկրորդ աստիճանի հաշվին (պարտադիր կուտակում):

Ոչ ֆորմալ սեկտորի հիմնախնդիրը. Ենթադրվում է, որ մասնավոր կենսաթոշակային համակարգերը խթաններ են առաջարկում կենսաթոշակային համակարգին մասնակցելու համար (ունենալ անհատական հաշիվ, խիստ կախվածություն մուտքերի և կենսաթոշակային վճարումների միջև): Այս խթանները պետք է հանգեցնեն ոչ ֆորմալ սեկտորի փոքրացմանը, աշխատավարձի ֆորմալ իջեցման և վճարների կատարման ուշացման դեպքերի նվազեցմանը: Սակայն հաճախ վճարների բարձր չափերը և ժամանակի առումով խթանների «հեռավորությունը» (դեռ շատ ժամանակ կա թոշակի անցնելու) հանգեցնում են նրան, որ ակնկալիքները չեն արդարացվում: Լատինական Ամերիկայի մասնավոր կենսաթոշակային համակարգ ունեցող տասը երկրների տվյալները ցույց են տալիս, որ սկսած 2004թ., երբ ներդրվել է այս համակարգը, կուտակային վճարներ կատարող բնակչության թվաքանակի նվազման կայուն միտում է նկատվում, ինչը տարբեր երկրներում տարբեր աստիճանի է (օրինակ, Մեքսիկայում 24,6%-ից մինչև 2,4% Չիլիում՝ 1998-2004թթ. ընթացքում), բայց միտումը կա բոլոր տասը երկրում [9, pp. 325–326]: Այս առումով հետաքրքիր է 2006թ. Չիլիում մասնավոր կենսաթոշակային համակարգի բարելավման նպատակով պատրաստված զեկույցի եզրահանգումը. սպասելու փոխարեն, որ կենսաթոշակային բարեփոխումը ֆորմալացնի ոչ ֆորմալ սեկտորի աշխատողներին, հարկավոր է ելնել այն բանից, որ կենսաթոշակային համակարգը պետք է ծառայի բոլոր աշխատողներին (և՛ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ սեկտորների) և ապահովի ունիվերսալ միասնական կենսաթոշակ, որն ուղղված կլինի աղքատության մեղմացմանը [14, p. 7]:

Վերոնշյալ ակնկալիքների արդարացման ճանապարհին ոչ պակաս կարևոր խոչընդոտ է նաև կուտակային վճարներ կատարող անձանց՝ ֆինանսական շուկաների և մասնավոր կառավարիչների հանդեպ ունեցած վստահության ցածր աստիճանը: Եթե վստահությունը բարձր չէ, այդ ժամանակ նախընտրելի է մասնակի (կամ լրիվ չափով) աշխատավարձը թաքցնելը՝

ինքնուրույն տնօրինելու համար այն մասը, որը պետք է փոխանցվեր կուտակային կենսաթոշակային հաշվին: Ընդ որում, այդ գումարի ինքնուրույն տնօրինումը կարող է ուղղված լինել ծերության համար ապահովագրական բազա ստեղծելուն:

Կապիտալի շուկաները և ներդրումային գործիքները. Ենթադրվում է, որ մասնավոր կենսաթոշակային համակարգերը պետք է նպաստեն կապիտալի շուկաների զարգացմանը, ֆինանսական նոր գործիքների ստեղծմանը և ներդրումային պորտֆելների դիվերսիֆիկացմանը՝ ռիսկերը նվազեցնելու նպատակով: Մի շարք գիտական հետազոտություններում իսկապես հաջողվել է ապացուցել, որ կապ գոյություն ունի մասնավոր կենսաթոշակային համակարգերի անցման և ֆոնդային շուկայի զարգացման միջև: Մասնավորապես, Մաուրիսիո Սոտոն (Բոսթոնի քոլեջ) բերում է վիճակագրական տվյալներ Չիլիի տնտեսության մեջ կենսաթոշակային ակտիվների դերի մասին. 1982-2004թթ. երկրի ՀՆԱ-ում ֆինանսական ակտիվների հարաբերակցությունը մոտ 30%-ից աճել է մինչև ավելի քան 85%-ի, ընդ որում, 2004թ. կենսաթոշակային ակտիվների բաժինը կազմել է մոտ 55% [28, pp. 99–100]: Եվ թեև կենսաթոշակային բարեփոխումը Չիլիում կապիտալի շուկաների զարգացման միակ պատճառը չէր, մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի աճը մեծ ներդրում ունեցավ, քանի որ կատարելագործվեց ֆինանսական կարգավորումը, ի հայտ եկան ինովացիաներ և բարելավվեց կորպորատիվ կառավարումը [29]:

Սակայն Համաշխարհային բանկի հետազոտությունը ցույց է տալիս, որ կենսաթոշակային ֆոնդերի ներդրման ժամանակ ի հայտ են գալիս մի շարք խնդիրներ, որոնցից կարևոր են ներդրումներ կատարելու համար անհրաժեշտ գործիքների սահմանափակ ցանկը և բաժնետոմսեր ու կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելու միջոցով՝ մասնավոր սեկտորի կենսաթոշակային ռեսուրսներով ֆինանսավորման համեստ ցուցանիշները[1]: Պետական կենսաթոշակային համակարգից մասնավորի անցման ֆիսկալ ծախսերը հարկադրում են կառավարություններին սահմանափակումներ մտցնել որոշակի ֆինանսական գործիքներում ներդրումներ կատարելու մակարդակների մեջ, սահմանափակել ներդրումներն օտարերկրյա ակտիվներում և, հակառակը, խրախուսել և աջակցել ներդրումները պետական պարտատոմսերում [12]: Կարմելա Մեսա-Լագոն ցույց է տալիս, որ 2004թ. Լատինական Ամերիկայի՝ մասնավոր կենսաթոշակային համակարգ ունեցող տասը երկրում հանրային պարտատոմսերում կենսաթոշակային կուտակումների ներդրման միջին բաժինը կազմել է 55% (առավելագույն ցուցանիշը՝ Մեքսիկայում - 86% և նվազա-

[1] Այս առումով փոքր-ինչ առանձնանում են Չիլիի կենսաթոշակային ֆոնդերը, քանի որ կենսաթոշակային բարեփոխումն այս երկրում կատարվեց պետական ընկերությունների զանգվածային սեփականաշնորհումից առաջ: Հետևաբար, կենսաթոշակային ֆոնդերը հնարավորություն ստացան միջոցներ ներդնել երկրի խոշոր ընկերություններում:

գույնը՝ Չիլիում՝ 19%)[1]: Բաժնետոմսերում ներդրումների միջին բաժինը կազմել է ընդամենը 8%, իսկ երկրների ուղիղ կեսն արգելում էր ներդրումներ կատարել օտարերկրյա արժեթղթերում (օտարերկրյա ակտիվներում ներդրումների միջին բաժինը կազմում էր 5,6%, առավելագույն ցուցանիշը Չիլիինն էր՝ 26,8%) [9, pp. 326–327]:

Պետական պարտատոմսերում ներդրումներ կատարելու բարձր բաժինը կապված է այն բանի հետ, որ անցումը մասնավոր կենսաթոշակային համակարգի հանգեցնում է պետական պարտքի մեծացմանը՝ առկա կենսաթոշակային վճարումները ֆինանսավորելու նպատակով, բնակչության կատարած վճարների մի մասը մասնավոր կենսաթոշակային ֆոնդեր փոխանցելու ֆոնին: Այս պատճառով, գոնե նախնական փուլերում, կենսաթոշակային ֆոնդերն իրենց կուտակումների զգալի մասն օգտագործում են պետական պարտքը ֆինանսավորելու համար: Բացի այդ, մասնավոր կենսաթոշակային համակարգերը հիմնականում գործում են զարգացած ֆոնդային շուկա չունեցող փոքր երկրներում: Ընդ որում, այդ երկրների կառավարությունները, երկրի ներսում կենսաթոշակային կուտակումները պահպանելու նպատակով, օտարերկրյա ակտիվներում ներդրումներ կատարելու հարցում զգալի սահմանափակումներ են սահմանում: Իսկ ֆինանսական գործիքների սահմանափակ ընտրությունը կապիտալի ազգային շուկաներում հանգեցնում է միջոցների կենտրոնացման պետական արժեթղթերում: Հետևաբար, կենսաթոշակային ներդրումների դիվերսիֆիկացման խնդիրը հատկապես ակտուալ է ֆոնդային զարգացած շուկա չունեցող փոքր երկրների համար: Ընդ որում, եթե պետությունը չի ցանկանում մեծացնել փոխառությունների ծավալը սուվերեն պարտաշուկայում, ինչպես դա տեղի է ունեցել Էստոնիայում և Լատվիայում, ապա պետական պարտատոմսերի գները կաճեն, իսկ եկամտաբերությունը, համապատասխանաբար, կընկնի:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ եթե պետական պարտատոմսերը և կորպորատիվ պարտատոմսերն ու բաժնետոմսերը ներքին շուկայում հասանելի չեն, իսկ ներդրումներն օտարերկրյա ակտիվներում՝ սահմանափակ, ապա կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները տեղակայվում են երկարատև բանկային դեպոզիտներում: Քանի որ շատ երկրներում արժութային վերահսկողության կանոններն ազատականացված են, միջոցներն այդ բանկային հաշիվներից կարող են ուղղվել արտասահման:

Կենսաթոշակային ռեսուրսների կառավարման եկամտաբերությունը. Մասնավոր կենսաթոշակային համակարգերի գործառնության առավել կարևոր հարցերից մեկը կենսաթոշակային կուտակումների ներդրման արդյուն-

[1] 2007թ. Չիլիի ցուցանիշն ընկավ մինչև 7,4%, Մեքսիկայում պետական պարտատոմսերի բաժինը կազմում էր 67%, Բոլիվիայում՝ 72%, իսկ Ուրուգվայում՝ 87% [30, p. 13]:

քում ստացված տարեկան եկամտի մակարդակն է: Այդ եկամտի հաշվարկը գործնականում խիստ բարդացված է, քանի որ ամեն ինչ կախված է այն ժամանակաշրջանից, որը հաշվի է առնվում եկամտի մակարդակը որոշելիս: Բնականաբար, եթե հաշվարկի վերջին ժամկետը համընկնում է ֆոնդային շուկաներում աճի հետ, ապա եկամուտները բարձր են: Իսկ եթե ժամանակաշրջանն ավարտվում է ֆինանսական և տնտեսական ճգնաժամով, ներդրումների արդյունքները զգալիորեն համեստ են ստացվում: Սա նշանակում է, որ եթե մասնավոր կենսաթոշակային համակարգի մասնակիցը թոշակի է անցնում ֆոնդային շուկայի վերելքի ժամանակ, նրա կենսաթոշակը լավը կլինի, բայց նրա կուտակումների գումարը շատ ավելի ցածր կլինի, եթե թոշակի անցնի ճգնաժամի ժամանակ: Ընդ որում, եթե ճգնաժամը ձգձգվում է, ինչը տեղի է ունենում հիմա, համեստ կենսաթոշակ ստանալու ռիսկն ավելի քան մեծանում է: Գործնականում նման դեպքերում մասնավոր կենսաթոշակային համակարգերի շատ մասնակիցներ ստիպված են լինում հետաձգել թոշակի անցնելը: Մասնավորապես, Հարի Բարթլեսը, համեմատելով այն աշխատողներին, որոնք տարբերվում են միայն թոշակի անցնելու տարեթվով, ցույց է տվել, որ կենսաթոշակների չափերի էական տատանումներ կան. եթե այն անձանց համար, որոնք թոշակի են անցել 1972թ., փոխարինման տոկոսադրույքը (*replacement rate* – թոշակի անցնելուց հետո եկամտի հարաբերակցությունը մինչև թոշակի անցնելն ունեցած եկամտի հետ) հավասար էր 80%-ի, ապա այն անձանց համար, որոնք կենսաթոշակի տարիքի էին հասել 1974թ., նշված ցուցանիշը կազմել է ընդամենը 40% [31, pp. 66–69]: Այդ ռիսկը մասամբ մեղմացված է խառը մասնավոր կենսաթոշակային համակարգի շրջանակներում, քանի որ առաջին աստիճանը երաշխավորված վճարվում է պետության կողմից, այն դեպքում, երբ երկրորդ աստիճանը կախված է կապիտալի շուկաների արդյունքներից: Այլ խոսքերով՝ քանի որ առաջին աստիճանը ֆինանսավորվում է հարկերով, այն թույլ է տալիս ռիսկը տարածել երկրի ողջ բնակչության միջև:

Եկամտաբերության մակարդակի վրա զգալի ազդեցություն են գործում նաև վարչական ծախսերը: Օրինակ, Չիլիում կենսաթոշակային կուտակումների ներդրման ամենամյա եկամտաբերությունը 1981-2000թթ. կազմել է 11,1%, սակայն վարչական ծախսերի հաշվառմամբ այն նվազում է միջինը մինչև 7,5% [30, pp. 43, 48]: ՀԲ զեկույցը, բերելով Արևելյան Եվրոպայի մի քանի երկրի (տե՛ս *Աղյուսակը*) պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվների եկամտաբերության մակարդակի համեմատական տվյալները, նշում է իրական եկամուտների ցածր մակարդակի որոշ պատճառներ. կարգավորման հիմնախնդիրներ, ֆինանսական շուկաների թերզարգացածություն [1, p. 7]:

Աղյուսակ

Կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերության իրական մակարդակը պարտադիր կուտակային տարրը ներդնելու պահից մինչև 2007թ. վերջը (իրական եկամուտներով և ՀՆԱ աճի մակարդակից ունեցած տարբերությամբ)

Երկիրը	Ներդրման տարեթիվը	Եկամտաբերության իրական մակարդակը	Եկամտաբերության իրական մակարդակը ՀՆԱ աճի նկատմամբ
Բուլղարիա	2002	3,2	0,5
Էստոնիա	2002	4,9	0,6
Հունգարիա	1998	2,6	0,6
Լատվիա	2001	-3,5	-0,3
Լիտվա	2004	5,7	0,7
Լեհաստան	1999	8,9	2,2
Սլովակիա	2005	0,9	0,1

Աղբյուրը՝ World Bank

Ժողովրդագրական հիմնախնդիրը. Քանի որ մասնավոր կենսաթոշակային համակարգերն ամբողջովին ֆինանսավորվում և հիմնվում են վճարների (*DC*) որոշակի չափերի պլանների վրա, որոշ մասնագետներ պնդում են, որ դրանք ավելի լավ են հաղթահարում ժողովրդագրական փոփոխությունները (օրինակ, բնակչության ծերացումը), թույլ են տալիս խուսափել աշխատողների սոցիալական վճարների ավելացումից և երկարաժամկետ հեռանկարի համար վերացնում են բյուջեի դեֆիցիտը: Վերը համառոտ նկարագրեցինք Ն.Բարի այն հիմնավորումը, ըստ որի՝ մասնավոր կենսաթոշակային համակարգերը չեն լուծում ժողովրդագրական հիմնախնդիրները, այլ միայն քողարկում են դրանք և պակաս տրանսպարենտ են դարձնում: Բայց առանց սրա էլ անցումը մասնավոր կենսաթոշակային համակարգի թույլ չի տալիս ամբողջությամբ լուծել ժողովրդագրական հիմնախնդիրները: Քանի որ կյանքի տևողությունը երկարում է, վճարումների որոշակի չափը չի կարող երկար ժամանակով անփոփոխ մնալ առանց կենսաթոշակի չափը նվազեցնելու: Մյուս կողմից, եթե կյանքի տևողության երկարացումը տեղի է ունենում երկրում տնտեսական աճի և աշխատավարձերի ավելացման հետ միաժամանակ, այս հիմնախնդիրը կարող է մեղմացվել, բայց ամբողջովին չի վերանում:

Անցումային շրջանի ծախսերը. Մասնավոր կենսաթոշակային համակարգի անցումը, համենայնդեպս՝ համակարգի գործառնության նախնական փուլում, միշտ ֆիսկալ դեֆիցիտ է առաջ բերում: Սա բացատրվում է երեք հիմնական հանգամանքով.

1. փակված պետական կենսաթոշակային համակարգի գործառնական դեֆիցիտով. համակարգը մնում է իր բոլոր թոշակառուներով, բայց առանց սոցիալական վճարների կամ դրանց աննշան չափով,
2. այն գումարներով, որոնք վճարվում են թոշակի անցնող այն անձանց, որոնք սոցիալական վճարներ են կատարել պետական կենսաթոշակային համակարգի շրջանակներում, բայց հետո անցել են մասնավոր կենսաթոշակային համակարգի (*recognition bonds.* որպես կանոն, հավասարվում են պետական կենսաթոշակային համակարգ կատարված բոլոր վճարների գումարին և ինդեքսավորվում են գնաճի դեմ. ըստ էության, փակված պետական կենսաթոշակային համակարգում աշխատողների մասնակցությունն ընդունելու մեխանիզմ են),
3. կենսաթոշակի նվազագույն չափով, որը պետության կողմից երաշխավորված է բոլորի համար, ում կուտակումներն անհատական հաշիվներում անբավարար են կենսաթոշակը ստանալու համար:

Գործառնական դեֆիցիտ կա այն բոլոր երկրներում, որոնցում տեղի են ունեցել պետական կենսաթոշակային համակարգի կառուցվածքային բարեփոխումներ, բայց այն առավել ակնհայտ երևում է մասնավոր կենսաթոշակային համակարգի անկախ մոդելի պարագայում: Խառը և զուգահեռ կենսաթոշակային համակարգերն այս հիմնախնդրի հետ ավելի քիչ են բախվում, քանի որ պետական կենսաթոշակային համակարգը լրիվ չի դադարեցնում գործունեությունը: Նվազագույն երաշխավորված կենսաթոշակ և *recognition bonds* գոյություն ունեն մասնավոր կենսաթոշակային համակարգ ունեցող բոլոր երկրներում, բացի խառը մոդելից, քանի որ նրա առաջին աստիճանը հենց պետական կենսաթոշակն է:

Համաշխարհային բանկի մասնագետների հաշվարկները ցույց են տալիս, որ 2001թ. բյուջեների փաստացի դեֆիցիտի մակարդակներն Արգենտինայում, Բոլիվիայում, Կոլումբիայում և Չիլիում ավելի բարձր էին, քան ազգային փորձագետները կանխատեսում էին 2001թ. համար, այդ երկրների պետական կենսաթոշակային համակարգերը բարեփոխելիս: Ավելին, Համաշխարհային բանկի կանխատեսումները երկարաժամկետ հեռանկարի համար (2050թ.) ենթադրում են բյուջետային դեֆիցիտի մեծացում Արգենտինայում, Կոլումբիայում և Մեքսիկայում՝ 2001թ. համեմատ (թվարկված բոլոր երկրներում 2001թ. տվյալներով գործում էին մասնավոր կենսաթոշակային համակարգեր) [12]:

Քաղաքական ռիսկեր. Գործառնության գործընթացում կենսաթոշակային համակարգերը բախվում են լուրջ քաղաքական ռիսկերի: Գիտական տեսանկյունից պետական կենսաթոշակային համակարգի քաղաքական ռիսկերը վաղուց հիմնավորված են. կենսաթոշակները հաճախ դառնում են սակարկության առարկա քաղաքական աջակցություն ստանալու նպատակով [14, p. 13]: Իսկ քաղաքական շահն ավանդաբար գերակշռում է ֆինանսական տրամաբանությանը: Մասնավորապես, այն ժամանակ, երբ աշխատողների սոցիալական վճարները գերազանցում են կենսաթոշակային հատկացումները, կարճաժամկետ կողմնորոշման ջատագով քաղաքական գործիչների կողմում կան կենսաթոշակների բարձրացման՝ առանց հաշվառելու երկարաժամկետ ծախսերը, կամ սոցիալական ապահովության ֆոնդերի պրոֆիցիտի ցածր ֆինանսական եկամտաբերություն, բայց բարձր քաղաքական շահ ունեցող նախագծերում ներդրման ազդակներ [30, p. 3]:

Նախապես ենթադրվում էր, որ վճարների որոշակի չափ ունեցող կենսաթոշակային համակարգերը մեկուսացված են քաղաքական ռիսկերից կամ, ծայրահեղ դեպքում, կրճատում են դրանց սպառնալիքը, և այս առումով առավել արդյունավետ են, քան պետական կենսաթոշակային համակարգերը [օրինակ, 11]: Սակայն Նիկոլաս Բարը, իսկ ավելի ուշ՝ Սթիվեն Քեյը ցույց են տալիս, որ կուտակային կենսաթոշակային հաշիվները նույնպես լուրջ քաղաքական ռիսկեր են պարունակում: Մասնավորապես, մասնավոր կենսաթոշակային համակարգերի քաղաքական ռիսկերին են պատկանում.

1. կենսաթոշակային ֆոնդերի կամ կառավարող ընկերությունների գործունեության անհամարժեք վերահսկողությունը և կարգավորումը (ներառյալ մասնավոր կենսաթոշակային համակարգի մասնակիցների կողմից կուտակային վճարների կատարման ապահովումը),
2. ինֆլյացիայի բարձր մակարդակով մակրոտնտեսական քաղաքականությունը, որը բացասաբար է ազդում ինչպես կենսաթոշակային կուտակումների (եթե դրանք լրիվ չեն ինդեքսավորվում), այնպես էլ անուիտետի վրա՝ կենսաթոշակի անցնելուց հետո (եթե դրանք լրիվ չեն ինդեքսավորվում)[1],
3. կենսաթոշակային ֆոնդերի ներդրումային պորտֆելների զգալի մասը կազմող սուվերեն պարտատոմսերի դեֆոլտը (կենսաթոշակային միջոցների ներդրման համար այլ գործիքների բացակայության ֆոնին),
4. բացասական ազդեցությունը կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերության ցուցանիշների վրա՝ կենսաթոշակային ֆոնդերի ակտիվներում ցածր տոկոսավճարներով պետական պարտատոմսերի մեծ բաժնի հաստատման արդյունքում, «պետության համար դժվար ժամանակներում»,

[1] Պետական կենսաթոշակային համակարգերն ավելի լավ են հաղթահարում ինֆլյացիան, քանի որ հարկերը և աշխատողների սոցիալական վճարները, որպես կանոն, ինդեքսավորված են:

5. պետության կողմից կենսաթոշակային կուտակումների «բռնագանձումը»՝ իր գործունեության ֆինանսավորման նպատակներով:

Արգենտինայի կենսաթոշակային համակարգի ճգնաժամը 2001-02թթ. այն վատագույն սցենարն է, երբ պետությունը վերցրեց կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները որպես վերջին ատյանի միջոցներ դեֆոլտը և ազգային արժույթի արժեզրկումը կանխելու անհաջող փորձի ժամանակ[1]: Ավելին, երբ կենսաթոշակային ֆոնդերը հայտնվում են ճգնաժամային իրավիճակում, քաղաքական ճնշումը կարող է հարկադրել ազգային կառավարություններին որոշակի պաշտպանություն տրամադրել թոշակառուներին: Հետևաբար, անցումը մասնավոր կենսաթոշակային համակարգին ինքնին չի հանգեցնում քաղաքական ռիսկերի վերացմանը: Այն երկրները, որոնք առավել սուր բախվեցին քաղաքական ռիսկերի հետ պետական կենսաթոշակային համակարգի գործառնության պարագայում, ավելի մեծ հավանականությամբ կբախվեն քաղաքական ռիսկերի նաև մասնավոր կենսաթոշակային համակարգ ներդնելուց հետո: Այս հարցում ռելևանտ է համարվում ոչ թե կենսաթոշակային համակարգի ձևը, այլ ինստիտուցիոնալ և մակրոտնտեսական միջավայրի որակը [17, p. 20; 22, pp. 7–17]:

Մասնավոր կենսաթոշակային համակարգի քաղաքական ռիսկերը մեղմվում են, երբ պետությունը հանդես է գալիս մասնավոր կենսաթոշակային համակարգի երաշխավորի դերում [17, p. 20] կամ այլ միջոցով է ուժեղացնում իր մասնակցությունը մասնավոր կենսաթոշակային համակարգում: Սակայն հարկավոր է նկատի ունենալ, որ մասնավոր կենսաթոշակային համակարգում պետության մասնակցության մեծացումը (պետական կենսաթոշակների ձևով աստիճաններ սահմանելու միջոցով) մասնավոր կենսաթոշակային համակարգ է բերում պետական կենսաթոշակային համակարգի քաղաքական ռիսկերը:

Կան նաև առանձին ռիսկերի մեղմման գործիքներ: Մասնավորապես, Չիլիում գնաճի դեմ միակ պետական երաշխիքը ցմահ անուիտետներն են, որոնք կենսաթոշակի անցնելիս կարող են ձեռք բերվել ի հաշիվ անհատական կենսաթոշակային հաշիվներում կուտակված միջոցների: Անուիտետը երաշխավորում է ամենամսյա կենսաթոշակի ցմահ վճարում, որը պետք է ինդեքսավորված լինի ինֆլյացիայի դեմ: Նման երաշխիք տրամադրելու համար

[1] Ընդ որում, «բռնագանձման» ռիսկին զուգահեռ, Արգենտինայում դրսևորվեցին նաև վերոնշյալ մնացած քաղաքական ռիսկերը, որոնք բնորոշ են մասնավոր կենսաթոշակային համակարգերին (այդ թվում և կենսաթոշակային ֆոնդի $2,3 մլրդ միջոցների ներդրումները պետական պարտատոմսերում, որոնց ընդհանուր բաժինը կենսաթոշակային ակտիվների ներդրումային պորտֆելում 2001թ. վերջին հասել է մինչև 70%-ի): 2008թ. վերջին Արգենտինան, լուրջ ֆիսկալ հիմնախնդիրների (հումքի գների անկում, շուկայում պետական պարտատոմսերի բաշխման միջոցով միջոցներ ներգրավելու անհնարինություն) հետևանքով, ընդհանրապես հրաժարվեց մասնավոր կենսաթոշակային համակարգից՝ վերադառնալով պետական համակարգին:

ապահովագրական ընկերությունները միջոցներ են ներդնում կառավարության ինդեքսավորվող պարտատոմսերում (պարտատոմսերի տոկոսները շաղկապված են սպառողական գների ինդեքսին կամ ինֆլյացիայի մակարդակին)[1]: Թոշակառուները կարող են ընտրել նաև ծրագրային վճարները, որոնք ուղղակիորեն վճարում են կենսաթոշակային ֆոնդերը կուտակված այն միջոցներից, այն գումարով, որն ամեն տարի վերագնահատվում է՝ ելնելով կառավարման արդյունքներից: Հետևաբար, ինդեքսավորումը տեղի է ունենում տարին մեկ անգամ, երբ կառավարումից ստացվող ամենամյա եկամուտները գումարվում են կուտակված միջոցներին: Երրորդ օպցիան կուտակված միջոցների մի մասով անուիտետի ձեռքբերումն է և մնացած մասի օգտագործումը՝ ծրագրային վճարներ ստանալու համար:

Մասնավոր կենսաթոշակային համակարգերի քաղաքական ռիսկերի թվին ավելանում են նաև կառավարման և ներդրումային ռիսկերը, որոնք չկան պետական կենսաթոշակային համակարգերի շրջանակներում:

Ամփոփում

Պետական կենսաթոշակային համակարգերի ժողովրդագրական և ֆինանսական հիմնախնդիրները պատճառ դարձան, որպեսզի ավելի տարածվեն և «մոդայի մեջ մտնեն» մասնավոր կենսաթոշակային համակարգերը: Ենթադրվում էր, որ վերջինները թույլ կտան լուծել այն հիմնախնդիրները, որոնք կան պետական կենսաթոշակային համակարգերում: Սակայն գիտական մի շարք հետազոտություններում ցույց տրվեց, որ իրականում շատ ենթադրություններ գործնականում չեն իրականանում: Հետևաբար, կենսաթոշակային համակարգի կառուցվածքային բարեփոխման փոխարեն հնարավոր է նաև գործող կենսաթոշակային համակարգի «առողջացում»՝ ի հաշիվ պարամետրիկ փոփոխությունների: Միանգամայն ապացուցված է համարվում միայն այն, որ մասնավոր կենսաթոշակային համակարգը կարող է հանգեցնել ֆինանսական շուկաների զարգացման: Որոշ հետազոտություններում հաջողվել է ապացուցել նաև մասնավոր կենսաթոշակային համակարգերի դրական ազդեցությունն ազգային խնայողությունների մակարդակի վրա:

---

[1] Ճգնաժամի պայմաններում կենսաթոշակային համակարգերի վիճակի մասին ՀԲ զեկույցում հանձնարարական կար այն երկրների կառավարությունների համար, որոնք մասնավոր կենսաթոշակային համակարգ են ներդրել. ստեղծել ինդեքսավորվող պետական պարտատոմսերի շուկա, որպեսզի ապահովագրական ընկերություններն ինֆլյացիայի հետ ինդեքսավորվող անուիտետներ առաջարկելու հնարավորություն ստանան [1, p. 18]: Բայց, մյուս կողմից, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կենսաթոշակային ներդրված ակտիվներում պետական պարտատոմսերի բաժնի ավելացման դեպքում, ըստ էության, մասնավոր կենսաթոշակային համակարգն այլևս էապես չի տարբերվում պետականից, քանի որ պարտատոմսերի տոկոսային եկամտաբերությունը պետք է ապահովվի հարկերի հաշվին:

Այս արդյունքները նկատի ունենալով՝ կարելի է եզրակացնել, որ բնակչության ծերացման հիմնախնդրի լուծման հարցում մասնավոր կամ պետական կենսաթոշակային համակարգի ընտրությունը չնայած կարևոր է, բայց առաջնայինը չէ: Առավել կարևոր են երկու հանգամանք. էֆեկտիվ կառավարումը և տնտեսական աճը: Մասնավորապես, պետական կենսաթոշակները պահանջում են, որպեսզի կառավարությունները կարողանան հավաքել վճարները և ունենան քաղաքական կարողություն խելամիտ հարկային սահմանների շրջանակներում մնալու համար: Մասնավոր կենսաթոշակները պահանջում են, որպեսզի կառավարությունները կարողանան պահպանել մակրոտնտեսական կայունությունը և արդյունավետորեն կարգավորեն ու վերահսկեն ֆինանսական շուկաները: Այս դեպքում կենսաթոշակային համակարգի տեսակի ընտրությունը կախված կլինի հնարավոր ռիսկերի և լրացուցիչ առավելությունների (ֆինանսական շուկաների զարգացում, ազգային խնայողությունների աճ) միջև կոմպրոմիսային հարաբերակցությունից:

Ազգային կենսաթոշակային համակարգերը մասնավորեցրած երկրների փորձը ցույց է տալիս, որ կենսաթոշակային բարեփոխումները շարունակում են լրամշակվել և շտկվել: Պատճառն այն ռիսկերն ու հիմնախնդիրներն են, որոնք առաջ են գալիս մասնավոր կենսաթոշակային համակարգերի գործառնության գործընթացում (հավասար թոշակների ապահովում երկու սեռի համար, ցածր ծածկման հիմնախնդիրը, քաղաքական և ներդրումային ռիսկերը, կենսաթոշակային ռեսուրսների կառավարման շուկայում մրցակցության սահմանափակման ռիսկերը, կառավարման ռիսկերը և այլն):

Քանի որ կենսաթոշակային բարեփոխման նախագիծը Հայաստանում մշակվել է ՀԲ ակտիվ մասնակցությամբ, դրա մշակման ժամանակ հաշվի են առնվել այն բոլոր դրական կողմերը, որոնք թույլ են տվել առանձին երկրների նվազեցնել վերոնշյալ հիմնախնդիրների և ռիսկերի ազդեցությունը: Այսպես, Հայաստանի կենսաթոշակային համակարգի բարեփոխումների նախագծում հաջողությամբ լուծվել է անկախ մասնավոր կենսաթոշակային համակարգերին բնորոշ ցածր ծածկման կարևորագույն հիմնախնդիրը (կենսաթոշակային համակարգի չորս մակարդակների հաստատման միջոցով), ստեղծվել են կենսաթոշակ ստանալու համեմատաբար հավասար պայմաններ տղամարդկանց և կանանց համար: Սակայն շատ սուր են ներդրման ենթակա կուտակային կենսաթոշակային ակտիվների անբավարար դիվերսիֆիկացման, կառավարող ընկերությունների միջև մրցակցության անբավարարության և, որպես հետևանք, բարձր վարչական ծախսերի ռիսկերը, քաղաքական ռիսկերը:

Ակնհայտ է, որ կենսաթոշակային բարեփոխումն անընդմեջ նախագիծ է և, անկախ ընտրված մոդելից, մշտական փոփոխություն է պահանջում՝ փոխված հանգամանքներին կենսաթոշակային համակարգը հարմարացնելու նպատակով:

Որպես Հայաստանի կենսաթոշակային համակարգի բարեփոխման ասպեկտների ապագա հետազոտության ուղղություններ առանձնացրել ենք.

- կուտակային կենսաթոշակային ռեսուրսների արդյունավետ կառավարման կարողությունը՝ թույլ զարգացած ֆինանսական սեկտորի պայմաններում՝ զարգացած երկրների շուկաներ կենսաթոշակային կուտակումների «հեռացման» ռիսկի միաժամանակյա նվազեցմամբ,
- կուտակային կենսաթոշակային ռեսուրսների երաշխիքների հաստատման հնարավոր ուղիներն առանց քաղաքական ռիսկերի չափազանց սրման,
- տեղի պայմաններում փոխառված իրավաբանական մի շարք տրանսպլանտների գործառնության ռեալությունը (օրինակ, կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների ֆիդուցիար պատասխանատվության մասին նորմերը):

Հունիս, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. World Bank, "Pensions in Crisis: Europe and Central Asia Regional Policy Note". Washington, DC (2009): World Bank.
2. *Ավագյան Ս.,* Հայաստանը ծերանում է // Կապիտալ, 5 դեկտեմբերի 2009թ.:
3. *Ավագյան Ս.,* Կենսաթոշակային բարեփոխումներ // Կապիտալ, 18 փետրվարի 2010թ.:
4. Հայաստանի Հանրապետության 1997թ. դեկտեմբերի 30-ի ՀՕ–179 «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» օրենքը // ՀՀՊՏ, 1997, 12.31/33:
5. *Ավագյան Ս.,* Արա Նռանյանի նախազգուշացումը // Կապիտալ, 29 հունվարի 2010թ.:
6. Consejo Asesor Presidencial para la Reforma Previsional, "El Derecho a una Vida Digna en la Vejez: Hacia un Contrato Social con la Previsión en Chile", Santiago (2006): Presidencia de la República de Chile.
7. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, Կենսաթոշակային բարեփոխումների նախապատրաստման խումբ: Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացման ծրագիր, Երևան, 2008:
8. *Brooks, S.M.,* "Social Protection and Economic Integration: The Politics of Pension Reform in an Era of Capital Mobility", 35 *Comparative Political Studies* 491 (2002).
9. *Mesa-Lago, C.,* "Private and Public Pension Systems Compared: an Evaluation of the Latin American Experience", 18 *Review of Political Economy* 317 (2006).
10. *Charlton, R., R. McKinnon,* "Beyond Mandatory Privatization: Pensions Policy Options for Developing Countries", 12 *Journal of International Development* 483 (2000).
11. World Bank, "Averting the Old-Age Crisis: Policies to Protect the Old and Promote

Growth". Washington, DC (1994): World Bank.
12. *Gill, I.S., T. Packard & J. Yermo,* "Keeping the Promise of Social Security in Latin America", Palo Alto, CA (2005): Stanford University Press and World Bank.
13. World Bank Independent Evaluation Group (IEG), "Pension Reform and the Development of Pension Systems: An Evaluation of World Bank Assistance". Washington, DC (2006): World Bank.
14. *Kay, S.J., T. Sinha,* "Overview: Lessons from Pension Reform in the Americas", in the Lessons from Pension Reform in the Americas, ed. by S.J. Kay & T. Sinha. New York (2008): Oxford University Press.
15. *Baillu, J., H. Reisen,* "Do Funded Pensions Contribute to Higher Aggregate Savings?: A Cross Country Analysis", OECD Development Centre (1997).
16. *Murphy, P.L., A.R. Musalem,* "Pension Funds and National Saving", World Bank Policy Research Working Paper No. 3410 (2004). <http://www.ssrn.com> [07.05.2010].
17. *Barr, N.,* "Reforming Pensions: Myths, Truths, and Policy Choices", 55 International Social Security Review 3 (2002).
18. Կապիտալ, Կենսաթոշակային բարեփոխումները հետաձգվում են // Կապիտալ, 27 հոկտեմբերի 2009թ.:
19. *Ханджян А.,* Пенсионная реформа в Армении обогатит богатых и обеднит бедных. Интервью, 17 февраля 2010 года. <http://www.finport.am> [22.02.2010]
20. *Barr, N.,* "Reforming Pensions: Myths, Truths, and Policy Choices". IMF Working Paper (2000).
21. *Cichon, M.,* "Notional Defined-Contribution Schemes: Old Wine in New Bottles?", 52 *International Social Security Review* 87 (1999).
22. *Casey, B.H.,* Pension Reform in the Baltic States: Convergence with 'Europe' or with 'the world'?", 57 *International Social Security Review* 19 (2004).
23. *Sinha, T., M. de los Angeles Yañez,* "A Decade of Government-Mandated Privately Run Pensions in Mexico: What Have We Learned?", *in the Lessons from Pension Reform in the Americas, ed. by S.J. Kay & T. Sinha. New York (2008): Oxford University Press.*
24. Հայաստանի Հանրապետության «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի նախագիծը, 2009թ.:
25. *James, E., A. Cox Edwards, R. Wong,* "The Gender Impact of Social Security Reform in Latin America", *in the Lessons from Pension Reform in the Americas, ed. by S.J. Kay & T. Sinha. New York (2008): Oxford University Press.*
26. Հայաստանի Հանրապետության «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի նախագիծը, 2009թ.:
27. *Kay, S.J., B.E. Kritzer,* "Social Security in Latin America: Recent Reforms and Challenges", Federal Reserve Bank of Atlanta Economic Review 41 (2001, 1st Quarter).
28. *Soto, M.,* "The Chilean Pension Reform: 25 Years Later", 12 *Pensions* 98 (2007).
29. *Walker, E., E. Lefort,* "Pension reform and capital markets: Are there any (hard) links?". Washington, DC (2002): World Bank.
30. *Kay, S.J.,* "Political Risk and Pension Privatization: The Case of Argentina (1994–2008)", 62 *International Social Security Review* 1 (2009).

31. *Burtless, G.,* “Social Security Privatization and Financial Market Risk: Lessons from U.S. Financial History”, in the Social Security Reform in Advanced Countries – Evaluating Pension Finance, ed. by T. Ihori & T. Tachibanaki. London and New York (2002): Routledge.

ПЕНСИОННАЯ РЕФОРМА: ЧЕМУ НАС УЧИТ ЗАРУБЕЖНЫЙ ОПЫТ?

Сурен Гомцян

Резюме

В конце 2009г. проект структурной реформы пенсионной системы Республики Армения был внесен в Национальное Собрание. В настоящей статье обобщен опыт стран, которые ввели частные пенсионные системы, и указаны основные риски и проблемы, с которыми эти страны столкнулись в процессе функционирования частных пенсионных систем: низкое покрытие пенсионной системы; гендерное неравенство; ограниченная конкуренция между управляющими пенсионных фондов; высокие административные расходы; риски инвестирования; политические риски и др. Важное значение имеет также определение того, насколько успешно частные пенсионные системы достигают тех результатов, которые приписываются им политиками и заинтересованными лицами перед осуществлением структурных пенсионных реформ. В частности, действительно ли финансируемая модель избавляет пенсионную систему от демографического шока и создает ли правильные стимулы для рынка труда?

Հուշագիր հեղինակին

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա համառոտագիր (հոդվածի լեզվով) և ամփոփագիր (բնագրից տարբեր լեզուներով):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝

    1. *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
    2. *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
    3. *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.

5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 26.07.2010թ.
Թիվ 4 (32), 2010թ.
Տպաքանակը՝ 300։

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում